



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

634.8

U-50

08 OCT 2010

634.8 54
5-50

①

Հրատարակութիւն Մ. Յ. ԱՐԱՄԵԱՆՑԻ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

N^o 1309

ՎԱԶԻ ՄՃԱԿՈՒԹԻՒՆԸ



Կ Ա Զ Մ Ե Ց

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՊԱՏՎԵՐԱՁԱՐ

1357

— — — — —

ԹԻՖԼԻԶ
Արագատիպ Մնացական Մարտիրոսանցի
Միքայէլեան փողոց, տուն 81.

1902



27.06.2013

20195

Дозв. ценз. Тифлисъ, 30-го Мая, 1902 г.



4444-2010

Պարունակայի Յովսեփիկան Արամեաց,

Մեծապատճեն *skr,*

Դուք, որ առաջինը Հայ կալուածատէրերից չափ ըմբռնելով հողի նշանակովմինը եւ նրա կանոնատր մշակովմեան օգուաները ոչ մի նիւթական միջոց չը խնայեցիք Ձեր Բորչալովի «Լաշբաղին» կալուածքում ընդարձակ տեղ տալ վազի մշակովմեան, այգեգործովմեան, վար ու ցանքին, բամբակի մշակովմեան եւ այլ ճիւղերի, որով ոչ սակաւ նիւթականապէս նպաստեցիք շրջապատող գիւղականներին եւ այսուհետեւ աւելի եւս սկիտի բարեփոխովի նրանց տնտեսական վիճակը՝ աշխատելու մի ընդարձակ ասպարէզ բացած լինելով նրանց առաջ եւ հողի մշակովմեան համար բոլոր դիւրովմինները տալով, Դուք՝ որ մեր վաղուց փայփայած ցանկովմինը իրագործելու հնարատը բովովմինը տվիք եւ քաջալերելով նուաստիս նախածեռնող հանդիսացիք «Գիւղատնտեսական գրադարանի հրատարակութեան», որով ոչ սակաւ դիւրովմինը ընձեռած պիտի յինիք եւ մեր հայ երկրագործ ու այգե-

գործ ժողովրդին իրենց պարապմանց ժամանակ, Զեզ
եմ՝ նուիրում ներկայ աշխատութիւնը իրեւ տրիտուք
մին այն բարեբարութեանց, որ կատարած էք եւ կա-
տարում էք յօդու ժողովրդի:

Ընդունեցէք ինդրեմ, Մեծապատիւ Տէր, այս ան-
նշան նէրը մեր անկեղծ յարզանաց հետ:

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԳԱՐԵԱՆՑ

Վայումն անձին խորթպատուա մայութեանք զի՞ն
ունենաւ ամսարազն մայութեանք ունի ու ցան ինչու
մին և առարկն ու պահանջման մաս խայածն անուն է ան-
ուն պահ անձին ու ցանքն անուն ունի ունի ունի ունի
ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի
Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Թէն մեր փափաքն էք Կովկասեան այլ և այլ շրջաննե-
րի վազի մշակութեան այս ու այն ճեի հետ ծանօթացնել և
մի կատարեալ պատկեր տալ իրենց առաւելութիւններով ու
պակասութիւններով, սակայն ինչ ինչ հանգամանքների չնոր-
դիւ, առ այժմ յետաձգում ենք այդ և հրատարակում ներ-
կայ աշխատութիւնը, որի մէջ ամիսփուած են այն ընդհա-
նուր կանոնները, որոնք անհրաժեշտ են ամեն մի այգեգոր-
ծի վազի մշակութեան ժամանակ:

Ներկայ աշխատութիւնը կազմելու ժամանակ, բացի մեր
տասնեհինգամեայ զիտողութիւնները և զործնական փորձե-
րը, հետեւ ենք զիլաւորապէս Մոնպելիսյի երկրագործական
դպրոցի տեսուչ Գ. Ֆոէքսի դասախոսութեանց¹ և պահպա-
նել նրա ուղղութիւնը նիւթի դասաւորութեան ժամանակ.
բացի այդ օգտուել ենք և այն հեղինակներից, որոնք այս
կամ այն մասում նպատակայարմար են ճանաչուած. դրանք
են՝ Ա. դը Բոոյլ², Ժիւլ Գիւյօ³, Վեռնէթ-Լամօթ⁴, Հ. Մառէս⁵,
Պ. Վիալա⁶ և այլք, որոնց յայտնում ենք մեր երախտագի-
տական զգացմունքը և անկեղծ չնորհակալութիւնը:

1. Cour Complet de Viticulture par G. Foëx.

2. A. Breuil, les Vignobles, Paris, 1875.

3. Jules Guyot; Culture de la Vigne, Paris, 1861.

4. V-te de Vergnette-Lamotte; Les Vignes de la Côte-d'Or.

5. H. Marés; des Vignes du Midi de la France, in le livre
de la Ferme.

6. Viala; Les Maladies de la Vigne, Montpellier 1885.

Մեր այգետէրերին առաջարկելով ներկայ ձեռնարկը, յուսով ենք որ սրա թերութիւններին ներողամիտ կլինին, աշքի առաջ ունենալով այն հանդամանքը, որ մեզանում մինչև այսօր գեռ ոչ մի գրուածք չունինք ոչ միայն վազի մշակութեան վերաբերեալ, այլև գիւղատնտեսութեան միւս ճիշդերի, որ իրեւ նախաշափի ծառայէր և շատ ու քիչ գիւրութիւն տար մեզ: Ձեռնարկս որչափ կարողացել ենք աշխատել ենք իր ներքին բովանդակութեամբ մատչելի անել ժողովրդին, խուսափելով զիտնական տերմիններից և դժուարութեամբ իրագործելի խորհուրդներից:

իրակությունի խորհուրդներից; Ի թէ այսու կարողանանք նպաստել խաղողի վազի մշակութեան զարգացմանը, որ մեր երկրի հարազատ տունին է և արդիւնաւէտ աղբիւրներից մին:

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՀԱՅՆԱԳԱՐԻԱՆ

ՎԱԶԻ ՄԵԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. ՎԵԶԻ ՄԵՍԱԼԻԹԻՒՆԸ ՀԱՅՈՒԹԵՆՈՒՄ ԿԱՌ ԿՈՎԿԵՍՈՒՐ

Քրհեղեղից յետոյ Աստուած նոյի սիրտը շահելու, նրա միխիթարելու համար, կարծես թէ պարզեած լինէր խաղողի որթը (վազը, թեանազը), որ նրա պտղից գինի շինէ խմէ, մի կողմից իր առողջութիւնը պահպանէ, միւս կողմից մոռացութեան տայ ջրը-հեղեղի սարսափելի պատկերը և իր կրած վնաս-ները...

Նոյ առաջինը, ինչպէս յիշատակում է Սուլը Գիրքը, այդ աստուածապարզես տունկը տնկեց Հայատանում, Արարատ սարի տակը, Արկուոփ *) (Ակուփ) աստուած ազարակում, խնամեց, գինի պատրաստեց, փորձեց իր վրայ նրա հրաշագործ ազգեցութիւնը և

*) Արկուռի նշանակում է վազ ձգեց կամ տնկեց:

350 տարի առօք-փառօք ապրերով՝ մեռաւ և աւանդ թողեց իր թոռներին իր սիրելի ազարակը Արկուուին իր հնձաններով ու կարասներով։

Դարերը յաջորդեցին և որդիքը հայրերի, հայրերը պապերի այդ սուրբ աւանդը պահելով՝ հասցըին մեզ. հաղար շնորհակալութիւն մեր պապերին և փառք ու պարծանք նոր սերնդին։

Ճիշտ է թէս այսօր Արկուուին կործանուած է և նոյի սիրելի ազարակը Մասիսի ժայռերի տակ թաղուած, սակայն խաղողի որթը մեր երկրում խոր արմատներ ձգելուց յետոյ, փռուած է երկրազնդի ամեն կողմը, ուր որ կիման ու հողի կազմութիւնը ներում է և բազմաթիւ ազգերի սեպհականութիւնը դառնալուց յետոյ, կազմում է և նրանց ապրուստի գլխաւոր աղբւրներից մին։

Նախնի դարերից սկսած հացարոյսերի մշակութեան հետ համընթաց զնացել է և վազի մշակութիւնը. բարեկիրթ ազգերը նրա յարգը ճանաչելով՝ սերտ կապուել են նրա հետ, իրենց հոգածութեան, խնամքի առարկան շինել—ինչի որ նա եղել է և է այժմ՝ մշակ—այգեգործին առատօրէն վարձատրողը, վաճառահանութեան թանկագին աղբիւրներից մին, տէրութեանց եկամուսներից գլխաւորը, զիտնական-ների ուսումնասիրութեան առարկան, հարստին ու աղքատին համահաւասար տաքցնողը, նրանց վշտերը փարատողը, բանաստեղծներին աշխոյժ ու ողի ներշնչողը, այն ինչ տպէտ ազգերի մօտ վազը գոյութիւն է ունեցել միայն իրքն հաճոյք ծառայելու, որպէս պարարելու։

Թէս վազի հայրենիքը, խամհարուրը Հայաստանն է և բուսաբանները այդ պատիւը իրաւամբ տալիս են նրան, սակայն հայերը կարմըելով յետ պիտի քաշուին այդ պատուանունը իրենց երկրին տարու։ Այո՛, խանձարուր է մնացել դեռ հինգ հազար տարիներից յետոյ ևս, բայց այդ խանձարուրի մանուկը—որթը, դեռ մանուկ է մնացել և եթէ նոյ այսօր մի հրաշքով գերեզմանից վեր կենար և իր սիրելի Արարատը մտնէր, դեռ շատ տեղ անխախտ կզտնէր իր հընձանները. ով գիտէ ինչքան կմխիթարուէր սրբութեամբ պահուած տեսնելով իր թողած ժառանգութիւնը, մի ժառանգութիւն՝ որ քանքարաթազոյց ծառային նման հայը պահել է մինչև այսօր...

Վազը մշակուած թէ անմշակ Կովկասում և թէ Հայաստանում աճում է ամեն տեղ ուր մի փոքր յարմարութիւն կայ հողի, մննդեան ու կլիմայի։ Ով որ ճանապարհորդել է մեզանում, գրեթէ ամեն տեղ նկատած կլինի խաղողի վազը վայրենի դրութեամբ ծառերին ու թփերին փաթաթուած, դրանք շատ են մանաւանդ ելիսաւետպօլի երևանի, Թիֆլիզի և միւս նահանգներում, ուր անտառների մէջ ապրելով՝ մի մի հսկայ ծառեր են ներկայացնում, որոնց մանը ու թթուաշ պտուղը շատ անգամ անմատչելի լիներով մարդկանց, այնպէս մնում չորանում է կամ շատ-շատ թոշուններին կերակուր լինում։

Վազի մշակութիւնը ինչպէս և ուրիշ արդիւնաբեր բոյսերի և տունկերի մշակութիւնը մինչև վերջին տարիներս կղղիացած մնացել էր և չէ յառաջադիմել ոչ մշակութեան և ոչ արդիւնաբերութեան կողմից,

այն ինչ Կովկասից գուրս, ինչպէս ասացինք, ազգերի կենսական խնդիրն է դառել և հետզհետէ մշակութեան ձեզ կարգ ու կանոնի տակ ընկել, այնպէս որ նրա մշակութեան եղանակը և պէսպէս հիւանդութեանց ուսումնասիրութիւնը գիւղատնտեսական գիտութեան մէջ մի պատկառելի տեղ է բռնում:

Կովկասի յետամաց գրութիւնը պէտք է վերագրել գլխաւորապէս իր աշխարհագրական գիրքին, հաղորդակցութեան դժուարութեան, տնտեսական անխրախոյս գրութեան, թշնամիաց անդադար արշաւանքներին և ազգաբնակութան սովորութեան:

Կովկասը ըստ մեծի մասին կարատուած լինելով լեռնաշղթաներով, նրա գինեստանները ևս բաժանուած են միմեանցից, այնպէս որ մեծամեծ դժուարութիւնների է հանդիպել և այժմ էլ հանդիպում է այգետէրը հաղորդակցութեան դժուարութեան պատճառաւ իր այզու բերքը արտահանելու, նրանից շահ ստանալու, որով կարող էր մշակութեան եղանակը բարեփոխել կամ ընդարձակ տեղ տալ: Գալով ազգաբնակութեան սովորութեան, տեսնում ենք, որ վազի մշակութեամբ գլխաւորապէս պարապում են չայերն ու Վրացիները, իսկ Մահմեդականները, որոնց ձեռին է զրեթէ Կովկասի ամենաընտիր ու վազի մըշակութեան յարմար հողերի $\frac{2}{3}$ մասը, պարապում են շատ աննշան չափով, միայն իրենց տնային պէտքերը լրացնելու համար. շատ տեղ բերքի աւելորդն անդամ զանում են քրիստոնէի ծախելու, որ մի գութի տակ ձգեն:

Այսպէս թէ այնպէս այժմ Կովկասում իբրև յայտնի գինեստաններ համարում են Կախէթը, Գանձակը, Երևանը, Մաղրասան, Ղարաբաղը և Դաղստանի շըրջանի մէջ Դարբանդը:

Կովկասեան գինեստանների ընդհանուր տարածութիւնը և նրանց արդիւնաբերութիւնը ճիշտ վիճակագրական տեղեկութիւն չլինելու պատճառաւ անկարելի է հաստատապէս որոշել միայն մի քանի անձանց կարծիքով մօտաւորապէս պիտի լինի 150—200 հազար գեսեատին տարածութիւն, որը արտադրում է 15—20 միլիոն վեղբայ գինի:

Թէ Կովկասի կամ ամբողջ Ռուսաստանի այգեգործութիւնն ու գինեգործութիւնը եւրոպական երկրների շարքում ինչ աննշան տեղ է բռնում, մէջ կը բերենք հետեւեալ հաշիւր—

Փրանսան միջին թւով արտադրում է տարին իւր 1,800,000 գեսեատին այգիներից 300—400 միլիոն վեղբայ գինի:

Իտալիան	220	միլ.	վեղբայ.
Սպանիան	167	«	«
Աւստրա-Հունգարիան . . .	68	«	«
Պորտուգալիան	37	«	«
Դերմանիան	29	«	«
Ռուսաստանը Կովկաս, Խրիմ,			
Բեսարաբիա մինչև	30	«	«
Յունաստանը	12	«	«
Տաճկաստանը	12	«	«
Ջիւցարիան	5	«	«
Սակայն ուրախալի է նկատել, որ մեր յետամաց			

Կովկասում վերջին տարիներում մի ընդհանուր շարժում է տեսնուում ի նպաստ գիւղատնտեսութեան և մասնաւրապէս այգեգործութեան ու գինեգործութեան. տէրութիւնը ինքը նպաստում է այդ ճիւղերի տարածմանը, մասնաւոր անձինք և ընկերութիւններ ընդարձակում են վազի մշակութիւնը, բարեգործում գինեգործութիւնը, Բագու-Թիֆլիդ-Բաթումի երկաթուղին, Կասպից ծովը ու նորաշէն Բագու-Գերբենդ-Պետրովսկ-Վլադիկավազի գիծը ու Թիֆլիդ-Երևանին հեշտացնում են գինու արտահանութիւնը, որի պահանջը օրէցօր շատանում է Բուսաստանում և լաւ գինիների արձէքը հետզհետէ բարձրանում:

Մնում է մեզ օգուտ քաղել արդի գիտութեան սահմանած կանոններից, բարեփոխել վազի մշակութիւնը և նրա հետ գինեգործութիւնը, որոնք մեր երկրի շատ տեղերի տնտեսական զարգացման և նիւթական բարօրութեան գլխաւոր տարրերն են կազմում:

2. ՎԵԶԷ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ

Հայաստանից վազի մշակութիւնը մտած է նախ Փոքր Ասիա և Յունաստան դեռ գիւցազանց դարերում, երբ սկսուած է յոյների յարաբերութիւնը արևելքի հետ: Այսպէս տեսնում ենք որ 1519 տարի Քրիստոսից առաջ Բէյովտիայում յաջողութեամբ առաջ է գնում նրա մշակութիւնը և որչափ քաղաքակրթութիւնը տարածում է, նաւազնացութիւնը և միջազգային վաճառականութիւնը զարգանում, նրա հետ համբո-

թաց առաջ է գնում և վազը ու արմատ ձգում Փոքր Ասիա, Եգիպտոս, Սիկիլիա կղզին և Խտալիա:

Գինին, որ սկզբում ծառայում էր տեղական պէտքերի համար և այն շատ սահմանափակ շրջաններում, հետզհետէ վաճառահանութեան աղբիւր է զառնում, այնպէս որ Տրոյիոյ պաշարման ժամանակ յոյները մեծ արդիւնք են ստանում իրենց գինիներից, որոնց մէջ անուանի են լինում Մառոնիոյ, Կանդիայի, Լեսբոսի, Զմիւննիոյ և այլ տեղերի գինիները:

Խտալիայում գինին սկզբներում մուտք ունէր Հոռոմի առաջին թագաւորների ժամանակ և գործ էր ածւում միայն պալատներում: Անումա Պոմպիլիոսը, որ հովանաւորում էր գիւղատնտեսութիւնը, առանձին խնամք տարեց և վազի մշակութեան համար, այնպէս որ Քրիստոսից չորս դար առաջ զարգանարվ, դառաւ Խտալիայի գիւղատնտեսութեան գլխաւոր ճիւղերից մին, ինչպէս որ նկարագրում են են Կատոնը, Պլինիոսը և Վիրգիլիոսը իրենց երկերի մէջ:

Փոկէացիք 600 տարի Քրիստոսից առաջ հիմներով Մարսէլ քաղաքը իրենց հետ տարին վազը և մտցրին Փրանսիա. բայց սկզբներում Պաղպիոյ վայրենի ցեղերը հաշտ աշքով չէին նայում նվազի մշակութեան վերայ, նրանք նախապատիւ էին համարում նեան ու աղեղը, սուրն ու թուրը, քան յարօնն ու զութանը. թէև յետոյ գինեխմութեան վարժուելով այնպէս էին սիրում այդ խմիչքը, որ ինչպէս գրում է Դիոդորոս Սիկիլիացին իւր ժամանակներում անգամ Պալլերը Խտալացի վաճառականների վերայ ժա-

խում էին իրենց տղաները, մի տղան մի տակառ գինու հետ փոխանակելով:

Յուլիս Կեսարի ժամանակ, Հռոմայեցւոց ազդեցութեամբ, Գաղղիայում Ռոնի հովիտներում աւելի զարգացաւ վազի մշակութիւնը և այդտեղից հետզհետէ տարածուեց Բուրգունդիա, Ճամպայն և Բորգո, սակայն քիչ յետոյ բարբարոս ազգերը արշաւելով, իրենց ճանապարհին պատահած այգիները փշացըին, որով վազի մշակութիւնը կանգ առաւ մինչև Տրայանոսի և Ազրիանոսի ժամանակները, երբ նորից սկսում է լայն ծաւալ ստանալ:

Հռոմայիցիք, քաջալերուած Գաղղիայում ունեցած յաջողութեան վերայ, վազի մշակութիւնը մըտցրին և միւս երկիրները, ինչպէս Սպանիա և Պորտուգալիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Զվեցարիա, որտեղից անցաւ Աւստրիա իններորդ զարում, Հռուդարիա և Բոհեմիա 1250 թուականներին և վերջապէս Հարաւային Ռուսաստան:

Միայն վազը Փրանսիայում աւելի յաջող պայմաններ ունենալով և ամենաընտիր գինիները տալով ժողովրդի համար կենսական ինդիր է դառնում և 1715 թուին, որ ունենում է 800,000 հեկտար^{*)} այդիներ, 1800-ին դառնում է 1,900,000 հեկտար, 1850 թուին 2,000,000, իսկ 1865 թուին Փիլոքսիրայի մասնելուց առաջ 2,500,000 հեկտար, այն է բոլը երկրներում մշակուածի կէսից աւելի:

^{*)} Հեկտարը հաւասար 2200 քառ. սաժէն տարածուածէն, այն է մօտ մի դեստինի, որ ունի 2400 քառ.

3. ՎԵԶԼ ԸՄԻԵՑՈՒՄ

Վազը Ասիայում այն նշանակութիւնը չունի, ինչ որ Եւրոպայում այստեղ վազը թէե տարածուած է այլ և այլ կետըններում, սակայն նա զիսաւորապէս ծառայում է տեղական պահանջների համար և զիսաւորապէս խաղողը գործ է ածում կամ արտահանում է իբրև չոր կամ թաց միրգ. միայն քիչ տեղերում են զինեգործութեամբ պարապում, ինչպէս Ասիական Տաճկաստանում—այն է Զմիւռնիա, Տրավիգոն, Վան, և այլ տեղեր:

Ասիայում վազի մշակութիւնը տարածուած է հետեւեալ տեղերում.—Պարսկաստանում, որ մեծ քանակութեամբ չամիչ է արտահանում, Անդրկասպեան երկրում—Սամարկանդ, Բուխարա, որ մեծ ապագայ ունին գինու արտահանութեան կողմից, Զինաստան և Ճափոնիա՝ ուր վազը դեռ փոքր չափով զոյլութիւն ունի:

4. ՎԵԶԼ ԸՓՐԻԿԵՑՈՒՄ

Ավրիկայում վազը զիսաւորապէս տարածուած է Միջերկրական ծովի հարաւային ափերում—Ալֆիրում՝ ուր Փրանսացի դաղթականները մեծ ուշադրութիւն են դարձնում, Մարոկում, Տրիպոլսում, Թունիզում և Եգիպտոսում: Նշանաւոր են Կապ հրուանդանի, Մադեյրա, Ազորեան և Կանարեան կղզիների գինիները:

5. ՎԵԶՔ ԾԻՌՏՐԱԼԻԱՅՈՒՄ

Աւտրալիայում վազի մշակութիւնը սկսուած է միայն վերջին ժամանակներս, բայց դժբախտաբար այնտեղ մուտք է գործել ֆիլոքսերան և վտանգ է սպառնում, եթէ հարկաւոր միջոցները ձեռք չառնեն առաջն առնելու:

6. ՎԱԶՐ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Նախ քան Կոլումբոսի մուտքը Ամերիկայում վա-
ղը դյուլթիւն ունէր և յայտնի է տասներորդ դարից
ի վեր. Այժմ վազը զիխաւորապէս մշակուում է Արգեն-
տինեան հասարակապետութեան մէջ Զիլի, Պերու,
Մեկսիկա և Կալիֆորնիա և փոքր քանակութեամբ
Միացեալ նահանգներում.

Ամերիկական վագերի նշանակութիւնը բարձրացաւ վերջին ժամանակներս, երբ Փիլօքսերան մուտք դործեց Փրանսա. փորձը ցոյց տուեց, որ ամերիկայի վագերը առատ, թէև որակութեամբ ստոր զինիներ են տալիս քան եւրոպական տեսակները, բայց աւելի դիմացկուն են Ֆիլօքսերայի աւելումներին և բուսական պարագիաներին, ուստի և նրա գործադրութիւնը ոչ միայն Փրանսիայում, այլև այժմ Փրանսիայից դուրս մեծ ծաւալ է ստանում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՅ

4424-2010

ՎԵՐԻԿԱՆՔԸ

ԳԼՈՒԽ Ա

1. Վազի զարթնելը. 2. Վազի սննդուելը. 3. Վազի պըտ-
ղաբերութիւնը. 4. Վազի հասունութիւնը:

Ա. ՎԱԶԻ ԶԱՐԹՆԵԼԸ, Վազը կամ խաղողի որթը
(թեանազը) ամեն տարի տերև թափող մի տունկ է,
որի աճելութիւնը ձմեռը կանգ է առնում, իսկ գար-
նանը զարթնում է, որի նշանը համարում է լաց լի-
նելը կամ ջուր (մեռվ) ընկնելը։ Այդ ջուրը նրա մէջ
հաւաքրում է ձմեռուայ ընթացքում, որ օդի և ած-
խաթթու ասուած գազի հետ խառն լցում է տուն-
կի զանազան մասերը և երբ գարնանը կտրում ենք
կամ որևէ հարուածով կոտրում կամ ճղում է վազը,
տեսնում ենք, որ նրանից առատօրէն ջուր է կաթ-
թում։ Վազի լաց լինելը տեսում է մինչև նոր շիւերի



բացուիլը, երբ տերեների արտաշնչութեամբ ջուրը դուրս գալու ճանապարհ է գտնում:

Գարնանը օրերը տաքանալուց՝ վազի աչքելը ուռչում են և մի քանի ժամանակից բացւում է, փոքրիկ շիւեր ու տերեներ ձգում: Վազի վերի մասի կենդանալով, կենդանանում են և նրա ստորերկեայ մասերը՝ արմատները, որոնց վերայ շուտով առաջ են դալիս մազմղուկները (բարակ արմատները, ծիլերը), որոնք նրա մննդեան գլխաւոր գործարաններն են:

Բ. ՎԱԶԻ ՍՆԵԴՈՒԻԼԸ: Վազը իւր վերեկի մասով հաղորդակցութիւն ունի օդի հետ, իսկ ստորին մասով՝ հողի: Գարնան վերջերին կամ ամառուայ սկզբին, երբ տերեները աւելի զարդացած են լինում, աւելի շատացած, վազը մթնոլորդից ընդունում է գազ և ջրային գոլորշիներ և միկնոյն ժամանակ հողի արմատների մազմղուկների միջոցաւ մի հեղանիւթ, որի մէջ լուծուած են հողի մի քանի տարրեր: Թէ այդ հեղանիւթը և թէ մթնոլորդից ստացած գազն ու գոլորշիները հետզհետէ մշակւում են տերեների միջոցաւ, ջրային անպէտք մասերը արտաշնչում դուրս են դալիս, իսկ մնացած մասերը վոխակերպում են ծառնիթի (խէժի), որից մննդում են տերեները, պտուղը, շիւերն ու արմատները:

Վազի մննդառութեան համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ. նախ՝ վազը պէտք է որ հողի ու շրջապատող օդի մէջ գտնէ իրեն հարկաւոր ջերմութիւնը, որպէսզի կարողանայ զարդացնել իւր նոր շիւերն ու մատաղ արմատները. տերեների համար

անհրաժեշտ է լրյու՛ որ կարողանան իւրացնել (մարսել) մթնոլորդից ստացած տարրերը. արմատներին պէտք է հանջային եւ օրգանական նիւթեր՝ որ պէտք է մատակարարէ հողը, իսկ հողին հարկաւոր է ջուր՝ որ այդ նիւթերը լուծէ, վափկացնէ, որ թէ վազի աճելութիւնը պահպանուի և թէ տերեների ազատ շնչառութիւնը: Ոչ պակաս նշանաւոր դեր է կատարում և լրյու՛, որ վազի աճելութեան առաջին շրջանում օգնում է նրա նոր գործարանների աճելութեանը:

Գ. ՎԱԶԻ ՊՏՂԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ: Վազի պտղաբերութիւնը կախուած է իրեն ծաղկի շատ ու քիչ բեղմնաւորուելուց. պտղաբերութիւնը առաւտ է լինում տաք ու մեղմ եղանակին և ընդհակառակին նուազ՝ երբ անձրեներ են դալիս՝ թափում ծաղկափոշին կամ ցըրտացնում օդը. ոչ պակաս վնասակար են վազի ծաղկած ժամանակը հիւսիսարևմտեան քամիները, որ իրենց ցրտութեամբ և չորութեամբ երբեմն փշացնում են պտղաբերութեան գործարանները. օդի բաւականաշափ ցրտութիւնը ընդհանրապէս վնասակար աղգեցութիւն է անում:

Պտուղը մի անգամ ձեւակերպուելուց՝ կոճակ (դիւգմա, գնղեր) բռնելուց յետոյ՝ վազի աճելութիւնը առաջուայ պէս արագ չէ գնում և նոր շիւեր չեն դուրս դալիս, միայն եղածները մկսում են կատարելազգործուել—ճթերը և հատիկները (գիլաները) մեծանալ և տերեների ամբարած նիւթը մտնել արմատների, շիւերի և պտուղների մէջ յաջորդ տարուայ համար:

Հասունութիւնից երեսուն, քառասուն օր առաջ խաղողը ջուր է ընկնում (շլում է), ոև խաղողների կաշին մոյդ գոյն է առնում, սպիտակներինը՝ բաց։ Այդ ժամանակամիջոցում վազի աճելութիւնը համարեա թէ կանգնում է, տերեներն ու շիւերը փոխում են իրենց գոյնը և տունկի զանազան մասերի մէջ հաւաքուած պէսպէս նիւթերը մտնում են պտղի մէջ։ Խաղողը մեծանում է, թթւութիւնը պակասում, շաքարը աւելանում, կատարեալ հասունութեան հասնելով ճթի կոթեըը փայտանում են ու պնդանում, հատիկները այլև չեն մեծանում, հեշտութեամբ պոկտում են կոթիկներից, կաշին բարակում է և կորիզը համարում, մոյդ գոյն առնում, որով և ընդունակ է դառնում ծելու։

Հասունութեան շրջանում խաղողը գիշեր ցերեկ ածխաթթու գագ է բաց թողում և ջուր ներս ընդունում կամ գուրս տալիս, նայելով խոնաւ է տեղը թէ չոր։ Այդ միջոցին ամենազիստոր դերը խաղում է տաքութիւնը, որի ներգործութեամբ աւելանում է խաղողի քաղցրութիւնը կամ շաքարը և լոյսը՝ որ պակասեցնում է նրա թթւութիւնը։

Այդ իսկ պատճառաւ հարաւային տաք երկրներում, ուր չերմութիւնը և լոյսը առատ է քան հիւսում, խաղողը թթւութիւն չունի, որ կարեու է գինու մէջ ռուկետ (անուշահոտութիւն) առաջ բերելու։

Խոնաւ և տաք մթնոլորդի մէջ խաղողի հատիկները թէ ջրալի են դառնում և թէ խոշորանում, նոյնը պատահում է և այդին շատ ջրելուց և ստացուում

է առատ, բայց թնդութեան (սպիրտի) կողմից թոյլ գինի. այն ինչ չոր և տաք եղանակին հասունացած խաղողը թէն քանակութեամբ քիչ է լինում, բայց թունդ ու քաղցր գինի է տալիս։

Այգեկութը առհասարակ սկսում են խաղողի հասունութեան ժամանակ, թէն երբեմն թողնում են, որ խաղողը չմշկի, չամիչ կտրուի, որպէսպի քաղցր ու ոգելից գինի ստանան, երբեմն էլ խոնաւ կողմերում թողնում են, որ խաղողը շատ հասունանայ, կաշին տրաքուի, մի տեսակ բորբոսով ծածկուի, որով գինին առանձին համ ու հոտ է առնում, ինչպէս Սուտերնին է և եօանիսրերգին։

Դ. ՎԱԶԻ ՀԱՍՈՒՆԱՆԵԼ. Այգեկութից յետոյ վազի շիւերը հասունանում են, այսինքն կանաչաւուն մասերը մգանում, փայտանում են, իսկ տերեները դեղնում, յետոյ կարմրում, հետգհետէ չորանում, թափւում։

Առաջին ցրտերն ընկնելուց շիւերի ծայրի ժեժ (խակ) մնացած մասերն էլ կոճակներից, կապերից, կտրատում են և վազը իւր տերեներից մերկանալով քնում է։

Այդ ժամանակ ահա ծառհիւթը վերադառնում է մտնում վազի շիւերի, կոճակների, արմատների և այլ մասերի մէջ ու կաշկանդուած մնում մինչև վարունը, երբ նորից զարթնում է նա և սկսում նոյն դործողութիւնները, ինչ որ ասացինք սկզբումը։



գնում, բայց այսպիսի տեղերից քիչ՝ բայց ընտիր գինիներ են ստացւում:

Թարմ, խոր ու պարարտ հողը ընդհակառակն տալիս է զօրեղ աճերութիւն, առատ պտղաբերութիւն, բայց հասարակ գինի:

Հարաւում պինդ հողը, եթէ օդի ու ջրի սակաւ մատչելի է, ամառը սաստիկ ճաքճռում է և վազի արմատները կարատում կամ սաստիկ խոնաւ ձմեռը փտեցնում. այդպիսի հողը տալիս է թէ սակաւ բերք և թէ հասարակ գինիներ:

Հողի այս ու այն գոյնը ևս ունի իւր ներգործութիւնը. օրինակ կարմիր ու գորշ գոյնը ծծում է արեի ճառագայթները, որով արմատների մազմզուկների աճերութիւնը արագանում է, իսկ պտղի հասունութեան ժամանակը՝ ցերեկը իւր մէջ քաշելով տաքութիւնը՝ գիշերուայ ընթացքում տալիս է պտուղներին, որով և քաղցրութիւնը աւելանում է:

Սպիտակահողը կամ կաւայինը դանդաղ է տաքանում գարնանը, որովհետեւ յետ է մղում արեի ճառագայթները, ուստի և մազմզուկները ուշ են զարգանում: Տաքութեան այդ յետ մղումից խաղողը ամառուայ սաստիկ շոգերին կարող է խանձուել, մանր մնալ, քիչ՝ բայց թունդ գինի տալ:

Խիճերը, աւազը և մանը քարերը նպաստում են հողի շուտ տաքանալուն, հողը փխրուն են շինում և հեշտութեամբ ջուր ընդունում ներս և շուտով էլ գոլորշիացնում: Խճու և աւագային հողում վազը առհասարակ առողջ կազմութիւն ունի, գիմացկուն է, թէև աճերութիւնը դանդաղ է գնում, պտղաբերութիւնը պահել, վազի աճերութիւնը թոյլ է

Ք. Բ.

ՑԵՂԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԵԶԻ ԵՒ ՆՐԱ ԲԵՐՔԻ ՎԵՐԱՅ

Վազի մշակութեան եւ նրա բերքի վերայ ներգործում են գլխաւորապէս. 1, չողի կազմութիւնը. 2, կլիման. 3, ծովի մակերեւոյթից ունեցած բարձրութիւնը. 4, Գետնի դիրքը եւ 5, Այգետեղը:

—○—

Ա. չողի ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ: Ընդհանրապէս կարելի է ասել, որ բացի ճախնային և շոր (աղոտ) հողը, ամեն հողում վազը բանում է. այսպէս և պարարտ հողերում, կաւաւազային ու խճու տեղերում, ծովագուտներում, կրային, կաւճային ու լաւայով ծածկուած հողերում, մի խօսքով ամեն տեղ յաջողութիւն կունենայ վազը, եթէ կլիման, գիշերը և հարկաւոր խնամքը բաւականացուցիչ է:

Հողը ներգործում է տունկի աճերութեան և նրա պտղի վերայ. առհասարակ թեթև կամ միջակ պնդութիւն ունեցող հողի մէջ, որ հեշտութեամբ է տաքանում ու չէ կարողանում բոյսի հարկաւոր խոնաւութիւնը իւր մէջ պահել, վազի աճերութիւնը թոյլ է

թիւնը սակաւ է, բայց ընտիր գինի է տալիս և հասունթիւնը միշտ առաջ է ընկնում:

Յ. ԿՂԻՄՍՑԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ: Վազի պտղաբերութեան վերայ մեծ ներգործութիւն ունի կլիման: Հիւսիսային ցուրտ և խոնաւ կլիման վազի մշակութեան համար նպաստաւոր չէ. ձմեռուայ սառնամանիքը երեմն ամբողջապէս կամ մասամբ փշացնում է վազերի արտաքին մասերը, իսկ զարնան ցրտահարութիւնը վնասում է բերքը և եթէ խաղողը ազատում է շատ ու քիչ այդ փորձանքից, շատ հազիւ է պատահում, որ լաւ հասունանալ կարողանայ, ստացուած գինին թոյլ է լինում, կոշտ ու թթու, լրյափ և արեի պակասութեան պատճառաւ, իսկ եթէ եղանակը բարեյածող է, տալիս է մի թեթև բուկետով դուրեկան գինի: Բերքի այդպիսի կասկածաւոր զբութեան համար՝ հիւսիսում վազի մշակութիւնը շատ տեղ թողնուած է:

Հասարակածի երկու կրզմի կլիման նոյնպէս անտեղ սաստիկ չերմութեան համար, ինչի որ այնվերայ կարելի է գտնել և ծաղիկ և ժուռ ու հասուն դժուարեցնում են. բացի այդ խաղողը ջրալի է և գինին թթութիւն և դիմացկանութիւն չունի:

Վազի մշակութիւնը աւելի յաջող կարելի է տանել սարեխառն կլիմայում՝ 35—50 սատիճան լայնութեանց մէջ, ուր ընկած են հետեւեալ երկիրները—քրանսա, Սպանիա, Իտալիա, Ալտորա-Հունգարիա, Յու-

նաստան, Տաճկաստան, Կովկաս, Բեսարաբիա, Կրիմ, Միջին ասիական երկիրները և Ափրիկայի ու Ամերիկայի մի քանի տեղերը:

Բարեխառն կլիմայի չափաւոր ջերմութեան մէջ ստացում են ամենաընտիր գինիները, տաք մասերում հասարակ գործածականները, իսկ ամենատաք կողմերում՝ թանձը ու քաղցը և ոգելից գինիները:

Գ. ՖՈԳԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻՑ ՈՒՆԵՑԱԾ ԲԸՐՁՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ: Բացի լայնութեան աստիճանը, պէտք է հաշուի առնել և այս՝ թէ մի երկիր ինչքան բարձր է ընկած ծովի մակերեսոյթից (երեսից), ինչի որ այս հանգամանքը ևս մեծ ներգործութիւն ունի վազի մշակութեան վերայ. օրինակ մի երկիր կարող է 35—50 աստիճան լայնութեան տակ գտնուել, բայց ծովի մակերեսոյթից շատ բարձր լինելով անմատչելի լինել վազի մշակութեան համար:

Դիտելի է, որ վազը, եթէ հիւսիսում աճում է 200 սաժին ծովի մակերեսոյթից բարձր, քիչ հարաւում նա 400 սաժինից աւել բարձրաւանդակի վերայ կարող է աճել, իսկ աւելի հարաւ, առաւել ևս:

Վազի աճերութեան սահմանը կախուած է բարձրաւանդակի հասարակածից ունեցած հեռաւորութիւնից կամ մերձաւորութիւնից. որչափ նա հեռի է հասարակածից, այնքան քիչ բարձրութեան վերայ կարող է աճել և որչափ մօտ՝ այնքան բարձր:

Դ. ԳԵՑՆԻ ԴԻՐՔԻ ՍԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ: Վազի մշակութիւնը կարելի է սարերի կամ սարահարթերի վերայ,

թմբերի փեշերին, բաց դաշտերի և կամ հովիտների մէջ:

Սարերի կամ սարահարթերի վերայ վազի մշակութիւնը այն անյարմարութիւնը ունի, որ այնտեղ խաղում են ցուրտ քամիները, կոշտացնում խաղողի կաշին, պտուղը լաւ չէ հասունանում, թէ ջուրը և թէ քաղցրութիւնը քիչ է, ուստի և բերքը նուազ և ստոր որակութեամբ է:

Թմբերի փեշերը աւելի յաջող պայմաններ ունին, թէ այնտեղի հողը ընդհանրապէս քիչ պտղաբեր է, քան թէ դաշտերին ու հովիտներին, բայց լաւ պայմանների մէջ են դրուած, ինչի որ ջրերը այնտեղ չեն կանգնում, որով և շուտ տաքանում է հողը, արմատները լաւ աճում են, քիչ են ենթարկում դարնանցրտահարութեան և մառափուղներին (մռաժներին), որ աշնանը փտեցնում են հովիտների խաղողը:

Առհասարակ իրեւ այգետեղ ընտրելի է զանիվայր թմբերը, որ թէ քիչ բերք է տալիս, բայց դինին միւս տեղերից առաւել ընտիր ու թունդ է լինում:

Դաշտավայրերի հողը թէ պարարտ ու թարմ է և նպաստում է վազի աճերութեան և յաջող տարին մեծ արդիւնք է տալիս, բայց գինին թնդութեան և գոյնի կողմից պակասաւոր է թմբերի գինեստաններից, Բացի՝ այդ դաշտավայրերի վազերը ենթակայ են գարնան ցրտահարութեան և երբեմն էլ փտութեան: Այդպիսի տեղերում լաւ է առատ բերք, բայց հասարակ գինի տուող վազերի մշակութիւնը, չովիտները դաշտավայրերից աւելի պակասու-

թիւն ունին. այդտեղ արեւ քիչ է մնում, ցրտահարութիւնը և մառախուղը աւելի յաճախակի է պատահում ու սաստիկ է և վազերը ենթարկուած են փտութեան և պէսպէս հիւանդութիւնների:

Ե. ԱՅԻՆՑԵՂԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ: Վազի մշակութեան համար այգետեղի ընտրութիւնը ևս շատ զգուշաւոր պիտի լինի: Բացի գետնի կազմութիւնը, նրա դիրքն էլ մեծ դեր է խաղում. ամենից ընտրելի հողը դէպի հարաւ կամ հարաւարեւելք նայողն է, ինչի որ ամբողջ օրը արեւ վերան է և պահպանուած է հիւանդին ցուրտ օդից:

Հիւասահայեաց դիրքը լաւ է միայն շոգ երկրների համար, որ տալիս է առատ և ջրալի պտուղ. այդ տեղերը քիչ է պատահում, որ վազը ցրտահարուի, ինչի որ ուշ է բացւում և հիւսիսային ցուրտ քամիները պակսեցնում են աշնանը խաղողը փտեցնելու պատահարները, այն ինչ հիւսիսում՝ այդպիսի դիրքը վնասակար է համարուած, մանաւանդ եթէ շատ թեք է տեղը:

Արեւելահայեաց դիրքը այն անյարմարութիւնը ունի, որ գետինը ստանում է արեւի առաջին ճառագայթները և շուտով անցնում տաքութիւնը, որ վըտանգաւոր է զարնան ցրտահարութիւն պատահելու ժամանակ:

Արեւմտահայեացը ընհակառակն ցրտահարուելու քիչ երկիւղ ունի քան հարաւ և արևելք նայողը, բայց եւրոպայի արևմտեան մասում ովկիանոսի քամիները շատ անգամ մեծամեծ վնասներ են հասցնում:



ժամդաներից, տակոիներից մաքրուի և առժամանակ թողնել, որ այդ փորուածքը ցըտի կամ տաքութեան ազգեցութեամբ վիշրանայ, պատրաստուի:

Յ. ՀԱՓԱՐԵԼՔ: Այդին անհրաժեշտ է որ պատսպարուած լինի այն տեղերում, ուր կանոնաւոր հսկողութիւն չկայ և նա ենթարկուած է մարդկանց և անպատճեների յարձակմանը և ոտնատակ դառնալուն: Դրա համար էլ նրա չորս կողմը պէտք է ծածկել, չափարել, հողից կամ քարից պատ քաշել եւ կամ կենդանի չափար շինել:

Չափարը շինում են կաղնի, տկողնի և այլ ծառերի ճիպոտներից. նախ 2—3 արշին բարձրութեամբ հաստ բիհրեր, փայաներ (ձողեր) են տնկում մի արշին մէկմէկից հեռի և նրանց վրայ հիւսում ճիպոտները և այնպէս թողում կամ ձողերի վերևից փուշ անցկացնում: Չափարը շինում են և առանց ճիպոտների, միայն նրանց փոխարէն բիհրերի ծայրերին և արանքներին փշի խրճեր են անցկացնում:

Հողէ պատը կամ ինչպէս ասում են զանդաղը սովորականն է և լաւ է մահաւանդ մեծ այդիների համար: Դրա համար այդու չորս կողմը 2 արշին լայն և այդչափ էլ խոր մի առու են փորում և նրանից դուրս եկած հողը գէպի այգու ներսը կուտում, բարձրացնում, վրան էլ փշի խործեր դնում աւելի ապահովութեան համար:

Հողէ պատը եթէ ուզում են որ երկար տարիներ դիմանայ և ամեն տարի նորոգութեան պէտք չը լինի, լաւ է, որ ցեխի և դարմանի շաղախից շինուի

Գլ.

ՆԵԽՊԵՏՐԵՍՑՈՒԹԻՒՆ ԸՑԳՈՒ

1. Հողի պատրաստելը. 2, Չափարելը. 3, Այգու ճանապարհներն ու ջրի առուները:

—∞—

Ա. Հողի ՊԱՏՐԱՍՏԵԼՔ: Այգետեղը ընտրելուց յետոյ պէտք է նրան պատրաստել վաղ տնկելու համար: Եթէ ընտրուած տեղը բռնուած է եղել վագերով, հացարոյսերով կամ թէ զանազան տունկերով, նախ դրանց պէտք է արմատահան անելով հեռացնել, իսկ եթէ խոպան (խամ) հող է, քարերով ծածկուած, պէտք է հողը գութանով փորել, քարերը հանուաել: Եթէ հողի ներքեր շերտը ջրչոտ է, պէտք է կորիներ (խոր արխ դրեհայք) փորել տալ և այդ ստորերկրեայ ջրերը կորիների միջոցաւ հաւաքել առանձին փոսեր կամ հանել այգուց, որ մնալով վագերը չփառեցնեն: Առհասարակ պէտք է վագերը տնկելուց առաջ մի անգամ ինչքան հնար է խոր փորել հողը, որ

և մօտ մի սաժէն բարձրութիւն ունենայ գետնից,
միայն հողը պէտք է կաւ լինի, որ դիմանայ:

Քարէ շոր պատը ամենից դիմացկանն է և ձե-
ռնտու է միայն այն տեղերում, ուր քարը արժան
է և այդին մեծ տարածութիւն չէ բռնում:

Կենդանի չափարի համար առհասարակ ընտրում
են այնպիսի թփեր, որոնք փշոտ են, խիտ շիւեր են
ձգում և շուտ են աճում: Դրա համար լաւ են մոշի,
սպնի, թթի, մասուրի, լվերթնի, ակացու և այլ ցա-
խոտ թփերը, որոնց խիտ տնկելով այգու շուրջը՝ մի
որոշ բարձրութեան համսելուց յետոյ վերեկց կտրում
են և չեն թողնում որ բարձրանան: Կենդանի չափա-
րը հիւսիսային կողմից աւելի բարձր պիտի պահել
քան միւս տեղերը, որ կարողանայ այդին քամիներից
պաշտպանել:

Եթէ այդին բաց տեղ է, լաւ է հիւսիսային կող-
մից մի քանի շարք խիտ տերև ունեցող ծառեր տըն-
կել. ուռենին, կաղնին, թթենին, բարդին և ուրիշնե-
րը յարմար են այդ նպատակի համար:

Գ. ԱՅԴՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՆ ՈՒ ԶՐԱՌՈՒՆԵՐԸ: Այդին
նայելով իւր մեծութեան՝ լայն ու նեղ ճանապարհ-
ներ պիտի ունենայ, որ վազերը տնկելուց առաջ պի-
տի հարթուին և որոշուին: Լայն ճանապարհները ուղ-
ղահայեաց պիտի լինին վազաշարքերին, 10—12 ար-
շին լայնութիւն պիտի ունենան, երբ սայլ բանացնե-
լու յարմարութիւն կայ և ամեն 40 սաժէնի վրայ մի
այդպիսին պիտի թողել. իսկ ամեն մի 60 սաժէնից
պակասը 8 արշին լայնութեամբ մի ուրիշը պիտի

կտրէ լայն ճանապարհը. այդպիսով ամեն մի վազա-
թախտը (լաքը) կունենայ երկու օրավար կամ մի
գեսեատին տարածութիւն:

Եթէ հողը կաւային է, փորելուց ամբողջ այգուն
քիչ թեք դիրք պիտի տալ, որ մէջը ջրեր չկանգնեն:

Զրովի այդիները պիտի լայն ճանապարհների կող-
քից ջրառուներ ունենան յատակը և կողքերը քարած
կամ տախտակով պնդացրած, որ հողը քերուելով՝
վազերի թախտերի վերայ չթափուի: Զրառուները
պիտի շինել այգու բարձրագիր կողմից և աստիճա-
նաբար ցածացնել և այգու ծայրին ջրերը դուրս գա-
լու ճանապարհ տալ:

արայ մեջ մնան խուժքը բարձրացնաւ մնալ չկայ
ու հայր շախուց տվիդ բանեալոյ զըսը դաստի
մարդ զըսը բայց պատճեալ առաջար որու չին.
ունարնոր; ունա ունա զըսը զըսը չին.

ԳԼ. Դ.

ՎԵԶԵՐԻ ԲԱԶՄԱՑՆԵԼԸ

Վազերը կարելի է բազմացնել՝ 1, Կորիզով կամ սերմով,
2, Կտրոնով. 3, Տաշտաթաղ անելով եւ 4, Պատուաս-
տելով:

—○—

Ա. ԿՈՐԻԶՈՎ. ԿԱՄ ՍԵՐՄՈՎ. ՎԱԶԵՐԻ ԲԱԶՄԱՑՆԵԼԸ. Կո-
րիզը կամ սերմը թէկ բոյսեր բազմացնելու զլիսաւոր
միջոցն է, բայց վազի վերաբերութեամբ անգործնա-
կան է ճանաչուած և վազուց ի վեր թողնուած, որով-
հետև կորիզը ինչքան էլ ընտիր խաղողից ստացուած
չինի և լաւ պայմանների մէջ մշակուած, այնուամե-
նայնիւ նա մայր վազի յատկութիւնից հեռանում է և
շատ ստոր տեսակի պտուղ արտադրում: Բացի այդ՝
կորիզով բազմացնելը երկար ժամանակ և մեծ խնամք
է պահանջում: Մի դէպքում միայն լաւ է կորիզով
բազմացնելը, երբ ուզում ենք մի նոր տեսակը առաջ
բերել:

Յանելու կորիզը նախընթաց տարուայ պիտի լի-
նի և լաւ հասուն խաղողներից հաւաքած: Փորձը ցոյց
է տուել, որ ճաճի հետ եփ եկած սերմերը ևս յաջող
են բռնում, ինչպէս և ուղղակի պտղից հանածը:

Յանելու կորիզները ամբողջ ձմեռուայ ընթաց-
քում պահում են աւազում և մարտին վոքը ինչ ջուր
վերան սրսկելով, թողնում են որ ուռչին, իսկ ապ-
րելին ցանում են ուղղակի առաջուց պարարտացըրած
փխրուն հողի մէջ մօտ մի վերշոկ խորութեան վերայ
և մէկ մէկից կէս արշին հեռի շարքերով: Ամեն երեք
օրից այդ շարքերը ջրում են ցնցուղով և ծլելուց յե-
տոյ արևից պաշտպանում են, որ չայրուին: Փոքրիկ
տունկը առաջին տարին մօտ մի արշին շիւ է ձգում,
որ և արմատով հանելով ձմեռուայ վերշին տանում
են նշանակուած տեղը տնկում:

Բ. ԿՏՐՈՆՈՎ. ԲԱԶՄԱՑՆԵԼԸ. Կտրոնը (bouture, ծա-
լամ, չուբուխ, մատ) ոչ այլ ինչ է, եթէ ոչ վազի այն
պտղատու շիւը, որը կտրում ենք վազից հեռացնում
խաղող տալուց յետոյ, որպէս զի վազի աճելութիւնը
և պտղաբերութիւնը որոշ չափ ու սահմանի մէջ
մայ:

Կտրոնով վազերի բազմացնելը այն տարբերու-
թիւնն ունի կորիզով բազմացնելուց, որ այստեղ փո-
խանակ նոր տեսակ վազ առաջ բերելու, ստանում
ենք արդին եղածի նոյն և նմանը, որ պահպանում է
մայր վազի զլիսաւոր յատկութիւնները, այն է պտղի
գոյնը, համը, այս ու այն հիւանդութեան և որդ-
ների ենթակայ լինելը կամ դիմադրելը:

Կտրոնով բազմացնելը վազուց գործադրում են
ամեն տեղ և համարում է ամենից հեշտ և գործնա-
կան միջոցը:

Կտրոնով բազմացնելու անհրաժեշտ պայմաններն

Ե՞ն՝ խոնաւութիւնն ու ջերմութիւնը, որոնց օգնութեամբ նա հողի մէջ արմատներ է ձգում։ Կտրոնով բազմացնելու համար հետևեալ ծանօթութիւնները պէտք է աչքի առաջ ունենալ։ ա. Կտրոնացով ընտրութիւնը, պահպաննեն ու փրկարգելը։

- բ. Գործածական կտրոնների տեսակները։
- գ. Կտրոններին տալիք երկայնութիւնը։
- դ. Արմատ ըռնել տալու միջոցները։
- ե. Կտրոնացով տնկելու յարմար ժամանակը։
- դ. Կտրոնները արմատ ըռնել տալու տեղի ընտրութիւնը։

1. ԿՏՐՈՆԱՑՈՒԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՊԻ ՓՈԽՄԴՐԵԼՅ. Առհասարակ կտրոնը ընտրում են այնպիսի վագերից, որոնք արդին կարմրել, հասունացել են և ազատ են մնացած օիգում, միլդիու, անտրաքնող և այլ հիւանդութիւններից, ինչի որ հիւանդու վագերից կտրածները թէ վատ են մննդուած լինում և թէ կարող են այդ հիւանդութիւնները իրենց հետ նոր այդին փոխադրել։

Փորձը ցոյց է տուել, որ կարճ կապամէջերով ու միջակ հաստութեամբ կտրոնները, որոնք բարունակի (բար ունեցող, պտուղ տուող շիւի, կուտրակի) մէջտեղիցն են կտրուած և ոչ երկու ծայրերից, աւելի շուտով են առնում (բռնում, արմատ ձգում) և աւելի պտղաբեր վագ դառնում։ Հաստ շիւերը դրժուարութեամբ են արմատ բռնում և աւելի վայտի շիւեր (անպտուղ շիւ, պիճ) տալիս, քան պտղատու,

մինչդեռ աւելի բարակները կարող են տհաս (ժեժ, քալ) լինել, շուտով առնել և շուտով էլ չորանալ կամ թոյլ վագ դառնալ։

Լաւ կտրոններ ունենալու համար պէտք է ընտրել և վաղօրօք նշանել այն վագերը, որոնք թէ առատ պտուղ են տալիս և թէ պտուղը ընտիր յատկութիւններ ունի։

Կտրոնը՝ եթէ ուզում ենք որ յաջող բռնէ, պէտք է կտրել տնկելու ժամանակ, երբ դեռ թարմ է և միջի ջուրը չի ցամաքել։ Բայց եթէ կտրոնները հեռի տեղից պիտի փոխադրուին, պէտք է զգուշանալ, որ նրանք ոչ շատ չորութեան ենթարկուին, ոչ էլ աւելորդ խոնաւութեան, որից կարող են բորբոսնել և առէցքները փտել։ Մօտ տեղ փոխադրելու համար 100—200 կտրոնը կամ մինչեւ 500 հատը միատեղ կապում են փսիաթի (խսիրի, հասիլի) մէջ, կտրոնների ներքեւ կրղմից թաց մամուռ կամ թրջած թաղիք (քէշա) դնում ու պնդացնում, իսկ շատ հեռի տեղ ուղարկելուց դարսում են արկղներում, նախապէս նրանց ներսը կանեփի ձէթում թաթախած թղթեր պատելով և կտրոնների շուրջը թաց մամուռով ծածկելով։


Տուն հասնելուց՝ կտրոնները պէտք է ներքնատան մէջ կամ այլ յարմար տեղ աւագում ամբողջովին թաղած պահել մինչեւ տնկելը, իսկ եթէ իսկոյն պիտի տնկել, լաւ է կտրոնների ներքեւ մասը կիսից ցած վագուկ կամ գնացկան ջրի մէջ մի երկու օր թրջոց դնել և ապա գործ ածել։

2. ԳՈՐԾԱԾԿԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Կտրոնների տեսակներից մէջ կը երենք միայն մի քանիսը—զաւածան, պարզ կտրոն, աչքակտրոն և բարդ կտրոն:

ա. Գաւազան (պատկ. 1) (զարաբալղուր, կէվազան) ասում ենք վազի բարունակի ներքեփ մասին, որ իր վերայ ունի և նախորդ տարուայ բարունակից մնացած մի փոքրիկ կտորը՝ թիթը, ճիշդ գաւազանի ձեռվ։ Գաւազանը՝ ներքեփ մասում շատ աչքեր ունենալով և նրանց մէջ եղած ծառհիւթը (մեօվը, խէժը) պաշտպանուած լինելով գաւազանի գլխից—կոմբալից, աւելի յաջողութեամբ է բոնում և արմատներ ձգում, միայն պակասութիւնը այս է, որ կոմբալը շատ անդամ որդներից կամ անձրեներից վնասուած լինելով փտում է և վնասում վազի առողջութեան. այդ վտանգի առաջն առնելու համար գաւազանի աւելորդ մասը կտրում են և թողնում միայն մի փոքր կտորը. (պատկ. 2):

բ. Պարզ կտրոնը կամ մատը (պատկ. 3) վազի մի տարուայ բարունակի այն կտորն է, որ այդեկութից յետոյ աշնանը կամ ձմեռուայ ընթացքում կտրել ենք, որ հողում տնկելուց նոյն յաջողութիւնն ունի, ինչ որ գաւազանը:

գ. Աչքակտրոնը (պատկ. 4.) ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարունակի մի փոքրիկ կտորըմիայն մի աչք վերան պահած, որ մօտ երկու վերշոկիսորութեամբ ցանում են լաւ պաշտպանուած հողի մէջ, ուր թէ շատ



երկար շիւ է ձգում և թէ խոր արմատներ։ Միայն
դրա պակասութիւնը նրա մէջն է, որ դժուար է մի
աչքի վերայ վազի բռնին (քոթուկին, բինին) ամուր
դիրք տալ։

Դ. Բարդ կտրոնը, որ մի նոր ձև է և բուրգուն-
դիայում յաջողութեամբ գործադրում էր մի քահանայ
(Լաբութէ) կայանում է նրա մէջ, որ ընտրում են
այնպիսի զուարթ վազ, որի նախորդ տարրուայ բիթի
վրայ կամ մի քանի կտրոնացուներ. այդ կտրոնա-
ցուները առանձին-առանձին չեն կտրում, այլ 3—4-ը
միասին կազմում է մի կտրոն։ Այդում տնկելուց ա-
ռաջ այդպիսի կտրոնի 3—4 շիւերից մին, որը աւե-
լի զուարթ է ու երկար՝ պահում են, իսկ մնացած-
ները յօտում (կտրում) ներքեից 3—4 աչք միայն
պահած. վազափոսի մէջ տնկելուց, այդ կարճ կտրո-
ռուածները զանազան ուղղութեամբ կռացնում են ու
թաղում, իսկ երկարը ուղղում դէպի վեր և հողով
փոսը լցնելուց յետոյ, աւելորդ մասը կտրում. բարդ
կտրոնը վազափոսի մէջ հաւի շանչի (ոտի) կերպա-
րանք է ստանում։

Այս ձևի առաւելութիւնը՝ հաւատացնում էր մեզ
քահանայ հեղինակը, մեծ է, ինչի որ 12—16 աչքից
հողում շատ արմատներ են զուրս զալիս, հե-
տեաբար և շատ մնունդ հասցնելով վազին՝ մի երեք
տարում այնպէս զօրեղանում, որ ուրիշ եղանակաւ
վեց տարում հազիւ կարող էր նոյն զարգացմանը
համնել. Մեր փորձերը ևս հաստատում են նոյնը։

3. ԿՑՐՈՒՆՆԵՐԻՆ ՏԱԼԻՔ ԵՐԿԱՑՆՈՒԹԻՒՆԸ: Արդէն վոլոցի հաստատուած է, որ վաղի կտրոնը ինչքան քիչ աշքեր ունենայ հողի տակ, այնքան գուարթ արմատներ ու շիւեր է ձգում հէնց առաջին տարին (պատկ. 6), Դրա օրինակը կարող է տալ մեզ և աշքակտրոնը (պատկ. 5). Ընդհակառակն երկայն կտրոնը՝ շատ աշքեր ունենալով հողի տակ, շատ էլ արմատներ է ձգում, որոնցից և ոչ մին լաւ չէ զարգանում և ինչքան զնում է զէպի ներքեւ, այնքան էլ արմատները կարճանում են, կորցնում իրենց աճեցական ոյժը և շատ անգամ էլ փշանում (պատկ. 7):

Պէտք է աշքի առաջ ունենալ, որ կտրոնը հողի մէջ խոր կամ երես թաղելը կախուած է գլխաւորապէս գետնի խոնաւութիւնից կամ չորութիւնից: Ինչքան հողը խոնաւ է, երես պէտք է թաղուի կտրոնը, ինչքան չոր՝ այնքան խոր. առաջին զէպքում բաւական է $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$ արշին խորութիւնը, երկրորդ զէպքում՝ $\frac{3}{4}$ -ից մինչև մի արշին խորութիւնը:

Կտրոնի խոր թաղելու միւս մնասն այն է, որ նրա արմատները զրկուում են թէ հարկաւոր ջերմութիւնից և թէ խոնաւութիւնից, որոնք դժուարութեամբ են թափանցում հողի խոր շերտերը, այն ինչ շատ երես թաղելով՝ մանաւանդ տաք ու չորային կողմերում, վագր կարող է չորանալու ենթարկուել:

4. ԿՑՐՈՒՆՆԵՐԸ ԱՐՄԱՏ ԲԴՆԵԼ ՏԱԼՈՒ ԱՐԷԽՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ: Բացի հողի յարմարութիւնը, հարկաւոր ջերմութիւնն ու խոնաւութիւնը, կտրոնները հեշտ բոնել տալու համար պէտք է նրանց այնպէս պատրաստել,

որ թէ շուտ արմատներ ձգեն և թէ մինչև արմատ բոնելը հողի մէջ չփշանան և ի գուրք չկորչի մեր տարուայ աշխատանքը:

Դրա համար պէտք է ձմեռուայ ընթացքում կրտը բոնելը վափուկ հողի կամ թաց աւազի մէջ պահել կամ թէ չէ թաղելուց՝ զանակով կտրոնի ներքեսից մի երկու տեղից երեսի կաշին բարակ շերտով հանել կամ կապամէջերի կաշին խազել, որից կտրոնի վրայ կորմնական արմատներ են զուրս զալիս և օգնում թէ հեշտ արմատ բոնելուն և թէ անելութեան:

Կտրոնները ձմեռուայ սկզբին տնկելուց, եթէ հողը չորային է, 6—8 օր լաւ է ջրում թրջոց դնել կեսից ցած, որ աշքերը ուռչին և նախապատրաստուին. Երկար ջրում պահելը վնաս է, որովհետեւ կտրոնի մէջ եղած խէցը լուծելում է և փշանում ու կորցնում աճելու ընդունակութիւնը: Բայց ձմեռուայ վերջին կամ զարնանը տնկելուց, եթէ հողը խոնաւ է շատ ու քիչ, հարկ չկայ թրջոց դնելու: Եթէ կտրոնները առաջ տընկանցում (շկօլա) պիտի մեծանան և յետոյ տեղափոխուին այդին, զրա համար անհրաժեշտ է թաղելուց յետոյ շուտ շուտ ջրելը. լաւ է կտրոնները տընկելուց յետոյ և յարդով կամ աւազով ծածկել թեթև, որ դրաի աշքերը շուտով չբացուին և տերենների միջոցաւ արմատներին հարկաւոր խոնաւութիւնը չգործիանայ և տունկը չչորսանայ:

Տնկանցում ծառելի շուրջը ևս նպաստում է կրտը բոնելը շուտ արմատ ձգելուն, բայց միենոյն ժամանակ նա վնասում է նրանց աճելութեան և ազատ շընչառութեան, եթէ շուրջը սաստիկ է:

5. ԿՏՐՈՒՆԵՐԸ ՑՆԿԵԼՈՒ ՑԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ: Կտրոնները տնկելու ժամանակը կախուած է հողի բնութիւնից. առհասարակ տաք և թեթև հողի մէջ պէտք է վաղ տնկել քան ցուլու և խոնաւ հողում: Գարնանը տնկելը, այն է մարտի վերջերին կամ ապրելի սկզբներին, աւելի նախապատիւ է քան աշնանը տնկելը այն տեղերում, ուր ձմեռը ցրտեր է անում և գարունը անձրեային է, որովհետև տաքութեան ներդութեամբ գարնանը կտրոնները շուտով են բռնում, այն ինչ աշնանը տնկելուց, թէն տունկը կարող է ձմեռուայ ընթացքում նախապատրաստուիլ տեղ անել, սակայն այս վտանգը կայ, որ կարող է ցրտահարութեան ենթարկուիլ կամ չափազանց խոնաւութիւնից փաել:

6. ԿՏՐՈՒՆԵՐԸ ԱՐՄԱՏ ԲՈՆԵԼ ՏԱԼՈՒ ՏԵՂԻ ԸՆՏՈՒԹԻՒՆԸ: Կտրոնները կարելի է թէ ուղղակի այգում՝ տնկոտել ցանկացած կարգով և թէ նախ տնկանցում՝ (շկօլայում) պահել մեծացնել և արմատ բռնելուց յետոյ այգին փոխադրել:

ա. Այգում ուղղակի տնկոտելը հետեւալ առաւելութիւնները ունի. նա ազատում է վագերը հանոտելու և կրկին տնկոտելու ծախքից և երկրորդ օգնում է նրանց շուտավոյթ աճելութեան, բայց այս անյարմարութիւնը ևս ունի, որ եթէ հողը փափուկ, սլաքարտ ու թաց չէ, այն ժամանակ կտրոնը դժուարութեամբ է բռնում կամ թէ շորանում է, որով ստիմի տարի ժամանակ կորցնել:

բ. ՑՆԿԱՆՑ ՀՅՆԵԼԸ (շկօլա, ուժուածու): ՑՆԿԱՆՑՈՂՈՄ կտրոնները տնկոտելը և յետոյ այգին տեղափոխելը աւելի ձեռնոտու և վսահելի միջոց է, որովհետև կտրոնները տարածութեան վերայ մեծ թուով կըտրոնները տնկոտերով քիչ ծախք և փոքր խնամք է պահանջում: ՑՆԿԱՆՑՈՂՈՄ կտրոնը առաջուց արմատ բռնել տալը անհրաժեշտ է մանաւանդ կտային պինդ կամ քրէճուտ ու երես հողի համար՝ կամ երբ վազը բնականարար շատ դժուար բռնւող է:

ՑՆԿԱՆՑՈՂԸ պիտի պատրաստուի որքան կարելի է թեթև, տաք ու ջրաբրի հողի մէջ. առաջուց տեղը լաւ պիտի մաքրել, մօտ $\frac{3}{4}$ արշին խորութեամբ փոքրել և տաւարի հնացած աղբով կամ ոչխարի կտիտով պարարտացնել: Ապա մի մի արշին մէկ մէկից հեռի առուներ պիտի բանալ $\frac{1}{2}$ արշին լայն և $\frac{1}{2} - \frac{3}{4}$ արշին խոր և կտրոնները՝ մէկ մէկից $\frac{1}{4}$ արշին հեռի այդ առուների պատին դիմհար տուած՝ տնկոտել ուղղահայեաց դիլքով, հողը կիսով չափ շեղադիը (դեղամ) լցնել, ոտով պինդ կոխել, որ զատարկութիւն շմայ և ապա փոսը ամբողջապէս լցնել և փոսից դուրս կտրոնի վերայ մէկ կամ երկու աչք պահած՝ աւելը կտրել (պատկ. 8):

Եթէ հողը ջրովի չէ, այլ բնականաբար թացութիւն ունի, լաւ է յարզով ծածկել կտրոնների վերմից, որ արեից չխանձուին և կամ ցրտերից ցրտահարուին՝ տարուայ ընթացքում պէտք է տնկանցը ժանգաներից մաքրել և մի քանի անգամ փոքրել:

Երբ տնկանցի տեղը ջրովի է, այն ժամանակ տնկուած կտրոնների շարքերը քիչ բարձր պիտի լի-

նին, թմբաձեւ, որ ջուրը երկու շարքերի միջից անցնի և ոչ ուղղակի կտրոնների տակը մտնէ և աշքերը փշացնէ (պատկ. 9):

Ամեն ջրելուց յետոյ, երբ հողը ցամաքում է, պիտի փորել երեսանց, որ շճաքճռուի ու թարմ մնայ: Տարուայ ընթացքում մի քանի անգամ տնկանոցը պիտի ժանդաներից (ալաղ) մաքրել:

Տնկանոցում վազերը կարելի է պահել մի կամ երկու տարի. երկու տարուայ վազը կարծիք չկայ, որ աւելի զուարթ է քան մի տարուանը, բայց այս կայ, որ շատ արմատներ ձգած լինելով՝ դժուարացնում է հանոտելը և որչափ էլ զգուշութիւն շենք բանեցնում, այնուամենայնիւ արմատները շատ ու քիչ վնասուում են, որից և դժուար բռնում այգում. դրա համար էլ նախապատուելի է կտրոնը մի տարի միայն պահել տնկանոցում:

Գլ. Ե.

ՎԱԶԵՐԻ ՏԱՐՏՈԹԱՂ ԸՆԵԼԼ

Տաշտաթաղ անելը (provignage, ծիտնա անել, նիւգանդա քցել, քցան անել, ցաքանել, գոռել) վազեր բազմացնելու այն ձևն է, որ վազի այս ու այն շիւը կամ բարունակը առանց վազից կտրելու հողի տակ թաղում ենք և մի երկու աշք գետնի երեսից դուրս բերում ու այդպիսով նրա վերայ թէ արմատներ և թէ շիւեր են առաջ զալիս:

Վազերի այս ձևով բազմացնելը, ինչպէս և կըտրոնի ժամանակ, պահպանում է վազի և պտղի բոլոր յատկութիւնները և այն առաւելութիւնը ունի, որ տաշտաթաղ եղած բարունակը թէ յաջողութեամբ է բռնում և թէ շուտ աճում, ինչի որ նա սնունդ է առնում ոչ միայն իւր արմատներից, այլ և մայր վազից մինչև նրանից բաժանուիլը:

Տաշտաթաղով վազեր բազմացնելու համար պէտք է աշքի առաջ ունենալ հետևեաները.


1. Տաշտաթաղի զանազան ձեւերը:
2. Տաշտաթաղի յաջող ժամանակը:

Ա. ՏԱԶՑԱԹԱՂԻ ԴՈՒՆԱԾԱԿԱՆ ՀԵԽԵՐՆ ԵՆ՝ ա. Պարզ
ՄԱՉՄԱԹԱՂ, բ. Ամբողջ Վազով Մաշտաթաղ, գ. Բարդ
կամ ՀԻՆԱԿԱՆ Մաշտաթաղ և դ. Գլխիվայր Մաշտա-
թաղ:

Ա. ՊԱՐԶ ՏԱԶՑԱԹԱՂ (provin par marcotte simple) գործ են դնում, երբ ուզում են հին վազի օգնու-
թեամբ մի նոր վազ գուրս բերել շարքի մէջ եղած
պակաս տեղը լցնելու և կամ թէ վազի վերայ մի
ուրիշ տեսակը պատուաստելու:

Պարզ Մաշտաթաղի համար մայր վազի տակից
մինչև ցանկացած տեղը $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$ արշին խոր և այդ-
շափ էլ լայն մի փոս են փորում և վազի բարունակ-
ներից այն՝ որ աւելի երկայն ու զռւարթէ, կռա-
ցնում են, որքան կարելի է բունին (քոժուկին) մօտ
և պառկեցնում փոսի մէջ մի ծայրը ուղղելով դէպի
վեր, հողով պինդ ծածկում, փոսը լցնում և բարու-
նակի վերայ գետնից դուրս երկու աչք պահելով, ա-
ւելը կտրում (պատկ. 10). Բարունակը Մաշտաթաղ
անելուց յետոյ, նրա աչքելը՝ մայր վազին կպած տե-
ղից մինչև հողի մէջ մտած տեղը, պէտք է վչացնել,
որ շիւեր ձգելով շիուլացնեն Մաշտաթաղ եղածը:

Տաշտաթաղ եղած շիւը մայր վազից պէտք է
կտրել հեռացնել երկու տարուց յետոյ, որ նա ապրի
իւր հաշւով: Ջուտ կտրելը այն վնասն ունի, որ վա-
զի աճելութիւնը դանդաղանում է և պտղաբերութիւ-
նը նուազում: Մայր վազից կտրելուց յետոյ լաւ է պա-
րարտացնելը: Երբ Մաշտաթաղ անելու շիւը կարճ է
և չէ հասնում նշանակած տեղը, այն ժամանակ կամ



Գ. ՀԻՆԱԿԸՆ ՏԱԶՄԹԱՂ (provignage chinois): Այս ձեփ նպատակն է արմատաւոր կտրոններ ունենալ կարճ ժամանակում և այն առանց կորուստի: Դրա համար մօտ 6 վերշոկ խոր մի երկայն փոս են փորում վազի տակից և մի երկայն բարունակ ընտրելով պառկեցնում են մէջը (պատկ. 12) և մի քանի տեղերից կեռեր խփում, որ անշարժ մնայ և հողի երեսը չդուրս գայ. փոռւած բարունակի վերայ մօտ երկու վերշոկ հաստութեամբ հող են լցնում և փշացնում այն բոլոր աչքերը, որոնք կպած են մինչև հոդի մէջ մտած տեղը:

Վազը երբ բացւում է, գետնաթաղ եղած բարունակի բոլոր աչքերից շիւեր են դուրս գալիս և երբ համնում են 4—5 վերշոկ երկայնութեան, փոսը ամբողջապէս լցնում են առաջուց լաւ պարարտացրած հոդով և կամ ուղղակի հնացած աղբով պարարտացնում:


Տարուայ ընթացքում պէտք է խնամք տանել թէ չըել և թէ արեից պաշտպանել: Այգում տնկելու ժամանակ, աշնանը կամ յաջորդ գարնանը, այդ գետնաթաղ հին բարունակը զգուշութեամբ բանում են նրա վերայ արմատ ձգած նոր շիւերը առանձին կտրում և իրեւ արմատաւոր կտրոն թաղում ցանկացած տեղը:

Դ. ԳԼԽԻՎԱՅՐ ՏԱԶՄԹԱՂ: (provin par versadi): Այս ձեփ նպատակն է պակասած վազի տեղը լցնել առանց մայր վազը տեղից շարժելու: Դրա համար ընտրում են այն վազի բարունակներից մին, որ աւելի մօտ է

պակասած տեղին և կամարաձև կռացնում են առաջուց փորած և պարարտացրած փոսի մէջ և հողով ծածկում: Հողից դուրս այդ թաղուած շիւի վերայ պահում են 2—3 աշբ, իսկ մնացածները բոլորը թափում են (պատկ. 13):

Յաջորդ կամ երկրորդ տարին թաղուած շիւը պէտք է մայր վազից կտրել հեռացնել, որ իւր հաշուին ապրէ: Տաշտաթաղի այս ձեռ ընտրելի է քանի պարզ ձեռ, մանաւանդ խոնաւ ու պարարտ հողերում:

Ե. ՏԱԶՄԹԱՂ ՍՆԵԼՈՒ ԺԾՄՄՆԱԿԲ: Տաշտաթաղի յաջող ժամանակը վազերի տերեկթափից անմիշապէս յետոյ է, որպէսպի վճմեռուայ ընթացքում նա կարողանայ նախապատրաստուել և շուտով արմատներ ձգել, բայց այն տեղերում, ուր հողը սաստիկ թաց է ձմեռը, պէտք է տաշտաթաղ անելը գարնանը կատարել, որ աչքերը խոնաւութիւնից գետնի տակ չփշանան:



պէս ամեն այգետէր պէտք է զիտենայ զլխաւոր պայմանները, որոնք կապ ունին պատուաստման եղանակի և նրա յաջողութեան հետ:

Այդ պայմաններն են՝

1. Վազի տարեքը, երբ կարող է պատուաստիլ:
2. Պատուաստացով ընտրութիւնը, կտրելն ու պահպանելը:

3. Պատուաստելու ժամանակը:

4. Վազի համար ընդունուած պատուաստի ձեւերը:
5. Պատուաստելու գործիքները:
6. Պատուաստի կապելն ու ծեփելը:
7. Պատուաստներին տալիք ինսամքը:
8. Պատուաստելու գործողութեան պայմանները:

1. ՎԱԶԻ ՏԱՐԵՔԸ ԵՐԲ ՆԱԿԱՐՈՂ Է ՊԱՑՈՒԱՍՏՈՒԽԼ: Իբրև կանոն կարելի է ընդունել, որ վազը ամեն տարեկում էլ կարող է պատուաստուիլ, սկսած առաջին տարուանից, երբ կտրոնը թաղում ենք հողում, մինչև վազի երկար տարիներից յետոյ թուլանալը, պառաւիլը, երբ պահանջուում է վազը նորից գուարթացնել, որ նա պտղաբերի։ Մական այդ երկայն շրջանում ամեն ժամանակ նոյն յաջողութիւնը չէ ներկայացնում պատուաստելու գործողութիւնը կատարել, օրինակ պարզ կտրոնի վերայ պատուաստելը և իսկոյն տնկելը աւելի քիչ յաջողութիւն ունի քան արմատաւոր կտրոնի վերայ և այդ ոչ թէ նրա համար, որ կրտրոնի վերայ լաւ չէ պատուաստում, այլ կտրոնը ինքը հողի մէջ գուարութեամբ է բռնում։ Ինչ վերաբերում է արմատ բռնած կտրոնների վերայ պա-

ԳԼՈՒԽ Զ.

ՎԵԶԵՐԻ ՊԵՏՈՒԱՍՏԵԼԸ

Պատուաստելը (le greffage, դալամ անել, ջալդամ անել, պատրիս անել կամ մատ դնել) վազեր բազմացնելու այն գործողութիւնն է, որով վազի մի փոքրիկ կտորը փակցնելով մի ուրիշի վերայ, ստանում ենք այդ փակցըած կտորի բոլոր յատկութիւնները ունեցող մի նորը։

Վազը՝ որի վերայ պատուաստում ենք, ասւում է պատուաստակալ, իսկ կտորը, որ փակցնում ենք՝ պատուաստացու (մատ, դալամ, պատրիս):

Վազերը պատուաստելու նպատակն է վազի տեսակները ազնուացնել, ուշ պտուզ բերողները առաջ ձգել, նուազ շաքար ունեցողներին՝ աւելի քաղցրութիւն ունեցողները փոխարինել, հին վազերը՝ որոնք ուժից ընկել են, նորոգել ու մատաղացնել և վերջապէս տեսակների փոխելով՝ այս ու այն հիւանդութեան առաջը առնել, ինչպէս որ գործադրուում է եւրոպայում միլիունի և ֆիլօքսերի դէմ։

Մեզանում կովկասում վազերի պատուաստելը դեռ մասնաւոր նշանակութիւն ունի, բայց և այն-

տուաստելուն, դիտուած է, որ ինչքան վազը մատաղ է (ջահիլ), օրինակ մի տարուայ, այնքան նրա վերայ մատը լաւ է բռնում, քան երկու երեք տարուայ վազի վերայ:

2. ՊԱՏՈՒՍՏԱՑՈՒԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ԿՏՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՊԱՀՊԱՆԵԼԻ:

ա. Պատուաստացուի ընտրութինը: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ պատուաստացուն կամ մատը պահպանում է մայր վազի (որից ինքը կտրուել է) գրեթէ բոլոր յատկութիւնները, ուստի և նրա ընտրութիւնը պէտք է խնամքով լինի: Պատուաստացուն՝ պիտի կտրել վազի առողջ և ամենից շատ պտուղ տուած և լաւ ճիթեր ունեցած բարունակներից: Այդ բարունակները պէտք է լաւ հասած կարմրած լինին, աչքերը առողջ, միջակ մեծութեամբ և ծուծը (միջուկը, գուզակը) քիչ:

բ. Պատուաստացուի կտրելու ժամանակը: Փորձը ցոյց է տուել, որ երբ պատուաստացուն աճելութեամբ յետ է մնացած պատուաստակալից, այն ժամանակ աւելի յաջող է բռնում. դրա համար էլ պատուաստացուն պէտք է կտրել վազը ջուր ընկնելուց առաջ և պահել մինչև պատուաստ անելը:

գ. Պատուաստացուի պահպանելը: Որպէս զի պատուաստացուները չփշանան մինչև պատուաստելը, յիտուն-յիտուն կամ հարիւրը մի տեղ կապելով՝ զնում են ներքնատանը մէջ, քիչ թաց աւազով ծածկում, ինչպէս որ կտրոնները կամ մօտ երկու արշին խորու-

թեամբ մի փոս են փորում հիւսիսահայեաց մի պատի տակ և նախ աւազով, ապա հողով ծածկում:

Պատուաստելուց առաջ պէտք է տեսնել, որ մատները վչացած չլինեն, դրա համար կաշին քիչ պլոկում են կամ աչքը պոկում, եթէ տակը սևացած ու չորացած է, ասել է նաև կենդանութիւն չունի և անպէտք է: Բայց աւելի հաստատուն միջոցը այս է. կապուկների միջից հանում են մի քանի պատուաստացուներ, զնում են ջրով մի ամանի մէջ և մի քանի օր պատուհանում արեկ դիմացը կամ թէ վառաւարանի մօտ պահում: Եթէ աչքերը ուռչում են և բացում կամ կտրոնների վերևից կտրելուց՝ ջուր է կաթում, ասել է լաւ է պահպանուած և կարելի է դործ զնել:

3. ՊԱՏՈՒՍՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ: Պատուաստելու ամենայաջող ժամանակը գալնանն է, մարտից մինչև մայիս ամիսը, երբ վազը կենդանանում է և ծառհիւթը ըսկում խաղալ: Այդ միջոցին մատը շուտով է կենդանանում, բանում և վէրքը առողջանում, այն ինչ աշնանը պատուաստելով, մատը կարող է թէ ցրտահարութեան ենթարկուիլ և թէ անձրեների, որից կոծիկը (մածոյցը) թափում է, պատուաստը բացում և դեռ լաւ շբոնած՝ փշանում:

Պատուաստելը պիտի կատարել մեղմ ու քիչ ամպամած օրերին. առատ անձրեներն ու հիւսիսային չոր քամիները վնասակար են պատուաստի համար, չափաւոր խոնաւութիւնը ընդհանակառակն նպաստաւոր է, մանաւանդ եթէ եղանակն էլ տաք է:

4. ՎԱԶԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՊԱՏՈՒՍՍԻ ՀԵՒԵՐԸ:
Նախքան պատուաստելու զանազան ձևերի մասին խօսելը, յիշենք որ վազը միւս պտղատու ծառերից պատուաստման եղանակի մէջ որոշում է նրանով, որ պատուաստը կատարւում է ոչ թէ հողից դուրս, այլ հողի տակ, որպէս զի նա դեռ չբռնած՝ բաց օդի տակ շորանայ:

Վազերը պատուաստելու աւելի գործածական և ընդունուած ձեերն են՝

ա. Հասարակ ձեղով պատուաստ:

բ. Լիածեղ պատուաստ:


գ. Անզիական պատուաստ:

դ. Շամփենի պատուաստ:

ե. Հեծեալ պատուաստ:

զ. Կորոն-պատուաստ:

Ա. ՀԱՍԱՐԱԿ ՁԵՂՈՎ ՊԱՏՈՒԱՍՏ: (greffe en fente ordinaire): Հասարակ ձեղով պատուաստը ամենահին ու գործածական ձեն է վազերի համար: Նա կատարւում է հետեւեալ կերպով. Փորում են պատուաստակալի (որի վերայ որ մատ պիտի դնեն) շուրջը մինչև որ բացւում են նրա հաստ արմատները (տակոիները), ապա կտրում են քոթուկը հորիզոնական (դէպի կողք ուղիղ) ձևով՝ զետնի երեսից մի վերշոկաչափ ցած և լաւ հարթում կտրուածքը. ապա եթէ քոթուկը հաստ է սղոցով, եթէ բարակ է, դանակով զգուշութեամբ ճղում են և նրանից մի փոքրիկ շերտ հանում այն չափով, որ մատը կամ պատուաստացուն կարողանայ



մէջը մտնել (պատկ. 14): Դրանից յետոյ պատրաստում են պատուաստացուն, որը կտրում են ուզած բարունակից երեք աչք վերան պահած. դրա ներքեկի աչքի երկու կողքերից մինչև ծայրը դանակի բերանի ձևով տաշում են, այնպէս որ տաշուածքը ետևի կողմից լայն է մոռամ, իսկ առաջից նեղ և քանի գնում է ներքել բարականում է և սուր ծայրով վերշանում (պատկ. 15). բացի այդ՝ տաշուածքը այնպէս պիտի լինի, որ ծուծը—զուզակը բաց շլինի երկու կողմից, մի կողմը քիչ խոր կարելի է տաշել, միւսը երես, որ մի աստիճան ամրութիւն ունենայ:

Այդ պատրաստութիւնից յետոյ պատուաստացուն խրում են պատուաստակալի մէջ, դրաի կաշին (կեղեղ) կաշուն բռնեցնելով եթէ որ պատուաստակալի կաշին շատ հաստ չէ. հակառակ դէպքում պատուաստացուին քիչ թեք դիրք են տալիս:

Երբ պատուաստակալը շատ հաստ է, այն ժամանակ կարելի է վերոյիշեալ ձևով երկու պատուաստ դնել մէկմէկի հանդէպ, որ եթէ երկուսը բռնում են, մին կտրում են յաջորդ ձմեռը (պատկ. 16): Բայց եթէ պատուաստակալը հաստ չէ, այդ դէպքում դանակով նրա կողքից մի փոքր ճղում են հանում և պատուաստացուն մէջը անցկացնելով կապում (պատկ. 17):

Բ. Լիսանդ ՊԱՏՈՒՍՏ: (greffe en fente pleine): Այս ձևը (պատկ. 18) աւելի գործածական է մի տարեկան վազերի համար, հեշտ է և մեծ յաջողութեամբ բռնում է, եթէ լաւ է կատարւում պատուաստումը:

Այս ձևի համար նախ պատուաստակալը պէտք է


բաց անել և գետնի երեսին հաւասար կտրել և դանակով մէջ տեղից ճղել: Յետոյ ընտրում են այնպիսի պատուաստացու, որ պատուաստակալի հետ համահաւասար հաստութիւն ունենայ, դրա երկու կողքից հաւասար սեպածև տաշում են և կոխում պատուաստակալի մէջ. խնամք տանելով, որ երկուսի դրսի կաշիները մէկ մէկի բռնեն, բայց երբ մէկն ու մէկի կաշին հաստ է, այն ժամանակ պատուաստացուին քիչ թեք դիրք պէտք է տալ:

Պատուաստացու կտրոնը պէտք է երկու կամ երեք աչք ունենայ վերան և վերի աշքից քիչ բարձր թեք կտրուած, որ անձրեւ չկանգնէ ու տակի աշքը փչացնէ:

Գ. ԱՆԴՀԻՍԿԱՆ ՊԱՏՈՒԱՍՏ: (greffe en fente anglais):
Պատուաստների մէջ ամենից յաջողութեամք բռնողը անդղիական պատուաստն է, միայն դրա համար թէ պատուաստակալը և թէ պատուաստացուն մի և նոյն հաստութիւնը պիտի ունենան, ասել է պատուաստը պիտի կատարուի մատաղ վազերի վերայ:

Պատուաստելու համար բաց են անում վազը, վետնի երեսին հաւասար ուղիղ կտրում, յետոյ սուր դանակով շեղադիր տաշում դէպի վեր և մէջ տեղից ուղղահայեաց ճղում. նոյնը անում են և պատուաստացուի վերայ, աշխատելով որ ճեղը միշտ աշքի ներքեր լինի, ապա լեզուակները միմեանց մէջ մտցնելով՝ խըրում են մինչև որ շեղադիր կողմերը գալիս միմեանց լաւ փակում են (պատկ. 19—20):

Եթէ պատուաստը լաւ է կատարուած՝ այն ժամանակ հարկ չկայ կապերու, եթէ թոյլ է, որից կա-



ըող է դատարկութիւն մնալ ճեղերում և վախ կայ տեղահան լինելու, լաւ է կապել:

Այս ձեփ պակասութիւնը նրա մէջն է, որ զամպենի պատուաստի պէս պատուաստացուի տակից արմատներ են ձգում և պատուաստակալից անկախ նրան սննդում:

Անգղիական պատուաստը սովորաբար կատարում են շիւերի վերայ, որ և թաղում են գետնի տակ և յաջորդ տարին մայր վազից կտրելով շիւը հեռացնում:

Դ. ՇՄՊԵՆԻ ՊԱՏՈՒՍՏ: (greffe Champin): Սա միենոյն անգղիական պատուաստն է, միայն այն տարբերութեամբ, որ պատուաստակալը և պատուաստացուն փոխանակ ուղիղ միջից ճղելու, 2/3 մասիցն են ճղում և հաստ կողմը շեղաղիք տաշում մինչև ճեղի ծայրը և միմեանց մէջ մտցնում (պատկ. 21):

Այս ձեփ պակասութիւնը նրա մէջն է միայն, որ պատուաստացուի տակից արմատներ են դուրս գալիս և նրան բոլորովին ազատում այն գերից, որ պիտի կատարէր պատուաստակալի օգնութեամբ, ուրիշ խօսքով մատը սննդում է ոչ թէ պատուաստակալից, այլ մատի տակից դուրս եկած մազմզուկներից, որոնք կարող են վատ ազդեցութիւն ունենալ նրա վերայ:

Ե. ՀԵՖԵԱԼ ՊԱՏՈՒՍՏ (greffe à cheval): Պատուաստի այս ձեփ (պատկ. 22) նոյնն է ինչ որ լիաճեղ պատուաստի ժամանակ, միայն հակառակ դիրքով. այսինքն պատուաստակալը տաշում է երկու կողմից սե-


պաձև և մտցնելում պատուաստացուի մէջ, որը մէջ տեղից ճեղ ունի:

Հեծեալ պատուաստը կատարւում է նոյնպէս մատաղ վագերի վերայ, եթի պատուաստական ու պատուաստացուն նոյն հաստութիւնը ունին:

Զ. ԿՏՐՈՆ ՊԱՏՈՒՍՏ: (greffe boutouré): Այս պատուաստը հետեւեալ ձեռով է կատարւում. բայց են անում պատուաստակալը և նրա վերևից շեղազիր կը դրում և մէջտեղից ճղում, յետոյ վերցնում են գաւազանով մի կտրոն և նրա կապամիջից (մի աչքից մինչև միւս աչք ընկած տարածութիւնը) մի լեզուակ են բաց անում դէպի վեր ճղերով և այդ լեզուակի կաշին հաներով խրում են լեզուակը պատուաստակալի ճեղի մէջ (պատկ. 23, 24, 25):

5. ՊԱՏՈՒՍՏԵԼՈՒ ԳՈՐԾԻՔԸ: Պատուաստելու ժամանակ գործածական գործիքները հետեւեալներն են՝ այգու մկրատ (պատկ. 26—27), այգեպանի սղոց մանր ատամներով (պատկ. 28), երկաթէ գուր՝ ճեղը բաց անելու համար (պատկ. 29), թոլսր (քլունդ) կամ բան վագերի շուրջը բանալու համար (պատկ. 30, պատուաստի դանակներ (պատկ. 31—32) և յօտոց (պատկ. 33):

Բացի այդ ձեռքի գործիքները, արտասահմանում այս ու այն պատուաստը կատարելու համար կան յատուկ գործիքներ, որ շափազանց հեշտացնում են գործը. օրինակ Գոմիի գործիքը՝ լիամեղ պատուաստի համար, Պլտիի գործիքը՝ անզլիական պատուաստի համար և այլոց: Այդ գործիքների անյարմարութիւնը



միայն նրա մէջն է, որ չէ կարելի գործ ածել հաստ
վազերի համար և այն վազափոսերում, այլ պէտք է
պատուաստացուները և պատուաստակալները մի շա-
փի հաստութիւն ունենան և վարպետ մարդի ձեռքով
կատարուի գործը:

ՊԱՏՈՒԱՍՏԻ ԿՄՊԵԼՆ ՈՒ ԾԵՓԵԼԸ: Պատուաստը երբ
կատարում է վազի քոթուկի վերայ, այն ժամանակ
այնքան երկիւղ չկայ, որ պատուաստացուն կամ մա-
տը թուղանայ, ընկնի, բայց բարակ ու մատաղ վազի
վերայ, ինչքան էլ լաւ կատարուած շինի պատուա-
տելը, այնուամենայնիւ պէտք է կապել, որ թէ քա-
միներից և թէ այլ պատճառներից տեղահան շինի:
Պատուաստը կապելու համար գործ են ածում
թոկ (շպագատ), ծիլուզ (մաշալկա, խասիլ) և կառչու-
կի օղակներ:

Թոկով (քողով) պատուաստի կապելը մեծ գոր-
ծածութեան մէջ է. դրանով թէ պիրգ է կապւում և
թէ դիմացկան է չորային տարիներին, բայց երբ տե-
ղը խոնաւ է, որից կարող է փտել, լաւ է կուպրոտ
անել, Պատուաստը մի անդամ բռնելուց յետոյ, այդ
թոկը պիտի կտրել, որ վազը հաստանալով թոկը ին-
քը վազին չկտրէ:

Ծիլուզով կապելը աւելի յարմարութիւն ունի,
ինչի որ նա ժապաւէնի (լինտի) պէս տափակ գիրք
ունի, միայն պակասութիւնը նրա մէջն է, որ շուտով
է փտում անձրևային տարիներում. զրա առաջը առ-
նելու համար խորհուրդ են տեսնում գործածելուց՝ ա-

ոաջ պղնձարչասպի (մէծին կուպօրօս) զրի մէջ թըղոց դնել և յետոյ գործ ածել: Կառլուկի օղակները, որ առաջներում գործածութեան մէջ էին, այժմ թանգութեան պատճառաւ թողնուած են, միայն քիչ գործ են ածում կառւչուկի թոկը, որ ճիշովից ու հասարակ թոկից պիրդ է և այն առաւելութիւնը ունի, որ առածզական լինելով պատուաստը հաստանարուց՝ նրան չէ կտրում և ինքըն էլ հեաը ձգուում լայնանում է: Վերջին ժամանակներս սկսել են գործ դնել և եղեգնեայ (զամիշի) օղակներ, միջվերշոկ երկայնութեամբ, որ անցնում են պատուաստին. զրա առաւելութիւնը նրա մէջ է, որ վազը հաստանարուց՝ օղակը տրաքուում է և բացուում ու չէ խեղդում նրան. եղեգնեայ օղակը գործադրում են անգղիական պատուաստ անելուց:

Պատուաստը կապերուց յետոյ, նրան պէտք է ծեփել: ծեփելու նպատակն է պատուաստի կտրուածքը ծածկել, որպէսզի շուտով շորանարուց ու արանքները անձրեաջուր մտներուց ազատ մնայ: Այդ կարևոր է, մանաւանդ երբ պատուաստը կատարուում է քարոտու քընոտ տեղերում և այն քոթուկի կամ հաստ վազը վերայ, ուր շատ անգամ բաց վէրքեր են մնում: Բայց անգղիական կամ լիաճեղ պատուաստի համար հարկ չկայ ծեփելը, մանաւանդ եթէ շրջապատող հողը թարմ ու վիխրուն է:

ծեփանքի (կոծիկ) համար ամենագործածական նիւթը կաւացեխն է, որը պիտի մաղած, մանը քարերից ազատուած լինի և լաւ տրորած, խմոր շինած: Կաւացեխը ոչ ջրալի պիտի լինի, որ թափուի,

և ոչ էլ պինդ, որ ճաքճքուի, զրանով բարակ քսում են վէրքը ծածկում, որ օդի ներգործութեան տակ չընկնի:

Կաւացեխին լաւ է խառնել և տաւարի աղբը:

7. ՊԱՏՈՒԱՍՏԵՐԻՆ ՑԱԼԻՔ ԽՆԱՄՔԸ

Ա. ՊԱՏՈՒԱՍՏԸ ՀՈՂԵԼՆ ՈՒ ՊԱՎԱՆՆԱՅ: Ինչպէս որ վերը յիշեցինք, վազի պատուաստը կարող է միայն յաջողութիւն ունենալ հողի տակ. զրա համար էլ պատուաստակալը միշտ զետնի երեսից քիչ ներքեւ են կտրում և կամ զետնին հաւասար և այնպէս վերան պատուաստում:

Պատուաստը կապերուց և ծեփերուց յետոյ, ըգպուշտեամբ հողով թմբածե ծածկում են մինչև պատուաստացուի վերի աշքը, որ թէ արեից ու ցըրտից պաշտպանուի և թէ տեղահան չինի քամիներից: Լաւ է և վազափոսը լցնելուց առաջ՝ պատուաստակալին մի կարճ ձող նեցուկ (զազուխ, սարա, զայտ) տալ, որ առաջին տարին պատուաստից դուրս եկած շիւերը ծանրութիւն չանեն և պատուաստը թուլցնեն կամ ծեփանքը քանդեն:

Բ. ՊԱՏՈՒԱՍՏԱԿԱՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ՋԻՒԵՐԻ ԵՒ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՑ ԱԼԱ ՄԱԶԱԹԵԱՐԻ ՎԵՐ ՏԱԼ (ԿԱՐԵԼ): Պատուաստը անելուց յետոյ, ամառուայ ընթացքում ամիսը մի անգամ պէտք է աշքից անցնել և պատուաստակալից դուրս եկած շիւերը (հարամին, պիճերը) տալ և պատուաստացուի — մատի-վրայ բսած մաղաթելերը (սախկալները, (մը-

ուղեքը) Փշացնել, ապա թէ ոչ այդ մանր արմատների գարգանալով՝ նուազում է պատուաստակալի աճելութիւնը, իսկ պատուաստացուն հաստանալով, լայնացնում է պատուաստի ճեղը և շատ անգամ պոկ դալիս; Իսկ երբ անուշաղիք ենք թողում քոթուկից դուրս եկած շիւերը (հարամին), այն ժամանակ նրանք աճելով խում են պատուաստացուից դուրս եկած շիւերի բաժին հիւթը, որից և նուազում ու շատ անգամ վիշանում են նրանք: Իսկ օգոստոս ամսից սկսած, երբ տեսնում են, որ պատուաստը չէ բռնել, պէտք է տակից դուրս եկած շիւերը պահնել, որ յաջորդ տարին նրանց վերայ կարելի լինի անգիտական պատուաստ կատարել: Բայց երբ այդ շիւերը ևս անբաւարար են, այն ժամանակ պատուաստակալ քոթուկը պիտի կըտըլ դետնի երեսից աւելի ցած և նորից պատուաստել թէև այդ շատ քիչ է յաջողութիւն ունենում:

8. ՊԱՏՈՒԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Ա. ԿՑՐՈՒՔ ՎԵՐԱՑ ՊԱՏՈՒԱՏ: Կտրոնի (չուբուխի) վերայ պատուաստելը՝ նայելով տեղին ու կիմային, զանազան հետևանքներ է տուել. հարաւային տաք կողմերում, ուր չորութիւնը աւելի է, քիչ է յաջողում քան խոնաւ ու բարեխառն տեղերում, ինչի որ խոնաւութեան ժամանակ, թէ պատուաստն է հեշտութեամբ բռնում և թէ կտրոնը շուտ արմատներ ձգում: Այդ հանգամանքը աշքի առաջ ունենալով, հարաւային տաք կողմերում ևս կարելի է յաջողցնել կտրո-

նի վերայ պատուաստը, եթէ կտրոնը նախ տնկանոցում խնամուի:

Դրա համար մօտ վերշոկ երկայնութեամբ կըտրոններ են պատրաստում և նրանց վերայ մի աշքով միայն անգլիական պատուաստ կատարում (պատկ. 19.): և վերքը ծածկում են արճճի թերթով. վրայից կապում են քօղը կամ ճիրոպը ու տնկանոցում տնկոտում և վերշոկ լայն և 6 վերշոկ խոր փոսերի մէջ, որ առաջուց պատրաստուած և մէշերն էլ փոքր ինչ աւագ ածած պիտի լինի, որ հեշտացնում է արմատ բռնելը: Պատուաստների վազաշարքերը փոքր ինչ ճանառի պիտի լինին իրարից, որ մէշտեղից ջրի ճանառապարհ ունենան: Պատուաստելուց յետոյ վազափոսերը ամբողջապէս պիտի լցնել և պատուաստի գլուխը ևս թեթև կերպով հողի տակ թաղել, որ շշորանայ և միևնոյն ժամանակ դրսից տաքութիւն խտանայ, որ անհրաժեշտ է նրան. Զրելը պէտք է երեսանց լինի, որ հողը չցրտանայ: Կտրոնի վերայ պատուաստելու առաւելութիւնը նրա մէջն է, որ ամբողջ ձմեռուայ ընթացքում կարելի է տանը գործիքների միջոցաւ մեծ քանակութեամբ պատրաստել ու աւազում պահել մինչև տնկանոց փոխադրելը:

Փիլօքսելայից փշացած այգիների վերականգման մէջ՝ այդ ձեր հեշտ ու ձեռնոտուն է համարուած, որովհետեւ հենց առաջին տարին վազը թէ արմատ է բրոնում և թէ պատուաստում ամերիկական դիմացկուն կտրոնների վերայ:

Յ. Արմատ բռնած զԱԶԻ ՎԵՐԱՑ ՊԱՏՈՒԱՏ: Արմատ բռնած վազի վերայ պատուաստը յաջող է բռնում քան կը տրնի, ինչի որ աւելի յարմարութիւններ ունի, պատուաստակալը արդէն արմատ բռնած լինելով:

Արմատաւոր վազի վերայ պատուաստելը կարելի է կատարել՝

1. Այգում.

2. Տնկանոցում.

3. Տանը արմատ բռնած ու հանած վազի վերայ:

ա. Այգում մի տարեկան արմատաւոր վազերի վերայ պատուաստելը այն առաւելութիւնը ունի, որ վազը տեղահան չէ լինում, որով պտղաբերութիւնը առաջ է ընկնում, միայն երբ նոյն տարին պատուաստը չէ բռնում, այն ժամանակ վազերի մէջ անհաւասրութիւն է ընկնում, թէև դրա առաջը ևս կարելի է առնել, միևնոյն ժամանակ տնկանոցում պատուաստած վազեր պահելով, որոնցից կարելի է շբռնածների տեղը լրացնել:

բ. Տնկանոցում արմատ բռնած վազերի վերայ պատուաստելը և մի տարուց յետոյ հանել այգին փոխագրելը նախապատիւ պիտի համարել միւսներից. ինչի որ այգում մենք թէ համահաւասար տարիքով վազեր կունենանք և թէ քիչ ծախք կնատէ փոքր տարածութեան վերայ նախօրօք խնամելը քան այդում: Ճիշդ և տնկանոցից փոխադրելուց փոքր ինչ

դժուարութիւններ կան, այն է այգում փոսերը պարարտացրուած պիտի լինին և տարուայ ընթացքում իւրնամքը անպակաս, միւս կողմից այդպիսի վազերը պատուաստելուց՝ երկու տարի յետոյ են պտուղ տալիս, այն ինչ տեղն ու տեղը այգում պատուաստելով հենց առաջին տարին պտուղ կտար, այնուամենայնիւ տնկանոցում պատուաստելը անհրաժեշտ է, երբ այգու հողը կաւային է, պինդ ու ցուրտ, ուր պատուաստը առհասարակ շատ դժուար է բռնում:

գ. Տանը պատուաստելը արմատ բռնած և հանած վազերի վերայ կամ քոթուկի տակից զուրս եկած արմատաւոր շիւերի վերայ, մի կողմից լաւ է, որ պատուաստը կարելի է ձմեռուայ ընթացքում և այն զործիքների միջոցաւ կատարել, բայց անյարմար է նրանով, որ երկու անգամ տեղահան լինելով դժուարութեամբ է զարգանում և բացի այդ՝ պատուաստներից շատերը վշանում են: Տանը պատուաստած վազերը լաւ է մի տարի ևս տնկանոցում պահել և յաջորդ տարին լաւ բռնածները այգին փոխադրել:

Երես հողում ցանուածը: Հողի այս կամ այն խորութեամբ փորելը կախուած է տեղից ու կլիմապական պայմաններից. ընդունուած է հողը փորել 8 վերշոկից ըսկած մինչև 1 արշին և աւելի խոր: Այն տեղերը, ուր արդէն վազը գոյութիւն ունի, խոր կամ երես փորելը պիտի հետեւ տեղական աւանդական սովորութեան:

Երբ հարկաւոր է մի հողում հին վազերի տեղ նորերը ցանել, այն ժամանակ վազափոսերը հինից աւելի խոր պիտի փորուին, որպէսզի արդէն մաշուած հողից ներքև գտնուելով նոր արմատները կարողանան դիւրութեամբ սննդուիլ:

Բ. չողի խորութիւնը: Հողը կարելի է փորել թէ ձեռքի միջոցաւ բահով և թէ արօրով: Բահով փորելը աւելի լաւ է քան արօրով փորելը, որովհետեւ հողը աւելի է փշուում և իրար խառնուում, բայց այն տեղերը, ուր մշակը թանգ է, այդիները ընդարձակ, թանգ է նստում, այնինչ արօրով թէ անհամեմատ աժան է և թէ շուտ է փորուում: Բահը անհրաժեշտ է քարոտ տեղերուում, ուր արօրը դժուարութեամբ է բանում:

Սակայն ինչով որ հողը չփորուի, պէտք է ի նըկատի ունենալ, նախ՝ որ հողի երեսի շերտը իր պարարտացուցիչ մասերով ընտիր է քան ներքեկի շերտը. ըարտացուցիչ մասերով ընտիր է քան ներքեկի շերտը. ներքեկորդ՝ որ ներքեկի շերտը կարելի է օգտակար դարելքը՝ ողի ներքեկի շերտը կարելի է օգտակար դարելքը՝ ներքել օղի ներգործութեան տակ թողնելով. երրորդ՝ ներքեկի շերտը կարելով երեսի շերտի հետ՝ իր որ ներքեկի շերտը խառնելով երեսի շերտի հետ կամ անուրդով լաւացնուում է նրան. հետեւաբար փորեխառնուրդով լաւացնուում է նրան.

ԳԼ. Է

ԱՅ ԳԻ Չ ԳԵԼ

Այսի ծգել ասելով պէտք է հասկանալ 1, Հողի պատրաստութիւնը. 2, Պարարտացնելը. 3, Վազերի տնկելը և 4, Մատադ վազերին տալիք խնամքը:

Ա. ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ա. Հողի խորութիւնը: Վազը ինչպէս և միւս ծառատունկերը պահանջում է, որ հողը մի որոշ աստիճան խոր ու փխրուն լինի, որպէսզի կարողանան արմատները թէ աճել վարդանալ և թէ դէպի ներքեւ գնալով իրենց հարկաւոր խոնաւութիւնը գտնել, մասնաւոր ամառուայ ընթացքում: Հողի փխրուն լինելը կարևոր է, որ ջուրը առատութեամբ անցնի ներքին շերտերի մէջ և նպաստէ աճերութեան պինդ ու ցամաք հողում: Դրա համար էլ պինդ ու չորութեան ենթարկուած հողը, որչափ հնարաւոր է խոր պիտի փորուի, իսկ ջրաբրի ու փխրուն հողը՝ երես: Առհասարակ խոր հողի մէջ եղած վազը աւելի զուարթ է լինում քան երես հողին և աւելի պտղաբեր, բայց միկնոյն ժամանակ խաղողը ստոր, քան

լուց՝ լինի այդ բահով թէ արօրով, որչափ կարելի է պիտի աշխատել, որ հողը շատ փխրանայ, շուռ գայ և տակն ու վրայ լինի:

Հողը փորելու համար ամեն մի այգեգործական շրջան ունի իր հողին յարմարեցրած բահեր և խճոտ տեղերի համար քրուսպներ (թոխը):

Արօրով այգիները փորելը մեզանում դեռ սովորութիւն չէ դարձած, այնինչ անհամեմատ ծախսերը կքշանան, եթէ գործածութեան մէջ լինէր: Այգիների համար այժմ կան յատուկ արօրներ, որոնք աժան են և բանում են մի ձիով: Այդ մասին կըխօսենք այգու փորելը հատուածի մէջ:

Գ. Թէ երբ Պէտք է չողը ՓՈՐՈՒԻ, Հողը փորելու յաղող ժամանակը պէտք է համարել աշնան վերջը կամ ձմեռուայ սկզբին, աշնանը անձրե թակած հողը ամառուայ չորութեան ժամանակ փխրուն է մնում: Սոյնպէս ձմեռը՝ ընութեան քնած ժամանակը, երբ թէ աշխատաւոր ձեռքերը աւելի պարապ ժամանակ ունին և թէ ցուրտն ու ձիւնը միւս կողմից ներգործելով փորուած հողի վերայ, քամու են տալիս, փխրացնում, կարծիք չկայ, որ հողի փորել ընտրելի է քանի միւս եղանակներին:

Բ. ՀՈՂԻ ՊԱՐՈՐՏԱՅՆԵԼԸ

Այգի ձգելուց առաջ հողը պարարտացնելը անհրաժեշտ է, եթէ նա մաշուած է և ուզում ենք, որ մեր վազերը շուտով գուարթանան. մանաւանդ հար-

կաւոր է պարարտացնելը հին վազերի տեղը նորերը ձգելուց, որով մենք հողին վերադարձրած կլինենք այն ամեն նիւթերը, որ նրանից վեր է առնուած:

Հողը պարարտացնելու համար մի դեսեատինին շաղ են տալիս 4000—4500 պուտ պարարտացուցիչ նիւթ, որը պէտք է դանդաղ լուծուելու յատկութիւն ունենայ, որ երկար ժամանակ կարողանայ սնունդ տալ վազերին. ուկրտանք, կաշուի կտորտանք, եղեգնի և այլ դժուար փոտող թփերի ու բոյսերի մացորդները այդ նպատակի համար ամենալաւ միջոցներն են:

Գ. Վ. Ա. Զ. Ե. Ր. Ի Տ. Կ. Ե. Լ. Ը

1. Թէ ՎԱԶԵՐԸ ՏՆԿԵԼՈՒՑ ԿԱՄ ՑԱՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԻՆՉ ՁԵՒ ՊԻՑԻ ՏԱԼ: Այգին՝ նայելով վազերին տնկելուց պահպանած ձեխն, երկու կարգի կարելի է բաժանել. առաջին, անկանոն կամ խառն ձեւ, երբ ոչ մի կանոնաւոր դասաւորութիւն չկայ և երկրորդ՝ կանոնաւոր: Անկանոն ձեր, որ առաջանում է վազերի յաճախ անկանոն տաշտաթաղ անելուց, շատ տեղ դեռ գոյութիւն ունի, որով արգելք է լինում այգին արօրով փորելուն, բացի այդ անկանոն ձեր նպաստում է վազերի միմեաց վերայ շուրջ ձգելուն և թէ այգեկութին այս ու այն գործողութեանց ժամանակ մշակների գործը դժուարացնելուն: Կանոնաւոր այգիները մի քանի ձեեր ունին. կան որ ուղիղ շարքերով են, բաւական ընդարձակ միջոցներով, այնպէս որ այդ միջավայրերում այգետէրերը զանազան բոյսեր կամ թփեր են ցանում, թէն նկատուած է որ

այդ վնասակար ազգեցութիւն ունի վագերի համար:
Կան որ կանոնաւոր շարքերով են և առանց
մեծ միջավայրերի ամբողջապէս տնկուած. այս ձեզ
ևս ունի մի քանի տեսակները.

ա. Շարքերով տնկուած:


բ. Քառանկինի տնկուած:

գ. Մ' ընդ մէջ տնկուած:

ա. Շարքերով տնկուածը (պատկ. 34) այն է,
երբ վագերը շարքերում աւելի մօտ մօտ էն տնկուած,
այն ինչ մի շարքը միւսից բաւական հեռի է: Այս
ձեփ պակասութիւնը նրա մէջն է, որ վագերը մի
որոշ ժամանակ աճելով, նրանց արմատները գալիս
խառնուում են իրար, որով աճելութիւնը այնուհետև
դանդաղանում է մինչև անգամ կանգնուում և պտղա-
բերութիւնը նուազում: Միայն առաւելութիւնը նրա
մէջն է, որ այդին վիճի նեցուկով թէ առանց նեցու-
կի, կարելի է փորել արօրով և ծախքը պակասեցնել:

բ. Քառանկինի տնկուածը (պատկ. 35) այն է,
երբ վագերը բոնում են քառանկիւնու ամեն մի ան-
կիւնը և համահաւասար հեռացած են մէկ մէկից,
այս ձեզ նախապատիւ է շարքերով տնկուածից թէ
բերքի կողմից, թէ նրանով, որ երկու ուղղութեամբ
կարելի է հողը փորել և թէ երբ մի վագ փշանում է,
տեղը հեշտութեամբ կարելի է մի ուրիշը փոխարինել՝
շըշապատող չորս վագերից մին տաշտաթող անելով:

գ. Մ' ընդ մէջ տնկուած վագերը եռանկիւնիներ
են ներկայացնում (պատկ. 36) և քառանկիւնի տըն-
կուածից այն առաւելութիւնը ունին, որ այդին կա-
րելի է փորել երեք ուղղութեամբ, փշացած վագը



փոխարինել շրջապատող վեց վագերից, միևնոյն տարածութեան վերայ նոյն հեռաւորութիւնը պահպանելով աւելի շատ վագեր տնկել, ապա ուրեմն և աւելի բերք ստանալ: Այս ձեմ պակասութիւնը միայն նրա մէջն է, որ փուռղ վագեր տնկելուց կամ առանց նեցուկի թողնելուց՝ դժուարեցնում է արօր բանեցնելը:

Այս ձեերի ընտրութիւնը կարծիք չկայ, որ կախուած պիտի լինի վագերի տեսակներից, նրանց խնամելու եղանակից և թէ հողը փորելու տեղական պայմաններից:

2. Թէ ՎԱԶԵՐԸ ՄԵԿ ՄԵԿԻՑ ԻՆՉ ՃԵՌՄԻՌՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ: Վագերի խիտ կամ նոսր ցանելը կախուած է հողից ու կլիմայից. որչափ մի հող ենթակայ է չորութեան, պարարտ է ու կլիման տաք, այսուղ վագերը պէտք է հեռի հեռի տնկուին, ինչի որ այդտեղ վագերը խոր տնկուելով որ չորութիւնից ազատ մընան, իրենց ստորին մասի, այսինքն արմատների ճիւղաւորութեան համեմատ՝ վերին մասը այն է շեւերն ու բարունակները ևս աճում են, փուռում և շատ առատ բերք տալիս, թէև հասարակ որակութեամբ, այն ինչ ցուրտ կլիմայում վագերը երես ցանելով և միևնոյն ժամանակ մօտ մօտ, աշխատում են որ վագերը հողի երեսի շերտից շուտ տաքանան, մեծ աճելութիւն չունենան, քանակութեամբ քիչ, բայց քաղցր և ընտիր բերք ունենան: Այսպէս տեսնում ենք տաք տեղերում մի գեսեատինի վերայ տնկուած են 4—5 հազար վազ, իսկ ցուրտ կողմերում նոյն տարածութեան վերայ՝ 10—40 հազար վազ և աւելի:

Մեզանում Կովկասում վագերի մէկմէկից ունեցած հեռաւորութիւնը տաք կողմերում և պարաբռ հողի վերայ լաւ կիմի պահպանել 2 արշին, իսկ ցուրտ կողմերում, երես հողում և թոյլ աճող վագերի համար $1\frac{1}{2}$ արշին, որով մի դեստինի վերայ կունենանք 5400—9600 վագ:

3. ՎԱԶԱԾՐՔԵՐԻ ՆՉԱՆԵԼ: Վազաշարքերը նշանելու համար այգին պիտի բաժանել ուղղանկիւն քառանկիւնի բաժանմունքների—թախտերի և յետոյ դրանց ներսը թոկի միջոցաւ նշանել նախ վազաշարքերը և ապա վազատեղերը. թէ վազաշարքերի և թէ վազատեղերի հեռաւորութիւնը պիտի աշխատել որշափ կարլի է համահաւասար չափակացութեան մէջ պահել: Երբ վազերը քառանկիւնի կամ մի ընդ մէջ ձեռով պիտի ցանուին, այն ժամանակ շարքերի այս ու այն ուղղութիւնը նշանակութիւն չունի, որովհետև ամեն կողմից վազերը համահաւասար հեռացած են մէկմէկից, բայց երբ նրանք ուղիղ շարքերով են և վազերը աւելի մօտ մօտ ցանուած քան շարքերի միջի տարածութիւնն է, այն ժամանակ այդ շարքերը հիւսիս-հարաւային ուղղութիւնը պիտի ունենան, որ մինչև կէսօր վազի մի երեսը տաքանայ, կէսօրից յետոյ միւսը: Այն կողմերում, ուր սաստիկ քամիներ են վեշում, շարքերը քամու հոսանքի ուղղութեամբ պիտի շինուին, որպէս զի վազերը մէկ մէկի նեցուկ լինելով ու հովանաւորելով կարողանան դիմանալ նրան:

4. Թէ ՎԱԶԻ ՏԵՇԱԿՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՀԱՄԱՆՄԲԵԼ: Վազերի համախմբելը իրենց տեսակների համեմատ այսօր ամեն տեղ շատ ու քիչ բարեկարգուած այդիներում ընդունուած է և այդ կարեոր է, քանի որ խաղողները իրենց տեսակի հասունութեան և հիւանդութեանց ենթակայ լինելու կողմից՝ տարբերում են մէկմէկից: Այդ պատճառաւ էլ կարմիր, ճերմակ ու սև խաղողները առանձին առանձին պիտի տեղաւորել և յետահաս ու վաղահասները առանձին, որ այգեկութին շփոթութիւն չպատճառեն:

Վազի տեսակները շատ են. այսօր հաշտում են մօտ 1200 տեսակ խաղողներ, միայն Կովկասեան մեր առձեռն ունեցած խաղողների ցանկը 130-ից աւելի է*). այս ամենը միևնոյն կլիմայի կամ հողի մէջ չեն կարող նոյն քանակութեամբ կամ որակութեամբ պըտուղ տալ. ամեն մէկը ունի իր սիրած հողն ու կլիման, ուստի այգետէրերը վազի ընտրութեան ժամանակ աչքի առաջ պիտի ունենան հետևեալ պայմանները.

ա. Որ վազը լաւ հասունանալ կարողանայ նոր կլիմայի տակ ուր պիտի մշակուի:

բ. Որ նոր հողի մէջ իր պիտանի նիւթը գտնելուց կատար պահպանէ և առաջուայ գուարթութիւնը և որակութիւնը:

գ. Որ նա թէ շատ պտուղ տայ և թէ իր մէջ գինի շինելու (եթէ դրա համար է) անհրաժեշտ տար-

*.) Թէ Կովկասեան և թէ արտասահմանի աւելի յայտնի խաղողների ցանկը տես յաւելուածում:

ԵԵՐԸ ունենայ: Ճատ վազ, թէև առաստ խաղող է տալիս, բայց գինու համար անպէտք է լինում: Դ. Որ պտուղը աշնան սկզբներում հասունանայ և ցըտերին չընկնի. ցուրտ տեղերի համար դիմաց կուն խաղողներ պիտի ընտրել: Բացի այդ, հաշուի տակ պիտի ձգել, թէ ինչպիսի վազեր տնկել—ընտիր ու քիչ պտուղ տւող, թէ հասարակ ու շատ և թէ այս երկու տեսակից ո՞րը ձեռնտու է և արդիւնաւոր:

5. ՎԱԶԵՐԻ ՑՆԿԵԼՅ: Վազերը տնկելու կամ ցանելու մի քանի եղանակ կայ, նայելով թէ ուղղակի կտրոններ ենք ցանում, թէ տնկանցից հանած արմատաւորներ.

Կտրոնները ցանելուց, եթէ հողը փափուկ ու պարարտ է, բիհրածե գործիքներով (պատկ. 37—38) նախ ծակ են բանում և ներս խրում կտրոնը ու դատարկ տեղը լցնում աւազով կամ փուխը (թիթայ) հողով, որ հեշտացնում է արմատներ բռնելը:

Ճատ տեղ կտրոնները տնկելու համար, եթէ հողը փխրուն է՝ բահով ուղղահայեաց մի ճեղք են բանում, կտրոնը խրում ներս և հողը կրկին վրայ տալով, ոտով պնդացնում կամ թէ չէ մի փոքրիկ փոս են փորում և կտրոնի կէսը ուղղահայեաց դիբքով պառկեցնում մէջը և հողով լցնում. այս ձեռ լաւ է հողը խոնաւ և ցուրտ կողմերում, այս ինչ հարաւում, ուր հողը չոր է երեսից և խորը տաքանում է, լաւ է կտրոնը ուղղահայեաց տնկել: Վերոյիշեալ ձեռվ կտրոններ տնկելը միայն փա-

փուկ հողերի մէջ կարելի է. այն ինչ կաւային կամ քրէճոտ հողերում պէտք է կամ առանձին առանձին փոսեր կտրել և կամ երկայն առուներ բանալ ^{3/4} արշին խորութեամբ և այդքան էլ լայնութեամբ և նրանց մէջ ուղղահայեաց դիբքով կտրոնները տնկել նրանց միացն պիտի պահել, աւելը կտրել և չորանալու վտանգից ազատ պահելու համար՝ աւազով կամ յարգով (խոզանով) ծածկել:

Ինչ վերաբերում է արմատաւոր կտրոններին, (պատկ. 39) դրանց համար նոյնպէս կամ փոսեր պիտի կտրուին և կամ առուներ բանալ. միայն զգուշութիւն պիտի բանեցնել տնկանցից հանելուց արմատները շինասել, իսկ հողում թաղելուց՝ որ արմատները լաւ փռուին, փափուկ ու պարարտացրած հողով ծածկուին և եթէ արմատների վերայ վնասուած տեղեր կան՝ կտրուին, հեռացնուին:

Արմատաւոր կտրոնները այդին փոխադրելը պիտի կատարուի ձմեռը դեռ շվերջացած, որպէսզի մինչեւ վազի զարթնելը իրեն համար տեղ արած ինի ու բռնած:

Դ. ՄԱՏԱՂ ՎԱԶԵՐԻՆ ՏԱԼԻՔ ԽՆՍՄՔԸ

Ամառուայ ընթացքում մատաղ տունկերին պէտք է մեծ խնամք տանել բռնել տալու. դրա համար հարկաւոր է այգին մի քանի անգամ փորել, մի անգամ խոր, միւս անգամները երեսանց՝ թէ հողը փխրաց-

Նելու համար և թէ բսած վայրի խոտերը (ժանգալները, ալաղը) մաքրելու։ Փորելն ու խոտերից մաքրելը անհրաժեշտ է, որ հողի մէջ խոնաւութիւն մնայ և հեշտացնէ վազերի աճելութիւնը։

Հմեռը այզին փորելուց, այն տեղերը՝ ուր վախ
չկայ ցրտահարութեան և վազերը ձմեռը շեն թաղ-
լում, վազերի տակը զգուշութեամբ բանում են (պատկ.
40) գետնի երեսից 3—4 վերջոկ դէպ ներքև վազի
վերայ բաած բոլոր արմատները (սախկալները, մոք-
զէքը) կտրատում և հողով նորից ծածկում։ Եթէ
վազաշաբերում շրոնուածներ կամ շատ թոյլ վազեր
կան, հանոտում են և նրանց տեղը տնկանցից բե-
րում տնկում. յետոյ կտրում են վազերը լաւ եղանա-
կին, շատ քիչ աշքեր թողնելով, որ զուարժ շիւեր
ձգեն և կարողանան դիմանալ քամուն. Քամուց ազատ
պահելու համար լաւ է և մատադ տուններին նեցուկ

Ճըովի այգիները առաջին տարին լաւ է զբել
երեք անգամ, երկրորդ տարին երկու և ապա տարին
մի անգամ, բայց միւս խնամքը, այն է փորելը ու
խոտերից մաքրելը անպակաս պիտի լինի և իր ժա-
մանակին կատարուի:

41. 6.

ՎԵՐԻ ԽՆԵՐԸՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Վազի խնամատարութիւնը կարելի է բաժանել երկու տեսակի, արտաքին մասի, այն է շիւերի վերաբերեալ գործողութիւնները և ներքին մասի՝ որ վերաբերում է բուն հողին:

Ճիկերի զերսբերեալ գործողութիւններէ: Շիւերի վե-
րաբերեալ զործողութիւնները հետևեալներն:
Առ համապատասխան կտրել:

Բ. Վահե Խոանելյան

գ. Կանաչ կամ ամպուայ կտրելը:

Դ. Նեցուկ տալը:

The following words are

Նախ քան այդ զործողութեանց մասին խօսելը, այգետէրը պէտք է աշքի առաջ ունենայ հետևեալ զլսաւոր պայմանները, որոնք հիմուած են փորձառութեանց վերայ.

1. Խնչքան որ մի բոյս կամ տունկ կամ շրւ ըր վերայ շատ տերեսներ ունենայ, այնքան նա լաւ է զարգանում ու աճում և այդ հասկանալի է, քանի որ

տերևներն են՝ որ վազը սննդելու համար, թէ մթնոլորդից և թէ արմատների միջոցաւ հողից ստացած նիւթերը մշակում են:

2. Ինչքան մի շիւ կամ շիւի մի մասը ուղղահայեաց (զիք) զիլք ունի, այնքան և նրա մէջ աճելութեան ոյժը մեծ է:

3. Ընդհակառակն, աճելութեան ոյժը այնչափ թոյլ ու տկար է մի շիւի մէջ, որչափ նա աւելի կուացած է:

4. Զանազան հարուածները—վէրքեր, խեղդուիլ ոլորուիլ, կարկտահար լինիլ—նուազեցնում են բոյսի կամ շիւի աճելութիւնը:

5. Որչափ մի բոյսի կամ նրա մի մասի աճելութիւնը զօրեղ է, այնչափ և թոյլ է նրա ծաղկի բերքը և ընդհակառակն:

6. Միևնոյն բոյսի կամ ճղան վերայ որչափ քիչ շիւը լինին պահուած, այնչափ նրանցից դուրս եկած նոր շիւը աւելի զօրեղ աճելութիւն կունենան. բայց այս բանը չպէտք է կարծել տայ, որ մի ծառ կամ ճիւղ կարճ կտրելով, մենք նրան աւելի դուրս թացրած կինինք, ոչ թէ ծառը կամ ճիւղն է դուրս թանողը ամբողջովին, այլ նրա վերայ պահուած շիւրի մի փոքր թիւը:

7. Մի բոյսի կամ բարունակի վերայ պտուղը որչափ քիչ է լինում, այնչափ էլ նրա պտուղը խոշոր է և ընդհակառակն:

Ա. ԶՈՐ ԿԱՄ ԶՄԵՌՈՒԱՅ ԿՏՐԵԼԸ ՎԱԶԻ

2որ կամ ձմեռուայ կտրելու նպատակն է վազին այնպիսի պայմանների մէջ դնել, որ առատ և ընտիր պտուղ տայ և թէ կանոնաւոր ձև ու աճելութիւն ըստանայ: Դրա համար էլ հետևեալ կէտերը պէտք է աշքի առաջ ունենալ.

1. Բարունակներ կամ պսղատու շիւեր առաջ բերելը:

2. Վազերին տալիք ծեմերը:
3. Վազերին թողելիք բարձրութիւնը:
4. Չոր կտրելու ժամանակը:
5. Կտրելու գործիքները:

1. ՊՏՂԱՏՈՒ ՃԻՒԵՐ ՍԻՆՁ ԲԵՐԵԼԸ: Ինչպէս յայտնի է խաղողը լինում է բարունակի (կուտրակի, մատի) վերայ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ նախորդ տարին պըտուղ վերառած և նրա աշքերից միւս տարին դուրս եկած շիւերը, որոնք նոյնական պտղատու են (պատկ. 41): Եթէ որ վազի այդ պտղատու շիւերը առանց կտրելու թողնենք, այն ժամանակ մենք շատ բարունակներ կունենանք յաջորդ տարին և նրանց վերայ շատ ճժեր, բայց քիչ զարգացած: Այդ շիւերը երկու տարի իրար վերայ պտուղ տալով հիները շորանում են, իսկ նրանցից դուրս եկածները միայն կանաչ են մընում և պտուղ տալիս: Եթէ վազը առանց կտրելու թողնենք, այդ շիւերը հետզհետէ ճիւղաւորուելով, կերթողնենք, այդ շիւերը հետզհետէ ճիւղաւորուելով, կերկարանան և ահազին ծառեր կդառնան տարիների ընկարանան

թագքում. բայց բաւականաշափ և լաւ պտուղ ստանալու համար չեն թողնում վազը երկարանալու. նրա պտղատու շիւը ամեն տարի կտրում կարճացնում են: Վազի շիւերը կտրում են կարճ կամ երկայն. Երբ մի շիւի վերայ երեք աչքից աւել չեն թողնում, առւում է կարճ կտրել, երեք աչքից աւելին՝ երկայն է: Նայելով վազի հասակին ու զարդացմանը՝ վերան կարելի է 2—8 եղջիւրներ (կոներ, տալեր պողեր) պահել և ամեն մի եղջիւրի վերայ 2—3 աչքով մատներ թողնել. կամ թէ 2—3 եղջիւրներ պահել, երկայն մատներով, ապա ուրեմ և շատ աչքեր վրան: Երկայն կամ կարճ կտրելը կախումն ունի և վազի իւնեն յատկութիւնից: Կան վազեր, որոնց ճթերը դուրս են վալիս բարունակի ստորին աչքերից, կան էլ վազեր, որ ճթերը ընդհակառակն զուրս են վալիս վերսի աչքերից. առաջին դէպքում վազը կարճ պիտի կտրել, երկրորդ դէպքում երկայն: Մակայն այս էլ պէտք է աչքի առաջ ունենալ, որքան շատ աչքեր թողնելու լինինք մատի վերայ, այնքան շատ շիւեր են տալիս միւս տարին, որոնք մնում են նիհար, լաւ շեն աճում, տալիս են առատ պտուղ, բայց ճթերը իրենց կատարեալ մեծութեան չեն հասնում, այն ինչ կարճ կտրելով, քիչ աչքեր պահելով մատի վերայ՝ թէ զուարթ շիւեր ենք ունենում և թէ մեծ ճթեր: Վազը կտրելուց հետեւեալ պայմանները պէտք է ի նկատի ունենալ:

ա. Իբրև մատնացուներ, պտուղ տուղ շիւեր յաջորդ տարուայ համար, պէտք է ընտրել միջակ

ոողջ շիւերը. չափազանց հաստերը անպտուղ են մնում յաճախ, ինչպէս և բարակ ու նիհարները բանի պէտք չեն գալիս: Մատնացուները պահելով, վազի մնացած շիւերը պիտի կտրել (յօտել) հեռացնել:

բ. Մատնացուի վերայ քանի աչք որ պահելու լինինք, կտրելուց մի աչք միշտ որոշած տեղից բարձր պիտի կտրել և այն շեղաղիր, աչքից քիչ բարձր, երբ կապամշերը միմեանցից հեռի են. (պատկ. 42) հորիզոնական դիրքով կարելի է կտրել ուղղակի կապի միջից, երբ կապերը մօտ մօտ են (պատկ. 43): Կապի միջից կտրելով, ուր ծուծ (միջուկ, զուզակ) չկայ և փայտեղին մասն է, մենք պաշտպանած կը լինինք ներքսի աչքերը փտութիւնից, որ կարող է պատահել անձրել ծուծի մէջ մտնելուց: Միայն ինչ պէս վերջին ժամանակներս փորձը ցոյց է տուել, լաւ է կտրել այնպիսի կապերից, որոնք ծիլ ունին վերան. ծիլ ունեցող կապերը փայտեղին միջոց ունին, այն ինչ առանց ծիլի ծուծը շատ ու քիչ բաց է:

գ. Այն ամեն շիւերը, որ դուրս են եկել քոթուկի (լաշի, բինի, սեռոցի) վերայ կամ նրա տակից, պէտք է առանց աչք պահելու կտրել հեռացնել պէտք է առանց աչք պահելու կտրել միշտ անպը (պատկ. 44), որովհետև զրանք զրեթէ միշտ անպը տուղ են նոյն և յաջորդ տարին: Միայն այն դէպքում պառաւած վազերը շիւը կարելի է պահել, երբ քոթուկից դուրս եկած շիւը կարելի է պահել, նորոգել: պառաւած վազերը ուզում ենք կարճացնել, նորոգել:

դ. Մի վագ ինչքան կնճուտած է ու ծուծուած, թէկ շիւերը նուազ են լինում, բայց տուած պտուղը ընտիր է քան զուարթ ու վեր տնկուածին, ինչի որ արմատների հիւթը (խէժը, մեօվը) կնճուտածի մէջ

դանդաղ ու քիչ է մտնում՝ հատիկների մէջ, լաւ մշակուում, քան թէ այն ժամանակ, երբ մեծ քանակութեամբ առանց արգելքի է լցում մի տեղ. զբանամար էլ կարճ կտրելը ունի այդ առաւելութիւնը:


ե. Փորձը ամեն տեղ ցոյց է տուել, որ ինչքան խաղողը գետնին մօտ է առանց նրան դիպչելու, այնքան և նրա հասունութիւնը վաղ է լինում և կատարեալ, ինչի որ արկը ցերեկը տաքացնելով հողը, այդ տաքութիւնը գիշերը անդրադարձնում է մերձակայն ճմբերին և շուտով հասցնում, այն ինչ բարձր կանգնած վազերը այդ հանգամանքից քիչ են շահուում:

զ. Վազերը կտրելուց պէտք է մաքրել և պառաւ ծառերի կեղեանքը, որ որդների ապաստանարան շդառնայ և կամ անձրես հաւաքուելով՝ շփոթեցնէ: Եթէ կտրելուց վազը ճեղքում կամ վիրաւորում է, կաւացեխով պիտի ծածկել վէրքը, որ չչորանայ:

է. Վազի վերայ շատ կամ քիչ պտղատու շիւեր պահելը կախուած է նրա զուարթութիւնից: Ճիւերի թիւը կարելի է շատացնել, երբ քոթուկից մոցառներ (անպտուղ շիւեր, հարամիք) են դուրս գալիս և քշացնել, երբ վազի շիւերը չնայելով պարարտացնելուն կամ կարճ կտրելուն՝ չեն երկարանում:

ը. Այն տեղերը, ուր շիւերը ձողի նեցուկի վերայ են կապում, չպէտք է թողնել, որ շատ դէս ու դէն փառին, այլ հաւաք մնան ու բնից չհեռանան, ուստի և կտրելուց աւելի ուղղահայեաց դիրք են տալիս քան հորիզոնական (պատկ. 52—53):

Առանց նեցուկի վազերին ընդհակառակն աշխատում են, որ բունը գետնից մօտ $\frac{3}{4}$ արշին բարձրու-



թիւն ունենայ, եղջիւրները զանազան կողմ՝ նայեն և շիւերը մէկ մէկի արգելք շինին և արել հաւասարապէս տաքացնէ ամենին (պատկ. 47—49):

Թ. Այն վագերը՝ որոնք նեցուկի փոխարէն լարի (մաֆթիւլի) վերայ են կապում, կտրելուց երկու շիւ են պահում, մին երկայն, միւսը կարճ՝ յաջորդ տարին երկայն պահածը կտրում են վերան երկու աչք միայն թողում, իսկ կարճ պահածը, որ զուարթ մատնացու է ունենում, երկայն կտրում են և պառկեցնում լարի վերայ, այդ ձեր պահում են և յաջորդ տարիներին (պատկ. 50—51 և 57):

2. ՎԱԶԵՐԻՆ ՏԱԼԻՔ ՉԵՒՔ: Վագերը, նայելով կտրելուց իրենց տուած ձեին, կարելի է բաժանել երկու կարգի՝ անկանոն ու կանոնաւոր:

Ա. Անկանոն ձեր այն է, որ ոչ մի ներդաշնակութիւն չէ պահում շիւերի վերաբերութեամբ. դրանք բարձրանում են աշ ու ձախ կենդանի կամ չոր ծառերի վերայ և փուռում են զանազան ուղղութեամբ և երկար տարիներ առանց կտրելու մնում: Այդպէս են Ղարաբաղի, Կախէթի մի քանի տեղերի, Քիւրդամիւրի, Արեշի գաւառի և Զարբայէլի այգեստանները, որոնք ոչ մի խնամք չեն պահանջում բացի ջրելլ և երբեմսակի պարարտացնելլ, մի մի հսկայ ծառեր են ներկայացնում և թթի, ընկուզի, կաղնի և այլ ծառերի փաթաթուելով, մի քանի տասնեակ արշին երկարանում, ճղճնուում են:

Այդ անկանոն ձեր, որ դեռ ևս տեղացիք աւանդաբար պահում են, այն պակասութիւններն ունի, որ

վալը զրկում է գետնի ջերմութիւնից, հասունութիւնը անկանոն է գնում, կենդանի ծառերը իրենց շուրի տակ ծածկած լիներու համար, թոյլ և հասարակ գինի է տալիս, դժուարացնում է այգեկութը և որ զլխաւորն է վաղի պտղատու շիւերը հետզհետէ երկու տարի բերք տալուց յետոյ անպտուղ մնալով, նրանցից դուրս եկածներն են նոյնը անվերջ շարունակում և հազարաւոր կնճիռներով ու խուլերով ծածկում, մերկանում։ Վաղի ջուրը (խէժը) կարծիք չկայ, որ շատ դժուարութեամբ է կարողանում անցնել այդ խուլերից, ուստի և վազը հետզհետէ թուլանում է, ուժասպառ լինում և սակաւ պտուղ տալիս։ Բ. Կանոնաւոր ձեւ այն է, երբ վազը կտրելուց ենթարկում ենք հետեւեալ ձեւերին։

ա. Թուփակ, բ. համադիր, գ. հորիզոնական։

ա. Թուփակ ձեւը այն է, որի բունը ծառայում իրը կետրն, իսկ եղջիւրները (կոները) ուղղուած են դեպի զանազան կողմեր (պատկ. 47—49)։

թուփակ ձեւը աւելի զործածական է հարաւային տաք ու չոր կողմերում, ինչի որ շիւերը փռուած լիներով մի աստիճան շուրջ են ձգում հողի վերայ և խոնաւութիւն պահպանում, խաղողը ուղղակի չէ ընկնում արեկ տակ ու խանձում, որով և հիւթալի են լինում ճթերը, թէև թոյլ շաքարով։

Երբ թուփակ ձեխն նեցուկ են տալիս, այն ժամանակ շիւերի հաւաքուելով խաղողը բաց է մնում և լոյսի ու ջերմութեան ներգործութեամբ լաւ հասունանում, քանակութեամբ քիչ, բայց շաքարով հա-

ըուստ պտուղ տալիս։ Նեցուկ տալը լաւ է աւելի բարեխառն կլիմայում (պատկ. 52—53)։

Թուփակ ձեկ ժամանակ, վազը կարճ պիտի կըտրել, ամեն մի եղջիւրի վերայ 2—3 աշք պահելով, բայց եթէ տեսնում են, որ վազի քոթուկից կամ քոթուկի տակից շիւեր (մոցառներ, հարամի) են դուրս գալիս, կամ եղջիւրների թիւն են շատացնում և կամ մի երկայն մատ պահում ու կրացնում իրեն վազի վերայ կապում (պատկ. 54)։

բ. Համադիր ձեւը այն է, որի եղջիւրները համաշափ հեռացած են և շիւերը կանոնաւոր փռուած արևի դիմաց (պատկ. 55—56), որով ցուրտ տեղերում խաղողի հասունութիւնը առաջ է ընկնում։ Համագիր ձեկ դժուարութիւնը նրա մէջն է, որ կտրելուց՝ մեծ հմտութիւն է պէտք վազը նոյն կանոնաւոր գիսքի մէջ պահելու։


գ. Հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղափիր ձեւը պիտի յարմարեցնել տեղական պայմաններին։ Եթէ վազը լարի վերայ պիտի ձգուի, լաւ է կտրել Կաղնեկի և կամ Գիւօյի եղանակով (պատկ. 50, 51, 57) այն մի կարճ և մի երկայն մատ պահելով, որոնցից կարէ մի կարճ և մի երկայնը փռում են լարի վեճը ուղղում են վեր, իսկ երկայնը կտրում են վերան կարճ բայց յաջորդ տարին երկայնը կտրում են վերան կարճ մատնացու թողում, իսկ կարճից զուրս եկած զօրեղ շիւերից մին փռում լարի վերայ, ամենայն տարի պաշիւերից մին փռում լարի վերայ, եթէ վազը նեցուկի պիտի հում են այդ միմնոյն ձեւ։ Եթէ վազը նեցուկի պիտի կապուի, ուղղահայեաց դիրք պիտի տալ, եթէ եղեգնի վերայ պիտի ձգուի, լաւ է շեղ ձեւ տալ մատ (զամշի) վերայ պիտի ձգուի, լաւ է շեղ ձեւ տալ մատ

Նացուին և նրանից դուրս եկած բարունակները փոել
նեցուկի վերայ:

3. ՎԱԶԵՐԻՆ ԹՈՂՆԵԼԻՔ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ: Վազերը նա-
յելով իրենց թողած աճերութեան՝ բաժանում էն ե-
րեք կարգի ցածր, միջակ և բարձր վազեր:

Ցածր վազեր ասում էն նրանք, որոնք բասած
են համարեա զետինի երեսին և բարձր բուն չումին,
հետեաբար և ճթերը հողից քիչ են բարձր կամ հողի
վերայ են ընկած, ինչպէս են Դարբանտի, Երևանի,
Մաշտաղու (Քազուայ մօտ) այդիները: Այդ ցածր ձեր
թէս մի կողմից լաւ է խաղողի հասունութեան հա-
մար, միւս կողմից վտանգաւոր է զարնանը ցրտա-
հարուելու ենթակալ լինելով այն տեղերում ուր, զետ-
նի ցրտութիւնը 0-ից ցած է, ուստի այդ ձեր զոր-
ծագըելի է այն տեղերում, ուր զարնանը ցրտահարե-
լու երկիւղ չկայ: Բարձր և միջակ բարձրութիւն ու-
նեցող վազերը ընդհակառակն աղատ են զարնանը գի-
շերուայ ցրտահարուելուց՝ որովհետև զետնից բարձր
են, այդ ձերը լաւ են պարարտ, խոնաւ և խոր հո-
ղերում ու ցուրտ հովիտներում:

4. ՀՈՐԿՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ: Հոր կտրելը լինում է
վազի քնած ժամանակը, այն է տերելը թափուերուց
սկսած՝ մինչև կրկին ջուր ընկնելլ: Կտրելը պիտի
զադարեցնել ցուրտ եղանակներին, որովհետև շիւերը
դիւրաւ են վշշուում այդ միջոցին և ճաքճքում, շը-
նայերով որ մկրատով կամ յօտոցով (սուր կեռ զա-
նակ) ենք կտրում, բացի այդ վազի առէշքները (կա-



շուկի տակի ջղերը) բացուելով՝ հեշտութեամբ են ցըլ-
տահարւում:

Այն տեղերում՝ ուր վախ կայ գարնանը ցրտահար-
ուելու, վազերը ուշ պիտի կտրել, մանաւանդ եթէ
այդ վազերը շուտ կոճակ բռնող տեսակից են, ուշ
կտրելով՝ մենք յետ ձգած կլինինք վազի գարթնելը,
որովհետև ամբարուած ծառհիւթը որքան շատ շիւե-
րի վերայ բաժանուի, այնքան դանդաղ կդնայ նրա
զարգանալը, մինչդեռ վազօրօք կտրելուց նոյն ծառ-
հիւթը քիչ աշքերի մէջ հաւաքուելով՝ արագացնում է
վազի բացուելը:

Այն տեղերում՝ ուր ձմեռը սաստիկ է և վազերը
հողի տակ թաղում են, պէտք է վազի աւելորդ շի-
ւերը կտրել միայն, մատնացուները հողի տակ պահել
մինչև գարնան օրերի տաքանալը. իսկ ուր ձմեռը
մեղմ է, վազերը կարելի է կտրել հոկտեմբերից սկսած,
եթէ տերեւ արդէն սկսել է թափուել:

Առասարակ պէտք է այնպէս հաշուի առնել, որ
այգու թէ կտրելը և թէ փորելը վազը շուր ընկնե-
լուց առաջ վերջացած լինի:

5. Վ.Ա.Զ.Հ ԿՏՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

Վազը կտրելու կամ յօդելու ընդունուած գործիք-
ներն են՝ յօտոցը, մկրատը և սղոցը:

Յօտոցը կեռ դանակ է (պատկ. 33), որ գործ են
ածում երևանի նահանդում և արտասահման շատ
տեղ, բայց այդ գործածութիւնից դուրս է վալիս,

որպէին նրանով դործը դանդաղ է զնում, մանաւանդէ կտրողը վարժուած չէ:

զիրատը ընդհանրացած է ամեն տեղ, նրանով
մշակը չէ յոգնում, թէ շատ բան է տեսնում և թէ
բանեցնելը յարմար է։ Մկրատների տեսակը շատ է.
կան որ գսպանակով (պրոժինով են) (պատկ. 26) և
կան առանց գսպանակի (պատկ. 27). ինչպէս լանգի-
դոկի մլրատն է, որ բանեցնում երկու ձեռով, նա մեծ
ոյժ ունի և կարելի է հաստ եղջիւրները ևս կտրել։
Մկրատը բանեցնելուց նեղ բերանը միշտ վեր պիտի
բռնել, լայնը՝ որ սուր մասն է, ներքեւ և շեղադիր-
շիւր պիտի կռթնեցնել նեղ բերանին և լայնը սեղմե-
լով կտրել։

ինչ վերաբերում է սղոցին, (պատկ. 28 ա. և թ.)
որ գործադրում են Դարձանտ, Դզլար և այլ տեղեր,
դրանք լաւ են միայն հաստ շիւերի և քոթուկների
համար. սղոցը, որչափ սուր չլինի, կտրողը վարժ,
այնուամենայնիւ նա խրթխրթացնում է և այնպէս
հարթ չէ կտրում, ինչպէս մկրատը կամ յօտոցը:

Բ. ՎԱԶԻ ԿՈՍՏԱՆԵԼ

Վազը կռացնելու նպատակն է թուլացնել նրա
փայտեղէն մասի աճելութիւնը ի նպաստ պտղաբե-
լութեան։ Կռացնելու համար վազի վերայ պահում
են մի երկայն մատնացու և մի կարճը, որից դուրս
եկած շիւը ծառայում է յաջորդ տարուայ համար։
Այդ երկայն մատնացուն կռացնում են և նեցուկի վե-
րայ կապում (պատկ. 58) կամ թէ չէ հորիզոնական

զիրք են տալիս և նրա աշքերից դուրս եկած շիւե-
րը դէպի ներքե ուղղում։

Գ. ԿԱՆԱԶ ԿՏՐԵԼԸ

Կանաչ կտրել ասում ենք վազի աճելութեան
ընթացքում նրա վերայ կատարուած կտրելու բոլոր
գործողութիւնները։ Կանաչ կտրելը մասնաւորապէս
լաւ է խոնակ կիմայում, ուր վազի աճելութիւնը շա-
րունակում է ամառը և շիւերն ու տերելը չափազանց
գուարթ են։ Հարաւային երկրներում, ուր ամառուայ
սաստիկ շոգերին վազի աճելութիւնը կանգնում է և
շիւերն ու տերելը չափազանց գուարթ են և առանց
նեցուկի շիւերը ըստ ինքեան կռացած են, կանաչ
կտրելը մնասակար է։

Կանաչ կտրելու գործածական տոսակալ
ա, ջողերի կոտրելը.

Բ. Ամելիորդ կամ անպատճ շիմքը յօւնաց.

գ. Շիմշի զլովսը վեր տալը.

¶. ՏԵՐԵԿԻ ՂԹԱՎԻԵԼՈՒ:

Ա ՅԱՐԱԳԻՎԱՐԱԿԱՆ


1. ԶՈՂԵՐԻ ՎԱՅՐԵՆ. 1-ի 1
նում է վազի ծաղկելուց առաջ կամ փոքր լոշ յա-
տոյ. դրա նպատակն է ծաղկվը խշկելու (թառամի-
լու) կամ պտուղ շբոնելու առաջը առնել և երբեմն
նոր շիւեր առաջ բերել։ Զօղի կրտքելով, վազի հիւթը
հաւաքւում է ծաղկի, ապա ուրեմն պտղի մէջ և կամ
թէ չէ նորից ելած շիւի մէջ, որով նա երկարանում
է, իսկ պտուղը գօրանում։

Զօղը պիտի կոտրել տերևի ծոցից և այն վեր-
ջին ճթից երկու աշք վեր: Այդ գործողութիւնը չպի-
տի կատարուի թոյլ վազերի վերայ:

2. Ահելորդ կամ սնգչուղ զիւերի ՅՈՏԵԼԸ: Անպտուղ
շիւերի (հարամու, պիճերի) յօտելու նպատակն է նը-
րանց սպառելիք հիւթը կետրոնացնել, հաւաքել պլա-
ղատու և պէտքական շիւերի մէջ և չթողնել վազի
չափազնց զուարթանալը: Աւելորդ շիւերի այդ կըտ-
ըել լաւ է միայն խոնաւ տեղերում և այն ամառ
բարեխառն կողմերում. Ընդհակառակն սաստիկ շող
տեղերում մնասակար է, քան թէ օգտակար:

3. Զիւերի ՑԼՈՒԽԸ զեր ՏԱԼԸ: Այս գործողութիւ-
նը կատարում է ամառը և նպատակն է ծառ-
հիւթը հաւաքել ճթերի մէջ և նրանց զարգացնել:
Շիւերի զլուխը վեր տալը լաւ է միայն ցուրտ ու պա-
րարտ հողերում: Չատ տեղ խաղողի հատիկները (զիւ-
լաները) զարգացնելու և հասունութիւնը մի քանի օ-
րով սովորականից առաջ ձգելու համար, ճթի ներքեմի
մասից կտրում են և կամ լաւ չկազմակերպուած ու
շատ սեղմուածները կտրելով՝ նոսրացնում: Կամ եթէ
մի մատաղ վազի վերայ չափազնց շատ պտուղ կայ,
թոյլ զարգացած ճթերը հեռացնում են, որ նա չթու-
լանայ:

4. ՏԵՐԵՒԻ ԹԱՓԵԼԸ: Տերեւ թափելու նպատակն է
խաղողի հասունութիւնը առաջ ձգել, բաց անել վա-
զերը, որ չափազնց խոնաւութիւնը քշանայ, արե-



տեսնէ և օդ խաղայ արանքներում։ Տերեկի թափելը
պէտք է հետզհետէ անել և ոչ մի անգամից, որ խա-
ղողը շայրուի։ Տերեզ տալրոց՝ ճթերի վերը գտնուած
տերևները պիտի պահել։

Դ. ՆԵՑՈՒԿ ՏԱԼԸ

Վազերը պահում են նեցուկով (ղազուխ, սարա,
քիլսար) և առանց նեցուկի։ Առանց նեցուկի վազե-
րը առհասարակ լաւ են հարաւային տաք ու չոր կող-
մերում, ուր շիւը գետնին փոռուելով հողը մի աստի-
ճան խոնաւ են պահում և շուտ չորանալրոց պահ-
պահում, ինչպէս և ճթերը տերևների տակ ծածկուած
լինելով, ոչ միայն արեից չեն խանձում, այլև խո-
նաւութեան ներգործութեան տակ աւելի խոշորա-
նում են։

Առանց նեցուկի վազերի մի առաւելութիւնն էլ
նրա մէջն է, որ շիւերը բնականարար կոացած լինե-
լով՝ նպաստում են պտղաբերութեան։ Իսկ այն տե-
ղերը, ուր կիման խոնաւ է և արեւ այնպէս չէ այ-
լում, ընդհակառակն հողը բաց են անում, շիւերը
բարձրացնում, որ պտուղը արեւի ճառագայթների
տակ լաւ հասունանայ և քաղցրութիւնը շատանայ։

Գրա համար էլ անհրաժեշտ է.

ա. Վազերը մէկ մէկի նեցով տալ։
բ. Վազերը կենդանի կամ չորացած ծառերի վե-
րայ փոել։

գ. Վազերին ծողեր (ղազուխ) նեցով տալ։

դ. Վազերը լարի (մաֆթիլի) վերայ անցկացնել։

Ա. ՎԱԶԵՐԻ ՄԵԿ ՄԵԿԻ ՆԵՑՈՒԿ ՏԱԼՅ. Այս ձեզ կայա-
նում է նրա մէջ, որ վազերը մի որոշ աստիճան բար-
ձրանալուց յետոյ՝ նրանց գլխները կապում են իրար
հետ, որ գետնից բարձր մնան ճթերը և գետնի երեսին
փոռած մնալով չփափին: Վազերը կապում են երկրուսը,
երերը և մինչև չորսը միատեղ, որոնք կամացների
ձև են առնում (պատկ. 59): Սակայն այս ձեփ անյար-
մարութիւնը նրա մէջն է, որ սաստիկ քամիներին
չեն դիմանում և ընկնում են գետնին:

Բ. ՎԱԶԵՐԸ ԿԵՆԴԱՆԻ ԿԱՄ ՀՈՐԱՅԱԾ ԾԱՌԵՐԻ ՎԵՐԱՅ
ՓՈԽԵԼՔ: Այս ձեզ որ ընդունուած է և մեզանում Կով-
կասում և ասում է ծառաբաղ, կայանում է նրա
մէջ, որ այգետեղերում նախ տնկում են թթի և այլ
ծառեր 5—10 արշին մէկ մէկից հեռի և երբ այդ
ծառերը բարձրանում են, դրանց տակը թաղում են
վազի կտրոններ, որ բանելով հետզհետէ բարձրանում
են և փուռում այդ ծառերի վերայ զանազան ուղղու-
թեամբ: Այդ ձեփ անյարմարութիւնը նրա մէջն է, որ
վազերը հետզհետէ բարձրանալով՝ չեն ենթարկում
ոչ մի ձեփ, ոչ բժշկուելու, պտղաբերութիւնը գնալով՝
քշանում է և ստացուած խաղողը այն քաղցրութիւ-
նը չունի, ինչ որ գետնին մօտ եղածները. բացի
այդ՝ կենդանի ծառերի շուքը չէ թողնում, որ խաղո-
ղը լաւ հասնի, ուստի խաղողը ժուռ է մնում և թէ
այգեկութը միաժամանակ չէ կատարում:

Այդ անյարմարութեան առաջն առնելու համար
միակ միջոցը այն է, որ վազերը փոխանակ կենդանի
ծառերի վերայ ձգելու, չորացնեն այդ նեցուկ

ծառայող ծառերը և նրանց վերայ փուն վազերը,
որով ոչ տերեւները կխանգարեն շուք կձգեն և ոչ էլ
ծառերի բարձրանալով՝ վազն էլ նրա հետ կբարձրա-
նայ և կըդժուարացնէ խաղողի քաղը:

Չորացած ծառերը 1—2 սաժէնից բարձր չպի-
տի լինին և նրանց թուփակ ձև պիտի տալ, այսինքն
ճիւղերը զանազան ուղղութեամբ պիտի լինին, որ վա-
զի շիւերը ևս նրանց վերայ ընկներով՝ մէկ մէկի
չխանգարին:

Վազերին ծառաբաղի վերայ կամ չարդախի վե-
րայ բարձրացնելը նշանակութիւն ունի միայն այն
տեղերում, ուր այգետեղը ջրջրոտ է ու սաստիկ խոնաւ:


Գ. ՎԱԶԵՐԻՆ ՀՈՂԵՐ ՆԵՑՈՒԿ ՏԱԼՅ. Նեցուկը (զազու-
խը, սարան) ոչ այլ ինչ է, եթէ ոչ կազնի, բեխի, ա-
կացիայի, շագանակի ուսի և այլ ծառերից կտրուած
ձողերը, կամ լոկ եղեգը (զամիշը), որոնց մի ծայրը
սրում են և վազերի կողքին տնկում և նրա շիւերը
վերան կապում:

Նեցուկները որպէսզի երկար գիմանան հողի մէջ,
նախքան բանեցնելը դեռ ևս թարմ կտրած ժամա-
նակը, մի մասը՝ որ հողի մէջ պիտի խրուի, զնում են
արշասպաջրում (մէճհայ կուրօօշ) հարիւր փունտ
ջրին 10 փունտ արշասպ լուծած. ջուրը կիստակառի
կամ աւելի մեծ ամանների մէջ լցնելով, նեցուկները
կամ աւելի մեծ ամանների մէջ լցնելով, կամ աւելի մեծ
հում մէջը, ապա հանելով, կեղեր հանում մաշկում են
շուք տեղ փուռում մինչև բանեցնելը: Արշասպաջրու-
թը առնում է շուտ փտելու առաջը:

Նեցուկները արջասպաջրից հանելուց յետոյ, նորերը կարելի է զնել, բայց արջասպ աւելացնելով ամանի մէջ, որ զօրութիւնը չժուկանայ:

Նեցուկները խփում են գարնանը, երբ արդէն կտրելը և փորելը վերջացած է: Նեցուկները առհասրակ խրում են հողի մէջ ձեռքով ամբողջ մարմնով լառ (կախ) ընկնելով, որ բաւական նեղացնում է մշակին, եթէ հողը պինդ է և շատ ժամանակ է խրում: Պինդ հողերում գործ են ածում և նեցուկ խրելու համար առանձին գործիք (պատկ. 60), որ ունի փայտի կոթ կամ բռնելու տեղ, $\frac{5}{4}$ արշին երկայնութեամբ երկաթի մի ձող, տակը թիակաձև, ոտ դնելու համար, ձողի վերայ մի կէռ՝ նեցուկը դիմհար տալու և վերջապէս մի շանդ սուր ծայրերով, որը բերանի կողմից լայն է քան ետևի կողմից և ծառայում է նեցուկը բռնելու համար: Նեցուկ տնկելը, վերտապալը կատարում է այսպէս. Նեցուկը դնում են այդ շանդի բերանին այնչափ, որշափ պիտի հողի մէջ մտցնեն, մօտ կէս արշին, ձախ ձեռով բռնում են նեցուկից, դիմհար տալիս կէռին, աջով կոթից բըռնում և աջ ոտը կոխելով թիակի վերայ, մարմնի ամբողջ ծանրութեամբ հրում, մինչև որ նեցուկը խըլլում է ուզած շափով (պատկ. 60 բ.): Նեցուկը թոյլ խփելուց, պիտի հանել և նորից խրել:

Նեցուկները տնկում են ամեն մի վազի մօտ մի հատ կամ երկու երեքը, եթէ վազը զուարթ է և ճիւղաւորուած: Աշնանը, այդեկութից յետոյ, հանոտում են նեցուկները և դարսում ուղղահայեաց սուր կողմը դէպի վեր և կամ հորիզոնական՝ սուր ծայրը դէպի ա-



ըսելք գետնից բարձր և թողնում մինչև գալունքը, երբ
նորից սրելով՝ անկում են և շորակապ անում վազերը:

Դ. ՎԱԶԵՐԸ ԼՍՐԻ ՎՐԱՅ ԱՆՑԿԱՑՆԵԼԸ ԵՒ ՆՐԸ ԵՇԽԵՐԸ:
Աչքի առաջ ունենալով նեցուկների անյարմարութիւն-
ները—այն է մշակի նեղութիւնը ամեն տարի տնկե-
լու, հանելու, սրելու և դրա հետ կապուած մեծ ծախ-
քը, մանաւանդ այն տեղերում, ուր մօտ անտառներ
չկան, վազերի կողքին տնկելուց նրա արմատներին
շատ ու քիչ վնասելը՝ ձմեռը հանոտելուց յետոյ տե-
ղը փոս մնալուց արմատների ցրտահար լինելու վը-
տանգը, միւս կողմից նեցուկների կեղեկի տակը թըր-
թուրների և ուրիշ վնասակար միջատների ձուաների
ապաստանարան դառնալը, որտեղից դարնանը անց-
նելով վազերի վերայ՝ խժոռում են աչքերն ու կանանչ
մասերը, բացի այդ շիւերը նեցուկին կապելուց հա-
ւաքուած լինելով՝ շատ ճթերի արևից զուրկ մալը,
որ վնասում է պտղի որակութեան, ահա այդ ամենը
ստիպել է դիմել աւելի բաւարար միջոցի և գտել են
լարանեցուկը (մաֆթիւլը):

Յիրաւի վազերը լարի վերայ անցկացնելը շատ
առաւելութիւններ ունի. նա ապաստանարան չէ տա-
լիս թրթուրներին ինչպէս նեցուկը, շուրջ չէ ձգում
ճթերի վերայ, այդեկութը և բժշկութիւնը հեշտա-
ցնում է, որովհետև պտուղն ու շիւերը աչքի առաջ
են և փոռուած, վերջապէս աժան է և երկար տարի-
ների ընթացքում ծախք չէ պահանջում:

Միայն լարանեցուկի համար պէտք է վազերը
կանոնաւոր շաբքերով ձգուած լինին և կտրելուց այն-

պիսի ձև ունենան, որ լարի վերայ կարելի լինի նըանց շիւերը հորիզոնական կամ ուղղահայեաց դիրքով կապել (պատկ. 57, 61—62):

Լարանեցուկի համար նախ պէտք է երեք արշին երկայնութեամբ և $1\frac{1}{2}$ —2 վերշոկ ծայրը հաստ կաղ-նի կամ այլ պիւրգ ծառի կոճեր կտորել, կաշին մաշ-կել, մի ծայրը սրել, կպրածութ (վառ) քսել կամ կը-ըակի վերայ խանձել, որ հողի մէջ տնկելուց շուտով չփոփի և ամեն 10—15 արշինից մինը վազաշարքում տնկել: Վազաշարքի երկու ծայրի կոճերը քիչ խոր պիտի տնկել և վերից ու մէջտեղից լար կապելով տանել փաթաթել մի քարի և հողում խոր թաղել որ լարերը այդ կոճերին քաշելուց տեղահան չլինին պատկ. 63): Ապա այդ կոճերի վերայ կէռեր են խը-փում կամ մեխ զետնից $\frac{3}{4}$ արշին բարձր ներքեփ լարի համար և $\frac{3}{4}$ արշին՝ դրանից բարձր երկրորդ կամ վերի լարի համար: Այդ պատրաստելուց յետով, լարի մի ծայրը ամրացնում են վազաշարքի ծայրին եղող կոճին և կէռերի վրայից անցնելով՝ պինդ ձգում ձգող մեքենայով (բլոկով) և կապում միւս կոճին:

Լարը պիտի լինի ցինկում թաթախած կամ ինչ-պէս առում են գալվանիզիրովաննի, որը չէ ժանկո-տում և ճկուն է: Լարերը լինում են զանազան հաս-տութեամբ, բայց վազերի համար պիտի ընտրել №10—14-ը: Որչափ լարը հաստ է, այնչափ էլ նըա գինը արժան է, և միենոյն ժամանակ երկարութեամբ կարճ: Այսպէս № 11 լարը արժէ բոստովում 4 ր. 64 կոպ. և դրա մի սաժէնը քաշում է $\frac{1}{4}$ փունտ, ուրեմն մի պուղը ունի 480 արշին, այնինչ № 14-ի մի պուղը

ունի մօտ 800 արշին և արժէ 6 լրութու չափ:

Թէ մի գեսեատին այդին փայտէ նեցուկի ժամա-նակ աւելի թանգ արժէ քան լարանեցուկը, մէջ կըքե-րենք հետևեալ հաշիւը՝ հիմնուելով մեր փորձերի վերայ:

Մի գեսեատին այդին երկու արշին մէկ մէկից հեռի վազաշարքով, 90 շարք և ամեն շարքում $1\frac{1}{2}$ արշին հեռաւորութեամբ մին տնկուած՝ ընդամենն ունի 7200 վազ:


Փայտէ նեցուկը	միջին հաշուվ	արժէ հատը	$1\frac{1}{2}$
կոպ.	ուրեմն 7200 հատը	•	108 ր.
7200 վազերը սրելու	•	•	3 "
7200 վազերը տնկելու	•	•	3 "
Վազերը չոր կապելու	•	•	2 "
Վազերը կանաչ կապելու	•	•	3 "
Վազելու նիւթի—մաշալիի	•	•	3 "
Վազերը նորից հանելու աշնանը	•	1 " 50 կ.	
			Ընդամենը . 123 ր. 50 կ.

Բայց որովհետև նեցուկերը դիմանում են 3—4 տարի, հետևաբար նըանց տարեկան ծախքն էլ 3—4 անգամ քիչ կլնայ, ուստի 7200 վազը կաժենայ 27—36 լրութի, մնացեալ ծախքը նոյնութեամբ մնա-լով. ուրեմն փայտէ նեցուկի տարեկան ծախքն է 42 լ. 50 կ.—51 ր. 50 կոպէկ:

Այժմ տեսնենք ինչ կնատէ լարանեցուկը նոյն մի գեսեատին տարածութեան վերայ՝ նոյնքան շար-քեր ունենալով և նոյնքան վազերը:

Նախ ամեն մի վազաշարքին, որ ունի 40 սաժէն երկայնութիւն, ամեն 10 արշինից $\frac{3}{4}$ արշին երկայն մի կոճ տնկելով 1080 կոճերի, հատը 5 կ. . 54 ր.

Այդ 1080 կոճերը սրելու, կեղելը մաշ-	
կելու, վառ քաշելու կամ խանձելու	
հատը 3 կ.	32 ր. 40 կ.
Այդ կոճերը 10 տարին մի անգամ փոխե-	
լով հետևաբար տարին ծախք կու-	
նենանք ոչ թէ 86 ր. 40 կ. այլ թէ	
կոճերի և թէ սրելու կամ վառի .	8 ր. 64 կ.
1080 կոճերը տնկելու մի տարուայ ծախ-	
քը, եթէ հինգ տարի գիմանալու լինի	6 ր. 48 կ.
1080 կոճերի վրայ երկու երկու կեռեր	
խփելու ընդամեն 2160 կեռերի հա-	
տը 1 կ. 21 ր. 60 կ. 30 տարուայ	
ընթացքում տարեկան	— ր. 72 կ.
Ամեն վազաշարքին 2 քար կապելու և	
փոսի մէջ պնդացնելու հատը 5 կ.	
180 հատին 9 ր. 30 տարուայ ըն-	
թացքում տարին ծախք	— ր. 30 կ.
Մի շարքի վերայ (40 սաժէն երկայնու-	
թեամբ) կրկնակի լար անցնելու № 13	
և 14, 720 արշինը 1 պուդ հաշուե-	
լով և պուդը 6 ր. 50 կ. արժեքով,	
մի դեսետտինին այն է 90 շարքին	
կզնայ 30 պուդը, որը 6 ր. 50 կոպ.	
հաշուելով պուդ և 30 տարի դի-	
մանալով տարեկան ծախքն է	6 ր. 50 կ.
Լարերը քաշելու մի դեսետտինին	2 « 50 «
2որ և կանաչ կապելու	5 « — «
կապելու նիւթի	3 « — «
ընդամեն մի դեսետտինին	33 ր. 14 կ.



Վերոյիշեալ հաշուից պարզ է, որ իւրաքանչիւր
դեսեատինին լարանեցուկը արժան է նստում՝ 9 ը.
35 կոպէկից մինչև 18 բուրլի 36 կոպ.: Բայց որով-
հետեւ ամեն տեղ նեցուկը նոյն գնով չէ կարելի ձեռք
բերել և թէ շատ տեղ մեղանում ոչ թէ 7200 վազ
է լինում մի դեսեատինի վերայ, այլ մինչև 15,000
վազ, սոյնպէս մշակի օրավարձը զանազան է, ուստի
պիտի ենթադրել, որ փայտէ նեցուկը երկու անգամ
թանգ է նստում հերիք չէ, այլ և նրա հետ կապուած
են այն ամեն դժուարութիւնները, որ յիշեցինք վերը:

Բ. ՎԱԶԵՐԻ ՏԱԿԸ ԲԱՑ ԱՆԵԼԸ:

Այս գործողութեան նպատակն է հողը վափկացնել, վազերի տակը բռւսած խոտերը փշացնել, վազի քոթուկի կեղակի տակ պաշտպանուած թրթուրներին և որդներին ցրտութեան ենթարկելով՝ փշացնել, գետնի երեսին մօտ բսած շիւերն ու արմատները (մուրզէքը, սախկալները) հեռացնել և վերջապէս վազերի տակը պարարտացուցիչ նիւթ ածելու տեղ բանալ:

Վազերի տակը բանում են բահով քոթուկի շուրջը միայն (պատկ. 40) և կամ վազաշարքը ամբողջապէս փորելով: Ճատ տեղ այդ գործողութիւնը կատարում է այդին փորելու ժամանակ. երբ մշակը բահով է տալիս և բանում վազի տակը, վերակացուն դանակով կտրում է նրա սախկալները և քոթուկից դուրս եկած անպէտք շիւերը և կրկին հողով ծածկում: Վազերի տակը բաց անելը պիտի կատարուի ձրմեռը այն ժամանակ, երբ մեծ ցրտերը անցել են և ցրտահարուելու երկիւղ չկայ:

Վազերի տակը բաց անելը չպէտք է և տաք օրերին ձգել, ինչի որ որդները կոտորելու վերաբերութեամբ կորցնում է նշանակութիւնը:

Գ. Ա. ՅՈՒ ՊԱՐԱՐՏԱՆԵԼԸ

1. ՊԱՐԱՐՏԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ: Վազը իր գոյութիւնը պահպանելու համար թէ հողի և թէ մթնոլորդի մէջ գտնում է իրեն աճելութեան անհրաժեշտ տարրերը,

Կայացածք ու Հ բժայ պիտուած բանցարում
ու Հ համար է անելու պիտուածակայ միմասանու
ինց ըստ բար ու բար ու պիտուած բանցարում
անձ վազակ է ինց ըստ պիտուած բանցարում
ըստ 0027 թի Հ անուան բանցարում Ա և թից
000,81 մասն ու 4. Թ. Թ.

ԵՅԴՈՒ ՀՅԴԻ ՎԵՐԾԲԵՐԵԸ ԽՆՇՄՔԸ

- Այգու հողի վերաբերեալ խնամքներն են.
 1. Զմեռնամուտին վազերը հողով ծածկելը:
 2. Զմեռուայ վերջին վազերի տակը բանալը:
 3. Այգու պարարտացնելը:
 4. Այգու փորելն ու քաղճանը:
 5. Այգու ջրելը:

Ա. ԶՄԵՌՆԱՄՈՒՏԻՆ ՎԱԶԵՐԸ ՀՅԴՈՎ ԾԱԾԿԵԼԸ

Վազերը հողով ծածկելը մեզանում կատարում է Ղզլար, երեան և մի քանի տեղ, որ ձմեռուայ ցըլր տահարութիւնից ազատ մնան:

Դրա համար երկայն ակօսներ կամ փոսեր են բաց անում վազի բնին մօտ և վազը ամբողջապէս պառ կեցնում նրա մէջ և հողով ծածկում: Հողով ծածկելը կարելը է մանաւանդ նոր ցանած վազերին կամ պատուաստածներին:

որոնց ծծում իւրացնում է թէ արմատներով և թէ տերեներով։ Սակայն երբ տարիների ընթացքում մի և նոյն տեղը աճում զարգանում է, սպառում է հողի մէջ եղած պարարտացուցիչ կամ սննդարար մասերը և հետզհետէ թուլանում և վերջապէս պտղաբերութիւնից զրկում։ Որպէսզի այդ բանը չպատահի, անպատճառ հարկաւոր է հողին վերադարձնել այլ և այլ նիւթեր, որ հաւասարակշռութիւն պահպանուի և կորուսով փոխարինուի, ապա թէ ոչ առանց այդ նախազգուշութեան՝ հողը կկորցնէ իր պտղաբեր ազդեցութիւնը և մեր շահերը կվտանզուին։

Եթե պարարտացուցիչ կամ բոյսերի կորուսով փոխարինող նիւթ ծառայում են թէ բուսական, թէ կենդանական և թէ հանքային մնացորդները, որոնց մէջ մտնում են—գոմանոցի, ախոռատան, հաւանոցի և արտաքնոցի աղբերը, տան և զբսի փոսրը, բոլոր փտած կամ այրուած բոյսերը, գործարանների մնացորդները, ձիթահանքերի թեփանքը, սատակած կենդանիների դիակները, հին ու մաշուած շորերի ծլընդատնքը, սպանդանոցների արիւնը, լուացքաջուրը և առհասարակ այն ամեն բան, որ անակտք համարելով դուրս ենք շպրտում և լցնում մեր քաղաքների և գիւղերի աղբահարերը, ուր մնալով գարշահոտում են և շատ անգամ տարափոխիկ հիւանդութեանց պատճառ լինում։

Աղբի արած ծառայութիւնը մեծ է, եթէ մի ըուպէ յիշենք, որ նա օղի, ջերմութեան և խոնաւութեան պերի աղբահարերը, ուր մնալով գարշահոտում է սկորցք

(սևահող), որ բոյսերի ամենասննդարար կերակուրն է կազմում։ Գասպարին իրաւամբ ասում է՝ «եթէ մի յոյս ունինք երկիրը շարունակ պտղաբեր պահելու, այդ կենդանեաց աղբն է»։

Մի ուրիշ նշանաւոր երկրագործ աւելացնում է, «մի աղարակատէր, որ կենդանեաց աղբին լաւ չէ աչք ածում, նա մի վաճառական է, որ իր փողերը ծակ քսակ է լցնում»։

Արդարեւ արհամարել այն, որ արտերին կենդանութիւն է տալիս, մի հացի տեղ մեզ երկուսը բերում, մի տակառ գինին երկուսը շինում, մաշուած և ուժաթափ հողը վերանորոգում, կարգի բերում, աւելի քան անմտութիւն կըլինէր։

Երկար կըլինէր, եթէ յիշատակէինք այն ամեն պարտացուցիչ նիւթերը, որոնք այսօր գործադրուում են լուսաւոր երկներում. մենք համառօտակի կյիշենք միայն նրանց, որոնց բանեցնում են վազերի համար և մեզանում հեշտ է ձեռք բերել։

Պարարտացուցիչ նիւթերից գործածականներն են.

ա. Կենդանական մնացորդները։

բ. Բուական մնացորդները։

գ. Հանքային պարարտացուցիչ նիւթերը։

Ա. Կենդանական Մնացորդները։ Կենդանական մնացորդների մէջ եղջիւկները, ուկորները, ըրդեղէն ծլնգտանքը, կաշու կտորտանքը և այլք դանդաղ կերպով լուծուելով հողի մէջ, նպաստում են վազերի փարթա-

մութեան: Այդ նիւթերը շուտ լուծուելու համար պէտք է մանր կտրատել և փսորի կամ գումանոցի աղբի մէջ թողնել, որ փտին: Բրդի ծլնգտանքը մասնաւրապէս լաւ է չոր ու կոշտ հողի համար, որտեղ իր թացութիւն քաշող բնաւորութեամբ մի աստիճան արմատների աճելութեան նպաստաւոր խոնաւութիւն է պահպանում և պարարտացնում:

Կենդանեաց աղբի մէջ—ոչխարի կտիտը նպաստում է փայտեղին մասի աճելութեան, կտիտը մի դեսետինի վերայ երեք տարին մի անգամ գործ են ածում մօտ 1000 պուդ կամ ամեն մի թփի համար 8—10 փունտ:

Թոշնոց ծիրտը (գուանօ) նոյնպէս վազի աճելութեան նպաստող է, բայց չափազանց շուտ է ներդրութիւնը անցնում, ուստի և անյարմար է ճանաչուած:

Գոմանոցի եւ ախոռատան աղբը՝ այն է տաւարի թրիխն ու ձիանց փէյինը աւելի կատարեալ պարարտացուցիչ նիւթ է մէզի, յարդի և խոտի հետ խառն: Դրանք նպաստում են թէ աճելութեան և թէ պտղաբերութեան և դանդաղ կերպով լուծելուն համար շւելի նախաղասելի են: Աղբը յարդի հետ խառն օգտակար է գործաղբել կաւային պինդ հողում, այն ինչ թեթև և կրային հողում պէտք է նա մի աստիճան հնացած լուծուած լինի: Կենդանեաց աղբը գործադրում են ամեն մի դեսետինին 1500—2000 պուդ, չորս տարին մի անգամ կամ 8—10 ֆունտ պինդանեաց աղբը որպէսպի չկորցնէ իր գործու-

թիւնը, նախքան գործածելը հաւաքում են դրա համար յատուկ պատրաստած, գետնից թզաշափ բարձր և 10—15 արշին երկայն և 5—10 արշին լայն և քիչ թեք սալայատակի վերայ և մօտ երկու արշին բարձրը դարսում և 3—4 ամիս այդպէս կուտակած պահում, հնացնում:

Դարսելու ժամանակ լաւ կոխընում են, որ դատարկ տեղեր չմնան: Այդ կոյտին կից երկու արշին խոր և մի արշին լայն փոս են փորում, ցեմենտով սւաղում կամ թէ մի ճակատը բաց տակառ թաղում, որ աղբակոյտից դուրս եկած ջուրը մէջը հաւաքուի:

Այդ հեղուկը պէտք է ժամանակ ժամանակ հանել և աղբակոյտի վերայ սրսկել, որ թէ պարարտացուցիչ մասերը նրան տայ և թէ աղբը շշորանելու հարակատը է ժանգաներով, խոզանով կամ հողաշերտով ծածկել: Փայտէ ծածկը չէ դիմանում, գորշիներից շուտով փոտում են տախտակները:

Բ. ԲՈՒՍՑԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ: Գրանց մէջ աւելի գործածականներն են ձէթ տւող սերմերի թեփանքը, խաղողի վշալը (կաշին, կորիզը, քնթեռնը), ծալամի (կտրած վազի) մոխիրը, եղեգնաբոյսերը, ծովաբոյսերը, որոնք նպաստում են թէ պտղաբերութեան և աճելութեան:

Խաղողի վշալը լաւ է գործածել կրային հողում, միւս հողերի համար նա պէտք է առաջուց կրափոշու կամ մոխիրի հետ խառնել, որ թթւութիւնը պակասի:

Փշալը ամեն մի վաղին տալիս են 15—20 փունտ երեք տարին մի անդամ:

Դ. ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՍՐԱՑՈՒՑԻՉԻ ՆԻՒԹԵՐԸ: Հանքային պարարտացուցիչ նիւթերը օրէցօր աւելի ընդարձակ են բռնում և ներգործում են հինգ առաջին տարուանից: Դրանց շատ տեսակները կայ վաճառահանութեան մէջ, բայց մեզանում թէ թանգ և թէ դժուար ձեռք բերելու համար, դրանց մասին չենք խօսիլ, մասնանգ որ այդ նիւթերը գործադրելու համար նախ այդու հողը լաւ պիտի քննել, որպէսզի նրա կազմող այս ու այն տարրի կամ նիւթի շափը և որքանութիւնը իմացուի, որ ըստ այնմ և վերցնուի այդ պարտացուցիչ նիւթից:

1. ԱՅԳԻՆ ՊԱՐՍՐԱՑԵՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: Այգին պարարտացնելու ամենայարմար ժամանակը յունվար, փետրվար և մարտ ամիսներն են. շուտ լուծող նիւթերը ամենից վերջը պիտի ձգել: Պարարտացնելը այնպիսի ժամանակ պիտի կատարել, որ ծառայի իր նըպատակին. շուտ լուծողները պէտք չէ երկար ժամանակ փռած թողնել որ չկորցնեն իրենց զօրութիւնը: Ձէ կարելի և ուշ պարարտացնել այգին, աշքի առաջ ունենալով, որ տաքերը կարող են վրայ հասնել և հողի մէջ բաւականաշափ խոնաւութիւն շինելով՝ անլուծելի մնալ:

2. ՊԱՐՍՐԱՑՈՒՑԻՉԻ ՆԻՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ: Պարարտացուցիչ նիւթերը գործադրում են երեք

կերպ. ա, վաղերի շորս կողմը բանալով և փոսի մէջ ածելով ու ծածկելով, բ, վազաշարքերի երկարութեամբ ակօս փորելով և նիւթը մէջը փոելով և գ, այգու ամբողջ տարածութեան վերայ փոելով և փուելուց՝ հողի տակ ծածկելով:

Այս վերջին ձեր ճիշտ է քիչ թանգ է նստում, բայց աւելի ընդունուած է քան առաջինները:

Դ. ԱՅԳՈՒ ՓՈՐԵԼՆ ՈՒ ՔԱՂՀԱՆԵԼԲ.

Այգու փորելը մի անհրաժեշտ գործողութիւն է, որ պիտի կատարուի տարին մի քանի անդամ: Փուելով այն է հողի շուռ տալով, մենք նպաստում ենք տունկի աճելութեան և պտղաբերութեան, ինչի որ կոշտ ու խոպան հողի մէջ բոյսի արմատները տեղ չեն գտնում ամեն կողմ հեշտութեամբ փռուելու, մասում են խճճուած և իրենց այդ փոքրիկ շրջանակի մէջ բաւականաշափ սնունդ չփտնելով շուտով թուլանում են: Փափկացրած ու փլարուն հողի մէջ ընդհակառակն արմատները ազատ աարածում են և շատ սնունդ հասցնելով առատ պտուղ տալիս:

Հողի շուռ տալով, մենք ենթարկում ենք նրան և օդի ներգործութեան, առանց որի ապարդիւն կանցնէլը մեր ամեն ջանք, ինչի որ օդը թէ փխրացնում է հողը (երբ ցուրտ է) և թէ թափանցելով մինչեւ արմատները կերպարանափոխում է հողի մէջ գտնուած օրգանական և հանքային մասերը և նրանց պիտանի շինում մննդեան համար:

Փորելու մի ուրիշ առաւելութիւնն էլ կայանում է

սրա մէջ. յայտնի է, որ պինդ ու ջիլ հողի մէջ անձըները շատ դժուարութեամբ են թափանցում և այն շատ փոքր խորութեամբ, այնպէս որ ջրի մեծ մասը կամ մասմ է տեղը կանգնած կամ հոսելով դուրս գալիս այդուց: Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում պային վնասում է կամ խոնաւութեան ենթակայ դառնալով և կամ չորութեան:

Փորած ու փխրուն հողի մէջ վախ չկայ դրանց, ինչ որ անձրես հողից քամուելով թափանցում է շատ խորը, իրեն հետ բաւականաշափ սննդարար նիւթեր տանելով և ամառը բաւական երկար ժամանակ խոնաւութիւն պահպանելով:

Բացի այդ՝ փորելով միենոյն ժամանակ մենք փշացնում ենք այն պէս-պէս խոտերն ու ժանդաները, որոնք վազաշըքերում բանելով, հողի սննդարար մի մասը կանում են և վնասում վազերին:

1. Այգին պիտի փորուի տարին երեք անդամ. առաջին փորելը պիտի ձգել վազը յօտերուց (կտրելուց) յետոյ, այն է աշնանը՝ այն տեղերում, ուր ձմեռ ու մեղմ է և վազերը հողի տակ չեն թագում, երկրորդը՝ յունիսին, երրորդը վազի շիւերը բաւականաշափ երկարացել են և ծաղիկը թափուել, երրորդը՝ յուլիսի վերջերին:

Առաջին փորելը, որ ամենից կարեսըն է, պիտի խոր լինի 4—7 վերշոկ. փորելուց վազի տակը պիտի բաց անել, գետնի երեսից շորս վերշոկ խորութեամբ բաց բոլոր արմատները փշացնել, ինչի որ դրանք մասնով խորս են գլխաւոր արմատների աշխատան-

քը, նըանց թուլացնում, իսկ իրենք ամառուայ շոգերին չդիմանալով, աւելի երես լինելուց, չորանում են կամ բաւականութիւն չեն տալիս, իսկ խոր արմատները՝ իսկոյն և եթ նըանց տեղը չկարողանալով բըռնել, վազը վնասուում է:

Այգու փորելը չպիտի ձգուի ոչ գետինը չոր ժամանակ, որ դժուարեցնում է աշխատանքը և ոչ էլ թացմանաւանդ կաւային հողում, երբ ցեխի կոլուանքները (կտորները) չորանալով մասում են անփշուր:

Մի մեծ զգուշութիւն ևս որ հարկաւոր է, փորելը պիտի ձգել այնպիսի ժամանակի, որ վազը ցըրտահարուերու երկիւղ չունենայ, ինչի որ տակը փորելուց յետոյ, նա աւելի վտանգ ունի քան թէ առաջ:

2. Այգու փորելը լինում է զլխատրապէս արօրով մի ձի, եղ կամ ջրի լծած և կամ ձեռով բահի միշտ չոցաւ: Արօրով հերկը ի հարկէ աւելի ձեռնտու է այն տեղերում, ուր մշակի վարձը բարձը է և աշխատութիւնը մեծ. բայց բահով տալը նախապատիւ է է, ինչի որ հողը շատ է փշրտում: Արօրով փորելու համար այգին հետևեալ պայմանները պիտի ունենայ. աշխատանքը հաջողութեամբ շուրջ պիտի արօր բանեցնելուն.

3. Այգին կարծիք չկայ մեծ տարածութիւն պիտի ունենայ և ծայրերին ազատ տեղ, որ կարելի լինի արօրը հեշտութեամբ շուրջ տալ:

Պահելը ուղիղ շարքերով տնկուած պիտի լինի առօրը հեշտութեամբ շուրջ տալ:

գ. Վազերը հաւաք ձև պիտի ունենան և ոչ փրուած:


Ե. Արօրը այնպէս պիտի լինի, որ կարողանայ մի անգամից մինչև 6 վերշոկ լայն և 3—4 վերշոկ խոր հող վեր առնել և կարելի լինի աւելի մօտեցնել վազերին. Նրան պիտի լծուի մի ձի կամ ջորի ու եղ:

Վազերի համար արօրներից յարմարն է Ռենո Դուանին (Renault-Goin) և Մոռո-Շամիէին (Moreau-Chaumier) (պատկ. 64): Այժմ Ռուսաստանի զանազան ֆիրմաներում ևս կարելի է աժան դնով ձեռք բերել այդ ձևի գութաններ:

Արօրով փորելուց յետոյ՝ վազերի արանքումը մը նացած չփորուած տեղը բահով են տալիս:

Այն տեղերում, ուր այգիները ջրովի են, ջրառուները պէտք է շինել երկու վազաշարքերի մէջ տեղից, ուստի և վազերի տակը պիտի բարձրացնել, իսկ չջրովի տեղերում, ընդհակառակն պիտի երկու վազաշարքերի մէջտեղը բարձր լինի, որ շատ հող օդի ներգործութեան տակ ընկնի ու վիսրանայ: Մեզանում ինչպէս և ուրիշ երկրներում այգին փորելու համար կան տեղական բահեր, որոնք զանազան ձև ունին և յարմարեցրած են տեղական պայմաններին, այսպէս այլ է Ղարաբաղի բահը (պատկ. 65) այլ Դաղստանին (պատկ. 66) այլ արտասահմանին (պատկ. 67). Ինչպէս էլ որ չինի նրանց ձեր, բահը այնպէս պիտի լինի, որ մշակը հեշտութեամբ կարողանայ հարկաւոր խորութիւնը (6—8 վերշոկ) վեր առնել:

3. Երկրորդ եւ երրորդ անգամ փորելը լինում է



Երեսանց, զիխաւորապէտ վազաշարքերում բուսած
խոտերը քաղհանելու, ոչնչացնելու համար, որը գո-
յանում է անձրևներից ու ջրելուց յետոյ: Բացի այդ
հողի փորելը անհրաժեշտ է երբ այսին ջրովի է և
ջրելուց յետոյ հողը պնդանում է և կեղևանք կապում:

Երկրորդ և երրորդ փորելը կատարում են քըր-
քիշով թոխիով, (պատկ. 68) որը ուրագի ձև ունի:
Փորելը պիտի լինի տաք ու չոր եղանակին, որ ար-
մատախիլ եղած ժանդաները (արագը) շորանան և նո-
րից արմատ չձգեն:

Պէտք է զգուշանալ փորելուց խաղողի ճթերը
բաց չլինին, որ կարող են խանձուիլ արեից:

Ե. ԱՅ ԳՈՒ ԶՐԵԼԸ

Ամենքին յայտնի է, որ առանց ջրի շեն կարող
ապրել ոչ միայն մարդիկ և կենդանիները, այլ և բոյ-
սերը, ապա ուրեմն և մեր վազը: Առանց ջրի բնու-
թիւնը կկորցնէր իր զուարթութիւնը, նա մի անա-
պատ կզառնար, ուր բացի աւազը մենք ոչինչ չէինք
գտնիլ: Ջրի արած ծառայութիւնը բոյսերի վերաբե-
րութեամբ ակներե է. ով չէ տեսել, որ երաշտ տա-
րիներին ծառերի ու բոյսերի տերեները թումշկում են
և այդպէս երկար մնալով շորանում. ով չէ տեսել որ
թումշկած ճլորած տերեներն ու թփերը նորից փայլ
են առել, հպարտ հպարտ բարձրացրել իրենց զլու-
խը, երբ ջրի կենդանարար զօրութիւնը հասել է նրանց:
Ջրի արած ծառայութիւնը կրկնակի է. մին՝ որ
իր մէջ սննդարար նիւթեր լուծած ունենալով, մա-

նաւանդ երբ այդ ջուրը գետից է առած և մեծ տարածութիւն է անցել հողի երեսը քերելով, բերու հասցնում է բոյսի արմատներին և միւս, որ ջուրը ինքը հողի մէջ եղած հանքային և օրգանական նիւթերը (ինչպէս պարարտացուցիչ նիւթեր և այլն) չել մութեան միջոցով լուծում քայքայում է և դիւրամարտի շինում վազի մննդառութեան համար, որից և նա աճում ու զարգանում է:

Վազի քնած ժամանակը, այն է տերեւ թափելուց յետոյ մինչև գարնան օրերի տաքանալը և ջուրը ընկնելը, վազի մննդառութիւնը համարեա թէ կանգնած է, նա պէտք չունի սնունդ ընդունելու, ապա ուրեմն կարիք էլ չկայ ձմեռուայ ընթացքում վազերը ջրել, վաղաժամանակ հողի մէջ եղած նիւթերը լուծել:

Վազի արմատները հողի մէջ եղած ջուրը գլխաւորավէս սպառում են գարնանը և մանաւանդ ամառը: Գարունքից սկսում է հետզհետէ վազի մէջ ջուրը առառութեամբ բարձրանալ և եթէ պատահմամբ վազը կտրում ենք, տեսնում ենք, որ նրանից ջուր է կաթվում, ինչպէս ասում ենք՝ նա լաց է լինում: Այդ ջուրը հետզհետէ հողի միջից ծծում են վազի մազմզուկները, լցնում տակուիները, շիւերը, այդտեղից էլ անցնում տերեւներին, իսկ տերեւներից այդ ջրի մեծ մասը գործշիանում է արեի միջոցով, մի փոքրամասն էլ մում է, մշակում, վազի այլ և այլ մասերի զարդացմանը ծառայում: Այս գործողութիւնը, այն է արմատների, մազմզուկների միջոցով ջուր ընդունելը տերեւների միջոցով դուրս տալը շարունակում է այնքան ժամանակ, մինչև որ աշնանը ջուրը յետ է քաշ-

տում դէպի արմատները և տերեւները սկսում են թափուել:

Արմատների ընդունած և տերեւների միջոցով գոլորշիացած ջրի մէջ մի տեսակ հաւասարակշռութիւն պիտի լինի, ապա թէ ոչ վազը կարող է վնասուիլ: Եթէ վազը տերեւներից շատ ջուր է գործշիացնում երաշտ ժամանակ, քան որ կարող են արմատները ծծել հողից, նա կարող է թուլանալ ու չորանալ. ընդհակառակն՝ անձըևային եղանակին, երբ արմատներն աւելի են ջուր ծծում քան որ հարկաւոր է, իսկ տերեւները քիչ գործշիացնում, վազը դարձեալ թուլանում է, աճելութիւնը կանգ առնում:

Սակայն վազի աճելութեան վերայ մեծ ներգործութիւն ունի և հողի կազմութիւնը, նրա ջուր կանելու, պահելու կամ գործշիացնելու ընդունակութիւնը: Փորձերը ցոյց են տուել, որ ինչքան մի հող հետև այդ ջուրը չի ծծում նրա մասնիկների մէջ, հետև այդ ջուրը չի ծծում նրա մասնիկների խորայլ ուղղակի ինչպէս ֆիլտրից անցնում է ներքեմի խոր շերտերը և տաքից էլ շուտառվ գործշիանում, ուստի շերտերը և տաքից էլ շուտառվ գործշիանում, ուստի բոյսերը չեն կարող նրա վերայ աճել: Նոյն անյարմարութիւնը ներկայացնում է և կաւային հողը, որի մասնիկները իրար սերտ կպած լինելով ջուրը և օղը չեն կարողանում շատ խորը թափանցել, մատում են վերևի շերտում և հողը շուտով շորանալով կեղեւ կավելով՝ աւելի ևս պնդանում է, իսկ հողի պնդանալը վնասակար է, որովհետև նրա մէջ եղած վազի համար մննդարար նիւթերը մնում են կապուած, ապա ուրեմն մըն և չեն համառում իրենց նպատակին և թէ պինդ

հողում՝ ջրի գոլորշիացումը աւելի արագ է կատարւում՝
քան վիսրուն հողում:

Այն ինչ կաւ-աւազային, սևահող և միւս հողերը
թէ շատ ջուր են ծծում և թէ երկար ժամանակ այդ
ջուրը պահում իրենց մէջ:

Մեզանում վազերի ջրելք կատարւում է առանց
այդ օրէնքներին հետեւելու, շատերը այն կարծիքի են,
որ ինչքան շատ ջուրի վազը, այնքան նա զուարթ կը-
լինի և շատ պառող կտայ. այդ հիման վերայ էլ տա-
րուայ ընթացքում այգիները ջրում են հինգ վեց ան-
գամ ինչպէս Քանձակում. շատ տեղ փոխանակ վազի
ծարաւ ժամանակը ջուր տալու, ձմեռն են ջրում և
այն փորելուց ու կտրելուց առաջ, ինչպէս Դարբանդում,
ձմեռը շատ ձիւն լինի եկած, գարնանը շատ անձրե-
ներ թափուած, այդ ամենը նշանակութիւն չունի.
այգետէրը ջրի հերթը իրեն գալուց՝ ջրում է, չնայե-
լով որ այդ ջուրը ոչ միայն օգուտ չէ վազին, այլ և
ցրտացնելով նողը՝ կանդնեցնում է նրա աճելութիւնը.

Ջոդ տեղերում ջրելք պիտի կատարել տարին եր-
կու անգամ՝ յունիսին ծաղիկը թափելուց յետոյ և յու-
լիսի վերջերին. փորձը ցոյց է տուել, որ այդ ամիս-
ներում ջրելք աւելի է ծառայում իր նալատակին քան
մի այլ ժամանակ. Պէտք է խուսափել թէ ձմեռը ջր-
ելուց և թէ գարնանը՝ վազերի նոր բացուած ժա-
մանակը և այն փորելուց յետոյ. Ձմեռը միայն կարե-
լի է ջրել այն տեղերում, ուր ցրտահարուելու երկիւղ
չկայ և բացի այդ ամառը առհասարակ երաշտ է լի-
նում և ջրի պակասութիւն է: Այգին ջրելու համար
երկու վազաշրջերի մէջ տեղից երկար առուներ են

պահում և ջուրը նրանց մէջ կապում, կամ ուղղակի
ջուրը կապում են վազաթախտերի վերայ:

Ջուրը այնքան պիտի տալ, որքան գետինը ծը-
ծում է: Առուները պիտի կանոնաւոր շինած լինին,
որ ջուրը ճակներ չկազմէ կամ հողը քերելով տանէ:

Այգու ջրելք պիտի այգեկութից երեք չորս շա-
բաթ առաջ դադարեցնել, եթէ ուզում ենք փոքր ի-
շատէ թունդ գինի ունենալ և թէ վազերը ժեժ չմը-
նան և ցրտելն ընկնելուց առաջ՝ կարմրած լինին: Այ-
դին պէտք է շըրել երբ օիդիում, միլդիու և բլէկոստ
ասուած հիւանդութիւնները երևան:

Գ. Ժ.

Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

1. ԱՅԻԿՈՒԹԸ ՍԿՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ: Այդեկութիւնը (բարձրադր սկսելու պայմանն է, որ խաղողը իր կտարհալ հասունութեան հասած լինի: Խաղողի հասունութիւնը նայերով երկրին, տարուայ եղանակին և խաղողի տեսակին շուտ կամ ուշ է սկսում: Հարաւային տաք կողմերում օգոստոսի սկզբներին խաղողը արդէն հասած է, այն ինչ հիւսիսային՝ մանաւանդ բարձրադրիք՝ կողմերում ընկնում է այդ հոկտեմբերի վերջերին, սակայն ուր որ էլ վինի, խաղողի հասունութիւնը մեզ ներկայացնում է հետևեալ նշանները. Խաղողը կորցնում է իր ժուռութիւնը և քաղցրանում, հատիկները փափկանում են, թափանցիկ դառնում, չանչից (քնթեռնից) թոյլ են կալած, կաշին կամ թեփուկը նուրբ է և մուգ ներկով (եթէ սկ է), կորիզը գորշ է և մսից հեշտութեամբ է բաժանում, իսկ չանչը փոխել է իր կանանչ դոյնը, բարակել ու մզացել:

Բայց յաճախ պատահում է, որ ստիպուած ենք հասունութիւնից առաջ սկսել այգեկութիւնը, մանաւանդ երբ յանկարծ վրայ են հասնում ցըտերը կամ շըլունակ անձրևները կամ թէ չէ փափի աերենները փաժամ թափուելուց՝ խաղողի քաղցրութիւնը այլ և առաջ գնում և մնում է նոյն դրութեան մէջ:

Զատ անգամ էլ պատահում է, որ խաղողի մի մասը արդէն հասած է լինում, միւս մեծ մասը գեռխակ, երբորդը չմշկած-չամիչ կտրած, որ դժուարեցնում է միանգամից այգեկութը սկսել: Այդպիսի հանգամանքներում այգետիրոջ աշալըջութիւնից է կախուած յաջող դիպուածները ձեռքից շժողնել:

Հարկ չկայ շտապերու, քանի որ եղանակը ներում է, մինչև անգամ և այն միջոցին, երբ խաղողի մեծ մասը լաւ հասած է, բայց երբ արդէն ցուրտը ընկել է և մռայլ երկինքը արեմ յոյս չէ տալիս, անօգուտ է սպասելը:

2. ԱՅԻԿՈՒԹԸ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ: Այգեկութից մի երկուշաբաթ առաջ պէտք է քաղհանել այգու ժանգաները, խոտերը, ուղղել ծոռուած նեցուկները, շալ կապած վազերի մէջտեղը ճանապարհ բանալ, աւելորդ տերեններն ու երկար շիւերի կլուխը վեր տալ, հարթել լայգու սայլ բանող գնացքները, մի խօսքով հեշտացնել քաղի պայմանները:

3. ԱՅԻԿՈՒԹԸ ՕՐԸ պիտի ընտրել արև ու չոր եղանակին, խոնաւէու անձրևային օրը ոչ միայն դժուարեցնում է քաղի աշխատանքը, այլ և նուազեցնում գինու արժանաւորութիւնը:

Քաղը պիտի սկսել արեծագից յետոյ, երբ առաւտեան ցօղը անցել է և դադարեցնել է երեկոյեան զովը ընկներուց առաջ:

Այգեկութի աշխատութիւնը՝ նայերով այգու մեծութեան, բաժանում են մի քանի խումբ մշակների

վերայ, այն է քաղողների, դարտկողների, տուն կրողների և վերակացուների:

Քաղողները, որ ամենից մեծ խումբն են կտղմում պիտի ունենան մի մի քաղլակ, (կժոց, սապատ, չահաղ, վեղրայ) և սուր դահակներ: Դրանք այդու ամեն մի շարքի գլուխը անցած՝ քաղում են մինչև միւս ծայրը և նոր շարքի գլուխը անցնում: Դրանք քաղում են միայն լաւ տեսակները, որոնք հասած են, կարմիրը և ճերմակը առանձին առանձին:

Դարտկողները լիբը քաղլակները տանում, դարտկում են սայլում դրած ամանները կամ եթէ հնձանը մօտ է ուղղակի հնձանը մամ շիրատունը: Քաղողների միւս փոքը խումբը խնամքով հաւաքում է թէ փտած ու ժուռ մնացած խաղողը և թէ ճիթը կը տրելոց թափուած հատիկները:

Վերակացուները հսկում են բոլոր մշակներին, որ պարապ չմնան և ամեն ինչ շուտով կատարուի և մաքուր: Տարը քաղողին բաւական են երկու դարտկորդ, մի հաւաքող փտածները, մի վերակացու և մի սայլեթէ հեռի է տունը:

Խաղողը մի անգամ շիրատուն մտնելով, ընկնում է զինեգործի ձեռը, որը նորից ընտրութիւն անելով, պատրաստում է զինին, որի մասին խօսելը մեր նպակաղմում:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲՆՈՒԹԵՍՆ ՀԱՐՈՒՑՆԵՐ, ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆՆԵ,
ՊԱՐԱԶԻՏՆԵՐ
ԳԼՈՒԽ Ա.

ԲՆՈՒԹԵՍՆ ՀԱՐՈՒԾԾՆԵՐ

Վազը իր աճելութեան ընթացքում ենթակայ է շատ հարուածների, թէ ընութեան կողմից, թէ միջատների և թէ բուսական կամ կենդանական պարագիտների: Այդ հարուածները երբեմն թեթև են լինում և երբեմն էլ այնպէս սաստիկ, որ երկար ժամանակ իրենց հետքը թողնում են կամ վազը բոլորվին փշացնում:

Բնութեան հարուածներ ասելով մենք հասկանում ենք՝ ա, ցրտահարութիւնը. թ, կարկուտը. դ, սաստիկ քամիները. դ, ծաղկի թափուելը կամ խըշկուիլը. ե, խաղողի անկանոն զարգանալը կամ փշանալը. զ, խաղողի այրուելն ու փտելը:

Ա. Յ Բ Տ Ա. Հ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Վազերը կարող են ցըտահարուիլ 1, աշնանը, 2, ձմեռը և 3, գարնանը:

1. Ազնան ՑՐՏԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ, որ շատ քիչ է պատահում, այն ներգործութիւնը ունի, որ շատ վագերգեռ չհասած, չկարմրած, չորանում են, իսկ եթէ դեռ խաղողը վերան է, ցրտահարում է և խաղողը ու թղկում, գոյնը թոշում։ Աշնան ցրտահարութիւնը պատահում, է, երբ առատ անձը և ներկից յետոյ յանկարծ հիւսիսային ցուրտ քամի է վշում։ Այն տեղերը, ուր յաճախ է պատահում ցրտահարութիւնը, առաջը կարելի է առնել միայն վաղահաս վագեր տնկելով։

2. ՀՄԵՌՈՒՄՑՅ ՑՐՏԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ։ Վազը քնած ժամանակը աւելի դիմացկուն է ցրտի առաջ՝ քան բան անում. բայց երբ ցրտութեան աստիճանը 10—15-ի է հասնում գերօյից ցած, այն ժամանակ կամ վազը ամբողջապէս է ցրտահարում մինչև հողի երեսը և կամ կոներն ու մատները։ Երբեմն պատահում է, որ աւելի ցած աստիճանում ևս (օրինակ—8⁰) ցած ու խոնաւ տեղերում ցրտահարում են վազի շիւերը և դրանց փոխարէն վազի քոթուկից կամ կոներից գուրս են զալիս նորերը, որոնք շատ նուազ են լինում։

ՀԿՄԵՐՈՒԱԾ վազերը ցրտերին լաւ են դիմանում քան կտրուածները,

Այն կողմերում, ուր ձմեռը խիստ է և երկիւղ կայ ցրտահարուելու, պէտք է մատնացուները կամ ամբողջապէս վազը թաղել հողի տակ։

Այն դէպքում երբ վազը ամբողջապէս ցրտահարուի և այն մեծ քանակութեամբ, պէտք է հանոտել և նորերը տնկել. եթէ քիչ է ցրտահարուած մասերը՝ պիտի կտրել և թողնել որ նոր շիւեր տայ և կամ

դետնի երեսից քիչ ցած քոթուկը կտրելով, պիտի պատուաստել, որ աւելի ձեռնտու է, որովհետև աւելի շուտ պտուղ կստանանք։

3. ԳԱՐԱՆՑ ՑՐՏԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ։ Վազերը գարնանը յանախ են ենթարկուում ցրտահարութեան քան ձմեռը, մինչև անգամ աւելի տաք կողմերում. միայն այդ ցրտահարութիւնը այնքան վտանգաւոր չէ վազի համար, որովհետև բոլորովին չէ վշացնում շիւերը, միայն տարուայ բերքիցն է զրկում այգետերոջը։

Գարնան ցրտահարութիւնը երկու կերպ է լինում, մինը ասւում է սաոցային ցրտահարութիւն կամ սեւ ցրտահարութիւն, միաը սպիտակ։

ա. Սաոցային կամ սեւ ցրտահարութիւնը (զարաշումա) առաջ է գալիս մթնոլորդի ընդհանուր ցըրտութիւնից և այդ պատահում է զլիաւորապէս վազելու նոր բացուած ժամանակը։ Երբ մթնոլորդը և հոգը են և սառուցքի հալոցը դանդաղ ու յաջորդաբար է գնում, վազերը այնքան երկիւղ շունին սառնամանիքից վտանգուելու, բայց ընդհակառակն մեռնցը եթէ արագ է կտարարում, նոր շիւերը մեռնում են և շորանում և շատ անգամ մատներն ու կոներն ևս փշանում են, Այդ դէպքում վազը մի քանի տարի պտուղ չէ տալիս և պէտք է տալից կտրել, որ նոր շիւեր ձգէ կամ թէ ինչպէս ասացինք, կտրելուց յետոյ պատուաստել։

Ակ ցրտահարութիւնը աւելի վնասում է բարձր կիրք ունեցող վազերին, քան ցած ու պաշտպանուածներին, այսպէս և այն այգիները, որ ընկնում են հիւ-

սիսային արևելքան և արևմտեան կողմերը, աւելի են
ենթարկում ցրտահարութեան քան հարաւայինները:

Սև ցրտահարութեան առաջն առնելու միակ հր-
նարը այն է, այնպիսի վագեր տնկել, որոնք ուշ բաց-
ւող են և վագերը պահել գարնանը կտրել:

Բ. Սպիտակ ցրտահարութիւնը (այսպը կտրելը)
պատահում է հողի ցրտութիւնից, որ փոխազրում է
իրեն աւելի մօտ գտնուած շիւերին և մինչև անդամ
0°-ի (զրօ գրադուսի) ժամանակ ևս փշացնում է
նրանց աշքերը:

Սպիտակ ցրտահարութեանը աւելի ենթարկում
են ցած ու խոնաւ դիրք ունեցող այգիները և այն
ապրելի վերջերին կամ մայիսի սկզբներին առաւօտ-
եան չորս կամ հինգ ժամին, երբ գետնի երեսը գրտ-
նուած մարմինները իրենց տաքութիւնը հետզհետէ
կորցնելով՝ այնքան ցրտանում են, որ մթնոլորտի
դոլորշիները վերան նստելով՝ սառչում են և եղեամն
(եղեմնը, բուզ) դնում:

Սպիտակ ցրտահարութեան դէմ առնելու հա-
մար կամ վագերը գետնից քիչ բարձր պիտի պահ-
ուին, կամ նրանք որևէ բանով ծածկուած պիտի լի-
նին, որ բաւական թանգ է նստում՝ դրա համար
առանձին ծածկոցներ պատրաստելով։ Վերջին ժա-
մանակներս գործադրում են և այս միջոցը. երբ գար-
նանը առաւօտեան դէմ, պարզ զիշերից յետոյ նկա-
տում են, որ ջերմաշափը 2 աստիճան տաքութիւնից
ուզում է ցածանալ, որ ասել է վտանգ կայ սպիտակ
ցրտահարութեան, վառում են այդու ճանապարհների
վերայ և թէ նրա շուրջը օր առաջ կուտակած աղբը,

տերևներն ու խոտեղինը կամ թէ ամանների մէջ սկ-
նաւթի տականքը կամ մազուտը, որոնց մուխը տա-
րածում է այդու ամբողջ տարածութեան վերայ և
պաշտպանում վագերին։

Ոչ պակաս նպաստում են այդու ցրտահարու-
թեան և նրա մէջ բած խոտեղինը. դրա համար էլ
այգին որչափ կարելի է գարնան մօտերը լաւ խոր
փորուած պիտի լինի և խոտերը փշացրած։

Երբ այգին ցրտահարում է, շպէտք է նրան այն-
պէս թողել, կարծելով որ եթէ պտուղ չկայ, անօգուտ
է ծախք անելը. Ընդհակառակն աւելի խնամք պիտի
տանել, որ յաջորդ տարին նա ուղղուած լինի և ար-
դիւնք տայ։

Բ. Կ Ա Ր Կ Ո Ւ Տ Ը Ը

Բնութեան տուած հարուածների մէջ ամենակա-
տաղին կարելի համարել կարկուտը, որ մի քանի ըռ-
պէին ամբողջովին կամ մասամբ փշացնում է ոչ միայն
նոյն տարուայ բերքը, այլ և վագերի շիւերն ու բա-
րսնակները ջատելով, ներգործում է և երկրորդ ու
երրորդ տարիների վերայ ևս։

Կարկուտը նայելով թէ վագի աճերութեան, որ
շրջանում է պատահել, թափուել է նա անձրկի
կամ քամու հետ, թէ առանց նրանց և ինչ ուժգնու-
թեամբ, լինում է ծանը և թեթի։

Ճանը հարուածուած է համարում վագը, երբ
կարկուտը պատահում է նրա աճերութեան առաջին

ըրջանում, այն է մինչև յունիս ամիսը և փշացնում
է ոչ միայն տերեն ու պտուղը, այլ և զօղերն ու
շիւերը՝ այն աստիճան զլատում, որ նրանց վերայ
շատ քիչ խռող կաչքեր են մնում նոր պտղատու
շիւեր ձգելու յաջորդ տարուայ համար:

Այդպէս վնասուած վաղը, եթէ անմիջապէս չենք
կտրում կարճացնում, բոլոր աւելորդ շիւերը տալիս,
վազի ոյժը կետրոնացնում մի քանի աչքի վերայ,
որ նրանից դուրս եկածները զօրեղանան և երկրորդ
տարին իբրև մատնացու (չիլինդ) ծառայեն, այն ժա-
մանակ նրանք թէ կտրատուած տեղերից և թէ քո-
թուկից բաւական փայտեղէն շիւեր են ձգում, որոնք
լաւ չեն հասնում, կարմրում, մնում են ժեժ (խակ)՝
թուլացնում են վաղը և երկրորդ տարին ևս գրեթէ
անպտուղ մնում:

Թեթև վնասուած կարելի է համարել վաղը, երբ
կարկուտը թէև փշացրել է բերքը մասսամբ կամ ամ-
բողովին, սակայն վազի բարունակները շատ ու քիչ
ազատ են մասցել զլատուելուց, այնպէս որ նրանք
կարող են տարուայ վերջին հասնել, կարմրել։ Այդպի-
սի վազերի վնասուած մասերը կտրելով և վերան-
կարճ մատնացուներ պահելով, յաջորդ տարին ուղղուում
են և պտուղ տալիս:

Երբ կարկուտը զալիս է վազի աճելութեան երկ-
րորդ շրջանում, այն է յունիսից յետոյ, այն ժամա-
նակ շիւերը բաւական զօրեղացած են լինում և զի-
մանում են հարուածին, թէև յաճախ պատահում է,
որ ամբողջ բերքը փշանում է, ինչի որ կարկուտը
խփում է ճթի կոթերին և նրանց հարուածում, դրա-

նից էլ խաղողի հատիկները չորանում՝ թափւում են,
իսկ ազատուածները՝ եթէ հասունանում են և զինի
ենք պատրաստում, այդ գինին մի առանձին անդու-
րիկան համ ու հոտ է ունենում:

Կարկտի տուած վնասը աւելի զգալի է լինում,
երբ պատահում է քամու հետ և կամ առանց անձրեի:

Սաստիկ քամիները շատ վտանգաւոր են վազի
աճելութեան առաջին երկու ամիսներին, նրանք թա-
փում են բոլոր մատաղ շիւերը, որ կակուղ ու շուտ
փշրող են այդ միջոցին, իսկ վազերի ծաղկած մի-
ջոցին քամին ինչպէս և անձրել թափում են ծաղկա-
փոշին և անպտուղ զարձնում։ Բայց եթէ քամին պա-
տահում է կարկտի հետ, հարուածը աւելի ևս սաստ-
կանում է։

Եթէ կարկուտը թափում է առաստ անձրեի հետ,
վնասը այնքան զգալի չէ լինում, անձրել թուլացնում
է նրա հարուածի սաստկութիւնը։

Պէտք է դիտել և այս, որ առհասարակ բաց ու
քամուց անպաշտպան այգիները աւելի են վնասում,
թէև կարկուտը ունի իր կապրիզները, նա ամեն տեղ
համահաւասար չէ թափում և մի օրինակ հարուածում։

Ինչպէս ցըտահարութեան ժամանակ, այնպէս և
կարկտի, չպէտք է աչքաթող անել այգին, շուտով
պէտք է վնասուած շիւերը կտրել, առողջ մասերը
կարճացնել, խոտերը քաղահանել, հողը վիխրացնել,
աւելորդ շիւերը կտրել, առողջ մասերը կարճացնել,
անպտուղ շիւերը (խշահարը, հարամին) տալ և ծծրմ-
բափոշի վչել, որ կծառայէ թէ իբրև օիգիումից ա-
զատ պահելու միջոց և թէ իբրև պարարտացուցիչ նիւթ։

Գ. Ս Ա Ս Ի Կ Ք Ա Մ Ի Ն Ե Ր Ը

Քամիները վնասակար են մանաւանդ վազի աճելութեան առաջին շրջանում, երբ փշրում են նոր շերը, որոնք դեռ չեն կապուած նեցուկների կամ փոռուած լարի վերայ:

Քամիները վնասում են և նոր պատուաստած վազերին, որոնք դեռ լաւ չամրայած պատուաստակալի վերայ, կեղեկի ճղուելուց՝ պոկ են գալիս:

Քամուց վազերը պաշտպանելու համար նըանց նեցուկների վերայ են կապում: Վազաշաբքերը քամու հոսանքին ուղղութեամբ են շինում սկզբից, որ վազերը մէկմէկի պաշտպանեն և այդու քամիներ փըշող կողմից խիտ տերե ունեցող բարձր ծառեր տընկում, որ նուազեցնում են քամու ոյժը:

Գ. ԾԱՂԿԻ ԽՇԿՈՒԻՒԼԸ (coulure)

Ծաղկի խշկուիլը, այն է առանց կոճակ կապելու շորանալ թափուիլը առաջանում է երեք զլիսաւոր պատճառներից.

ա. Ծաղկի անկանոն կազմութիւնից:

բ. Վազի չսփազանց օօրեղութիւնից:

գ. Եղանակի փոփոխութիւնից:

ա. Ծաղկի խշկում է երբ իր վերայ ունի միայն արական գործարանները, որոնք ըստ ինքեան պառող չեն կարող դառնալ: Պառողը այն ժամանակ է լինում, երբ արական կործարանները միասին են լի-

նում: Այդպիսի վազերը միայն պատուաստելով կարող են ուղղուիլ:

բ. Երբ ծաղկի խշկուիլը առաջանում է վազի զօրեղութիւնից, այդ դէպքում պէտք է աճելութիւնը նուազեցնել, այն է վազը երկար կտրել կամ շատ աշքեր պահել վերան, կուացնել կամ բարունակների զողերը կոտրել:

գ. Ծաղկի խշկուիլը զլիսաւորապէս առաջանում է եղանակի ներգործութիւնից. թէ ծաղկած միջոցին պատահած ցրտերը, թէ շարունակ անձրևները և թէ չոր քամիները թափում են ծաղկափոշին կամ չորացնում և կամ եղանակը ցրտացնելով, չեն թողնում որ ծաղկիլը կոճակ բոնէ:

Ընդհանրապէս ծաղիկը խշկելուց աղատ պահելու միջոցներից լաւը համարում է զօղերի կոտրելը և ծաղկելուց մի քիչ առաջ ծծմբափոշի փշելը:

Ե. ԽՍՂՈՂԻ ՍՆԿԱՆՈՒ ԶԱՐԳԱՆՈՒԸ

Խաղողի ճթի անկանոն զարգանալը (Millerandage) այն է, երբ հատիկների մի մասը դեռ կանանչ է ու մանր (սաշմա) միւս մասը կարմրած, միւսները սկացած, համարում են կամ միլդիու հիւանդութեան հետևանք և կամ ծաղկած միջոցին անձրևներ գալուց՝ եղանակի ցրտութեան, որը ներկութում է նըա վերայ կամ թէ չէ ծաղկափոշու անկանն բաժանուելուն:

Զ. ԽԱՂՈՂԻ ԽԱՆՉՈՒՒԼԸ

Խաղողի խանձուիլը (Echaudage) լինում է այն տեղերում, ուր ամառը սաստիկ շոգ է, երբ խաղողի ճթերը, երկար ժամանակ շուքում մնալուց յետոյ, բաց- տում են և ընկնում արևի ճառապայմների տակ. խան- ձուած ճթերը կարմրում են և եթէ դեռ ժուռ են, կարճ միջոցում չորանում են: Եթէ խաղողը քիչ է խանձում և այն շած (կէս քաղցը) ժամանակը, հա- տիկների կոթիկները կակում են ու կարմիր գոյն առնում, խաղողի սև տեսակները մնում են կարմիր, ճերմակները՝ կանաչաւուն, իսկ քաղցրութիւնը մինչև վերջը չէ աւելանում:

Խանձուելու աւելի ենթարկուած են այն վա- գերը, որոնք ցած են և գետնի երեսին, մօտ և կամ ջրալի պտուղունին, որոնց կոթերը հաստու կանանչ են: Խաղողը խանձուելուց ազատ պահելու համար վագերը չպէտք է ամառը բարձրացնել, ճթերը բա- նալ և ոչ էլ շատ տաք կողմերում, վագերը նեցուկի կապել:

Ե. ԽԱՂՈՂԻ ՓՏՈՒԹԻՒՆԸ

Այն խաղողները, որոնք բարակ կաշի ունին և ջլ- րալի են, անձրւային աշնանը՝ ցած դիրք ունեցող այ- դիներում երբեմ ենթարկում են փտութեան: Փտութեան առաջը առնելու համար լաւ միջոց- ներն են—խոր առուներ կտրելով գետնի աւելորդ ջլ-

ըերը չոբացնել, վազի քոթուկը բարձրացնել, որ շի- ւերը՝ եթէ առանց նեցուկի են՝ գետնին չդիպչեն և եթէ դրանք բաւարար չեն, այգեկութից մի քանի օր ա- ռաջ վազի տերևները տալ:

Տերևը թափելու համար լաւ է ընտրել ամպա- մած օր, պիտի թափել այն տերևները, որոնք ճթից ներքեւ են գտնելում և ոչ վերը. այդպիսով նպաստած կըլինինք ոչ միայն փտութեան առաջը առնելուն, այլ և խաղողի լաւ հասունութեան:

Մինչև այժմ եղած փորձերը ցոյց են տալիս, որ զեղնացաւի առաջը կարելի է առնել հետևեալ միջոցներով. կամ հողի կազմութիւնը փոխելով նրան շուտուող նիւթերով պարարտացնելով, կամ եթէ խոնաւութիւնը չափազանց է այգում՝ արխեր կտրելով չուրը այգուց հանելով և վերջապէս երկաթի արջասպը (յելեզնայ կոպօրօս, զաղ) շաղ տալով վազի բնի չորս կողմը: Երկաթի արջասպը գործադրում են այլայլ կերպով. կամ ամեն մի վազի համար վերցնում են $1\frac{1}{2}$ — $2\frac{1}{2}$ փունտ զաղ և այդ փոշիացնելով վազերի տակը խոր բաց անելուց յետոյ, շաղ են տալիս բնի չորս կողմը և կամ լուծում են մի վեղբայջում ու վազի տակը ածում. կամ թէ արջասպաչը թանձը խառնուրդով թափախում են հիւանդ վազերը, որ ամենից ընդունուած ձևն է:

Արջասպով թաթախելը որշափ վաղ է կատարում, այնքան լաւ է ներդրծում. առհասարակ քըսում են երբ տերել սկսում է հոկտեմբերին կամ նոյեմբերի սկզբներին թափուիլ: Քսելուց առաջ վազերը պէտք է կտրել աւելորդ շիւերից ու մաքրել:

Արջասպը ոչ միայն օգնում է վազերին զեղնացաւից, այլ և անտրաքնոզից. նա փշացնում է և բնի կեղևանքի տակ ապաստանած վնասակար միջատներն ու թրթուրները:

Արջասպաչը խառնուրդը կազմելու համար վազերին քսելուց մի երկու օր առաջ վերցնում են մի փայտէ աման, 8 վեղբայջուր ածում մէջը, մի զամփայտէ աման, 8 վեղբայջուր ածում միջոցի մէջ $2\frac{1}{2}$ —3 պուդ ծեծած երկաթիւղի կամ կթոցի մէջ

ԳԼ. Բ.

Հ Ի Ւ Ծ Դ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Վազերի հիւանդութեանց մէջ աւելի աչքի ընկնողներն են՝ 1, դեղնացաւը. 2, կաթուածը եւ 3, կարմրացաւը:

Ա. Դեղնացաւը (Chlorose): Այս հիւանդութեամբ բռնուած վազերի տերեները, որ առաջ կանաչ գոյն ունէին, հետզհետէ փոխւում, դեղնանում են և վերջ գոյն ստանալով թափուում: Դեղնացաւը սկսուում է գարնանը վազերի մի փոքր աճելութիւնից յետոյ. պատահում է որ տերեները ամառը ուղղուում են, երբ սաստիկ շողեր են լինում: Բայց յաճախ երբ հիւանդութիւնը առաջ գնացած է լինում, շողերից տերեները չորանում են, գորշանում, ինչպէս և անտրաքնողի ժամանակ:

Դեղնացաւի պատճառը համարում են հողի կազմութիւնը, որ չէ կարողանում սննդել բոյսին ինչպէս հարկն է, վազի սննդեան գործարանների թոյլ գործողութիւնը և կամ լոյսի պակասութիւնը:

թի արջասալ ածում և կախում ջրի մէջ և թողնում
մինչեւ որ լուծում է:

Վազերին թաթախելը լինում է հետևեալ ձևով,
առաջից երկու հոգի կտրում են վազի աւելորդ շերը,
իսկ երրորդը մի փայտի ծայրի փաթաթած
փալասը կոխում է խառնուրդի մէջ և նախ կտրուած
տեղերը քսում, ապա ամբողջ վազը:

Արջասպից թէ կտրուածքը և թէ վազը մուգ
գորշ գոյն են առնում և երկար ժամանակ պահպա-
նում այդ գոյնը:

Արջասպը պէտք է քսել և յաջորդ տարիներին,
մանաւանդ սաստիկ վարակուած այգիներում:

Երեք տարեկանից պակաս վազերի համար ար-
ջասպի խառնուրդը թոյլ պիտի լինի:

Բ. ՎԱԶԻ ԿԱԹՈՒԱԾԸ ԿԱՄ ԽԵՂԴՈՒԽԻԸ (apoplexie ou folletage): Այս հիւանդութիւնը պատահում է առհա-
սարակ յուլիսին կամ օգոստոսին, երբ վազը իր ա-
ռողջ դրութիւնը յանկարծ կորցնում է և այստեղ ու
այնտեղ վազի տերևները կորցնում են իրենց փայլը,
սկսում են թոռմշկել ու չորանալ, չորանում են և շե-
ւերը բարձրից դէպի ցած, ապա մեռնում է և վազը:
Այս հիւանդութիւնը պատահում է պարարտ ու խոր հո-
ղերում, մանաւանդ ներքեն շերտը խոնաւ և ջրջրոտ
տեղերում և այն անձրևային տարիներին:

Այս հիւանդութիւնը առաջ է գալիս ոմանց կար-
ծիքով նրանից, երբ վազը շուրջի մէջ է աճում և այն
խոնաւ տեղ. ջրային մասերի դոլորշիացումը զան-
դաղ է գնում, որից և նա թոյլ կազմութիւն է ստա-

նում, վերահաս շոգերին վազի տերեները աւելի շատ
են ջրային գոլորշիներ բաց թողում, քան որ իրենք
են ստանում արմատներից, ուստի տերեւ անջուր
մնալով ցամաքում է ու թառամում և եթէ երկար
շարունակում է այդ, չորանում են հետք և շիւերը:

Կաթուածի դէմ ոչ մի միջոց չկայ. կաթուածա-
հար վազը պիտի հանել և տեղը նորը տնկել. մինչեւ
անգամ եթէ վազի մի մասը կենդանի էլ լինի, դար-
ձեալ օգուտ չէ, որովհետև առաջուայ ոյժը չէ ունե-
նում, որչափ էլ լաւ խնամք շտանեն:

Գ. ԿԱՐՄՐՈՒԿ: (Rougeot): Այս հիւանդութիւնը եր-
նշաններով նման է կաթուածին. դարձեալ պատա-
հում է վազի աճելութեան ժամանակ առաջին տա-
քերը ընկնելուց և այն թաց ու խոր հողի մէջ: Հի-
ւանդ վազերի տերեները կնճռոտում են, ճլութիւնը
(կակզութիւնը) կորցնում, կարմրում, իսկ ջղերը միայն
մնում կանաչ. խաղողը թռմշկում է և շիւերը դեղ-
նում. եթէ հիւանդութիւնը սաստիկ է՝ չորանում են
տերեները և թէ վազը գլխից մինչեւ տակը փշանում.
Երբեմն պատահում է որ շիւերի մի կողմը գորշ գոյն
է առնում, միւս կողմը մնում է կանաչ: Վազը չէ միո-
նում կարմրուկի ժամանակ, միայն նուազում է բեր-
քը և երբեմն չորանում մինչեւ գետնի երեսը:

Կարմրուկի առաջն առնելու համար ամենալաւ
միջոցը կարելի է համարել դըենաժը (այգուց չուր
դուրս բերելը արխերով), հիւանդ վազերի կարճ կըտ-
րելը, քոթուկի վերայ պատուաստ անելը, ամառը
փորելը, քաղհանը և ծծումը փշելը:

տիզպան 1845 թուականին առաջին անգամը նկատում է այդ հիւանդութիւնը թամիզ գետի ափին գտնուած մի այգում։ 1849 թուին Բեռկէլէյ գիտնականը քննելով այդ հիւանդութիւնը՝ վերագրում է վրիպտոգամ ասուած պարագիտներին և անուանում է Տիւքիւթի օիդիում։ Քիչ ժամանակից յետոյ այդ հիւանդութիւնը երևում է Հիւսիսային Փրանսայում և Բելճիքայում, իսկ 1851—1856 թ. սաստիկ հարուածներ է տալիս Փրանսայի այգիներին, մինչև որ ծծումբի գործադրութիւնը ընդհանրանալով՝ առնում է հիւանդութեան առաջը։

Օիդիումով վարակուած վագերը շատ դանդաղ են զարգանում, տերենների կանաչ գոյնը փոխուում է դորշ գոյնի, ծածկում է մոխրագոյն փոշիով, որից բուրսոի հոտ է վշում։ Աւելի մօտիկ քննելով, նկատելի է, որ տերենների երկու երեսներն էլ այստեղ այնտեղ խալեր, պուտեր են կազմել, մի քանիսը սպիտակ փոշով ծածկուել, որ ձեռք տալուց կասես ճարպոտ լինեն, իսկ միւսները մոխրագոյն են (պատկ. 71)։ Առաջինները ցոյց են տալիս որ ցաւը նոր է սկսուած, յիրաւի երբ եղանգով քերում ենք երեսը նկատում ենք որ տակը դեռ կանանչ է և առողջ, իսկ երկրորդները, այսինքն մոխրագոյնները՝ ընդհակառակն ցոյց են տալիս, որ ցաւը զարգացել է, որովհետև մոխրագոյն փոշու տակ նկատում են սև գծեր։ Ճիւերի ծայրերին գտնուած մատաղ տերենները օիդիումից ճարճում են կուշ գալիս, որից և աճելութիւնը կանգնուում է։ Փոքրիկ ու դեռ կանաչ շիւերը ծածկուում են սպիտակ բծերով, ապա մոխրագոյն, ինչպէս որ տե-

ԳԼ. Գ.

ԲՈՒԾԿԱՆ ՊԵՐԱԶԻՑՆԵՐ

Բուսական պարագիտների մէջ ամենից շատ վնասում են վազերին ա. Օիդիումը, բ. Միլդիուն, գ. Անտրաքնոզ, դ. Սեւ փտութիւնը, ե. Արմատի փտութիւնը եւ գ. Գոճամօրուսը։

—○—

Այդ պարագիտները, բացի գօճամօրուսը, պատկանում են մնկային կամ զրիպտոգամ ասուած դասակարգին, որոնք յայտնի են կարճ միջոցում իրենց սարսափելի արագ աճելութեամբ։ Դրանք հարուածելով վազերին, փշացնում են խաղողի բերքը և երեմնոյն իսկ վազերը, ուստի չպէտք է սառնասրութեամբ վերաբերուել այդ հիւանդութիւնները պատճելուց, այլ մեծ եռանդով պիտի դիմաղրել և օրառաջ վտանգի առաջը առնել։

Ա. Օ Ւ Գ Ի Ո Ւ Մ (Oidium)

1. Հիւսնդութեան զաթութիւնը եւ վարսութած վաշերի տեսքը։ Տիւքիւթ անունով մի անդիմացի պար-

ըմբերի ժամանակ և այդ բծերը հետզհետէ աւելի մեծ տեղ են բոնում: Սաստիկ վարակուած շիւերը լաւ չեն հասունանում, կարմրում, սևանում են և շատ անգամ չորանում (պատկ. 72):

Օիդիումից խաղողի գիլաները տերևներից ու շիւերից աւելի են վնասուում. օիդիումը երբ հարուածում է զեռ կոճակ կապած ժամանակը, նրանք չորանում թափուում են, բայց երբ հիւանդութիւնը պատահում է ժուռ (զորա) ժամանակը, մի աստիճան էլ մեծանում են և փոշու ծածկած տեղերը զորշ բծերով ծածկում, կաշին հաստանում, գիլաները ճաքճրում և կորիզները բացուում (պատկ. 73, 74): Երբ այդ ճաքճրութիլլ պատահում է վաղ, զորա ժամանակը, արեից չորանում է և բերքը կորչում. երբ խաղողը ջուր ընկնելուց յիտոյ է պատահում ճաքճրութիլլ և եղանակը չորային է, վնասը փոքրանում է. խոնաւ տարիներին ընդհակառակն խաղողը փառում բորբոսնում է, մի խօսքով օիդիումի ներկայութիւնը մի կողմից կանգնեցնում է վաղի աճելութիւնը, միւս կողմից փշացնում բերքը:

2. Հիւսնողութեան ԶԱՐԴԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Օիդի-է և տաքութիւնը. մթնոլորդի խանաւութիւնը շուտ տեսքով ինչպիսին տալիս են ծովային քամիները շատ նպաստում են հիւանդութեան զարգանալուն, ընդհակառակն առատ անձրևները շատ անգամ կանգնեցնում են հիւանդութիւնը: Օիդիումը առհասարակ սկսում է երբ օրուայ-

միջին տաքութիւնը հասնում է 9—10 աստիճան Ռէօմիւրի. աւելի զարգանում է երբ միջին տաքութիւնը 16 աստիճանի է հասնում և մթնոլորդը խոնաւ է: Սաստիկ ջերմութիւնը, օրինակ 30—36 աստիճան, կանգնեցնում է կամ բոլորովին փշացնում հիւանդութիւնը—թէև նրա մնացորդները յաշող եղանակին կարող են նորից զարգանալ:

Օիդիումը նկատուած է որ բոլոր վազերին միատեսակ չէ խփում, սպիտակ խաղողները աւելի են վարակում քան կարմիրները. այսպէս և այդու դիրքը ունի իր նշանակութիւնը, խոր ընկած ու շուք բլունած այգիները աւելի ենթարկուած են դրան, քան բացօղեայ և ազատ այգիները:

3. ՀԻՒՍՆԴՈՂԹԵԱՆ ԱՌԱՋՆ ԱՌԵԿՈՒ ՄԻՃՈՑԸ ԵՒ ԺԱՄԱԿԸ: Օիդիումի առաջն առնելու ամենայաջող միջոցը ծծմբափոշին է, որ նստելով տերեկի կամ վազի միւս մասերի վերայ, տաքութեան ներգործութեամբ գոլորշիանում է և նրա գոլորշիները խեղում փշացնում են այդ պարագիտները, տերեկը կրկին իր կանաչ գոյնն է առնում և վազը աւելի զուարթանում:

Ծծումբ փշելը պիտի լինի տարին պակասը երեք անգամ: Առաջին անգամը փշում են հենց որ երեսում են հիւանդութեան նշանները, այսինքն երբ տերեները զեղին կամ զորշ զորն են առնում կամ նրանց երեսին պուտեր երեսում կամ թէ գիլակամ նրանց երեսին պուտեր երեսում կամ փշի է նկատների վերայ թեթև կերպով սպիտակ փոշի է քիշ վաղ լում: Բայց ծծումբ փշելը աւելի լաւ է քիշ վաղ

սկսել, գեռ այդ նշանները չերեացած, այն է երբ զօղը (շիւը) երկու վերշոկաչափ երկարացել է:


Երկրորդ ծծումբ փշելը պիտի կատարել վազի ծաղկած միջոցին, երբ օիդիումը աւելի յաջող պայմաններ ունի տարածուելու, այդ միջոցին ծծումբ փշելը ոչ միայն ներգործում է հիւանդութեան վերայ, այլ և նպաստում է պտղաբերութեանը:

Երրորդ անգամ ծծումբ փշելը պիտի լինի խաղողը շինուած (ջուր ընկնելուց) մի քանի օր առաջ, որ բերքը փշանալուց պահպանում է:

Ամեն մի ծծումբ փշելու ժամանակամիջոցը պիտի 25 օրից աւել չանցկացնել:

Երբ ծծումբ փշելուց յետոյ անձրև պատահի, փոշին թափուի, պէտք է նորից փշել, բայց քիչ քաշնակութեամբ: Պէտք չէ սաստիկ շողերին ծծումբ փշել, որովհետև կարող է խաղողը խանձուել և ոչ էլ սաստիկ քամիներին, որ քշում հեռու է տանում փոշին: Ծծումբ փշելուց յետոյ այդին կարելի է փորել միայն 5—6 օրից յետոյ, որ հողի երեսին փռուած ծծումբը կարողանայ գոլորշիանալ: Երբ այդին բժըշկուել է միլդիուի դէմ, այն ժամանակ ծծմբափոշու փշելը մի քանի օր յետոյ պիտի կատարել:

Ծծումբ փշելը կարելի է կատարել ամեն եղանակին, բացի քամիներից և սաստիկ շողերից. յաջող ելք է ունենում երբ 20 աստիճան ջերմութիւն կայ, որից ծծումբը շուտով է գոլորշիանում և շուտով ներգործում: Ինչ էլ որ մինի, պէտք է ընտրել տաք և շոր եղանակը բարակ քամու հետ, որ հեշտացնում է շաղ տալու գործը:



4. ծճՄԲԱՓՈՉՈՒ ՔԸՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՀԵԼՈՒ ՀԵԽԸ:
ԾՃՄԲԱՓՈՉՈՒ ՔԸՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԻ ՊԵՍԵԱՏԻՆ Այգուն
Կախուած է թէ իրեն հիւանդութեան և թէ վազերի
Պարզացման աստիճանից, ծՃՄԲԱՓՈՉՈՒ մանը կամ
խոշոր յատկութիւնից, զործիքի կատարելագործու-
թիւնից և մշակի վարժութիւնից:

ԾՃՄԲԱՓՈՉԻՆ ծախում է երկու տեսքով, մինը
աղած, միւսը սաստիկ չերմութեան միջոցաւ փոշիա-
ցրած, որ ասւում է ծՃՄԲԻ ծաղիկ (ԾԵՐԿԱՅ ԱՅԵՒՄ).
արտաքին տեսքից դրանց զանազանել գժուար է,
խոշորացուցի տակ միայն կարելի է իմանալ որն է
աղածը և որը իսկական ծաղիկը: Երկու տեսակն էլ
զործ են ածում, բայց ծՃՄԲԱԴԱՂԻ առաւելութիւ-
նը նրա մէջն է, որ աւելի մանը լինելով՝ շատ տեղ
է բռնում տերեկի վերայ և աւելի շուտ ներգործում,
միւս կողմից նա քիչ է գնում քան աղածը, որը
ծանը է քաշում:

ԾՃՄԲԱՓՈՉԻՆ առաջին անգամ վշելուց, մի դե-
սեատին այգուն գնում է մօտաւորապէս 1 պուդ, երկ-
լորդ անգամը 2 պ., երրորդ անգամը 2 պ. 20 փունտ.
ընդամենը մօտ 5 պ. 20 փունտ, իսկ խոշոր տեսակը
գնում է 6—7 պուդ:

ԾՃՄԲԱՓՈՉԻՆ վազերին վշելու համար զործ են
ածում զըա համար յատուկ պատրաստուած փուքսեր,
որ տարածուած են և Կովվասում 1 լ. 50 կոպէկից
մինչև 3 լ. արժողութեամբ. կայ և աւելի կատարե-
լազործուածը՝ տորպիլ ասուածը, որ թէն թանգ, բայց
միանգամից 5—6 փուքսի դեր է կատարում (պ. 69):

ծծմբափոշու մի պուղը արժէ թիֆլիզում 1 ըուբի
85 կ.—2 ը.: Փուքսը բանեցնելուց նրա արկղիկի
մէջ նախ լցնում են ծծմբափոշին և վաղաշարքի գը-
լուխն անցնելով, քամին որ կողմից փշում է այն կող-
մից սկսած փշում և ամբողջ վազի վերայ մաղում
ծծմբափոշին:

Ծծումբը ոչ միայն փշացնում է օիդիում հիւան-
դութիւնը, այլ և նա նպաստում է վազի աճելութեա-
նը, ինչպէս պարարտացուցիչ նիւթ և աւելի զուարթ
տեսք տալիս, իսկ ծաղկած միջոցին ծծումբ փշելը
օգնում է պտղաբերութեանը, որովհետև ծաղիկը խըշ-
կուելուց ազատում է:

Բ. ՄԻԼԴԻՈՒ (Mildiou կամ Peronospora viticola)

1 Միլդիու չիւսնդութիւնը ուսումնասիրել է Բարի
Ամերիկայում 1863 թուին. առաջին անգամ ֆը-
րանսիայում ծահօթացել են 1878 թուականին և այ-
նուհետև տարածուել է ամբողջ Եւրոպան, իսկ այսօր
բոնած է հին և նոր ցամաքի ամեն կողմերը: Միլ-
դիուն աւելի կատաղի է քան օիդիումը, մի քանի օ-
րուայ մէջ մինչև անգամ խաղողի հասունութեան մի-
ջոցին, տեսնում ես հարուածեց փշացը բոլոր բեր-
քը, թուլացը զագերը և եթէ այդպէս երկու երեք
տարի հարուածում է ու մնում է առանց դարմանե-
լու, փշացնում է և վազը:

2. Միլդիու սրջաքին նշանները եւ ՏՈՒԱԾ ՎՆՍՍՆԵՐԸ:
Միլդիուն հարուածում է վազի կանաչ մասերը, այն

է մատաղ շիւերը, ժուռ խաղողը և մանաւանդ տե-
րել. նա ճիւղաւորւում է ներքին գործարաններում,
հետղհետէ ծծում փշացնում է սննդարար հիւթերը,
վերջը զուրս դալիս արտաքին մասը և սպիտակ կաթ-
նազոյն փշով ծածկում տեղ-տեղ: Այդ փոշին ընդ-
հանրապէս երեսում է տերեկի աստառի վերայ չղերի
մօտերը (պատկ. 75) շատ հազիւ է պատահում երե-
սին, չիւանդութեան սկզբում նկատելի են միայն տե-
րեւների երեսին դեղին կղզիացած պուտեր, որ փոշին
դնելուց յետոյ դառնում են բաց գորշագոյն, վերջը
մղանում են, աւելի մեծանում, միանում միմեանց,
ճղբճղբում, չորացած տերեկի կերպարանք առնում
ու թափում:

Բայց որովհետեւ դեղին պուտերը կարող են և ու-
թիշ պատճառներից լինել և տարակուսանքի մէջ ձգել
այգետիրոջ, ուստի հաւաստիանալու համար՝ դեղին
պուտեր ունեցող տերեւներից քաղում են զնում մի
տաք ու խոնաւ տեղ և մի երկու օրից նայում, եթէ
նրանց երեսին դեղին պուտերին համապատասխան
տեղերում աստառի վերայ նկատում է վերը յիշած
սպիտակ փոշին, ասել է պատճառը միլդիուն է: Երբ
միլդիուի զարգացման պայմանները անյաշող են, ինչ-
պէս օրինակ երաշտ եղանակներին, դեղին պուտերի
թիւը շատ քիչ է լինում, այդ նկատում է և աշնա-
նը, երբ պարագիտը արդէն սպառած է լինում սընն-
դարար հիւթերը, որից և շուտով չորչորատում, վեր
են թափում պուտեր դրած տեղերը և ծակծկում
տերեկը:

Միլդիուն շատ քիչ է պատահում, որ հարուա-

ծում է մատաղ կանաչ շիւերն ու ծաղիկը. այդ դէպ-քում ճթերը ժուռ են մնում, ծածկում վերջը սպի-տակ փոշով, կաշին թումշում է, խաղողի գիլաները կնճոտում և փշանում ամբողջապէս:

Նայերով հիւանդութեան զարգացմանը, կարող է փշանալ բերքի մի մասը կամ բոլորը:

Մելդիուով վարակուած ու հարուածուած այգու տեսարանը շատ տխուր է. ուր որ նայում ես աշքի են ընկնում տերեւթափ եղած մերկ շիւերը՝ վերան չորացած կամ բոլորովին կանաչ մնացած ճթերով. այդպիսի խաղողից ստացած դինին թթու է, գոյնը թռած, թոյլ և առանց բուկետի:

Մելդիուի տուած վնասը զգալի է երբ բունում է խաղողը չած ժամանակը, որ մի քանի օրում փշա-ցնում է ամբողջապէս. վնասը թեթև է անցնում, երբ պատահում է հասունութիւնից քիչ առաջ կամ այգե-կութից յետոյ. վերջին դէպքում տերեւների անժամա-նակ թափուելուց, վազերը չեն կարմրում ու ժեժ են (խակ) մնում:

Սակայն խաղողի բոլոր տեսակները միակերպ չեն վարակում, կան որ շատ դիմացկուն են, կան քիմացկուններ և կան որ դիւրաւ վարակող են:

3. ՄԻԼԻԹԻՈՒԻ ԱՃԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Մելդիուի աճե-լու և տարածուելու համար պէտք է սաստիկ բարձր տաքութիւն և նոյն ժամանակը չափազանց խոնառու-թիւն: Այդ երկու պայմանների միացած ժամանակը հիւանդութիւնը շատ շուտով է առաջ գնում, այնպէս որ երկու օրում կարող է տարածուել ամբողջ այգին:

Միլդիուի առաջին երեալը լինում է մայիսի 14—15-ը տաք տեղերում, իսկ աւելի բարեխառն տե-ղերում 15—30-ը. դիտել են որ հիւանդութիւնը կա-րող է երեալ մինչև անգամ սեպտեմբերին ու հոկ-տեմբերին:

Մելդիուն աւելի աճում է ցած ու խոնաւ տեղե-լում, լճերի, գետերի ու ծովերի ափերին, յորդ անձ-րներից կամ առատ ցողից յետոյ և այն բարձր տա-քութեան միջոցին, այն ինչ ջրերից հեռի, թմբերի զիներին կամ բաց հովիտներում, ուր չոր քամիներ են խաղում, շատ քիչ է պատահում:

4. ՄԻԼԻԹԻՈՒԻ ԱՌԱՋՆ ԱՌԱՆԿՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ: Մելդիուի առաջն առնելու համար պէտք է առաջնորդուել հե-տեալ կանոններով, որ այժմ ընդհանրացած են ֆը-րանսիայում.

ա. Պէտք է հիւանդութիւնը դեռ չզարգացած սկսել գարմանը, այն է վազերը բացուելուց, որպէս-զի մատաղ զօղերը և թէ պտուղը պաշտպանուած լինին հիւանդութիւնը երեալուց:

բ. Դարմանելու ամենակտրուկ միջոցը հեղուկ պիտի լինի:

գ. Հեղուկը սրսկում են ամբողջապէս տերեւների երեսի կողմից, աստաղի վերայ սրսկելը նշանակու-թիւն չունի:

դ. Սրսկումը պիտի կատարել մի քանի անգամ. առաջին անգամ սրսկելը պիտի լինի երբ զօղերը ^{1/4} արշին երկարացել են, կամ 5—8 տերեւ են դուրս ե-կեւ ինչքան էլ որ եղանակը անբարեյաջող լինի միլ-

դիութի զարգացման համար: Երկրորդ սրսկելը պիտի
լինի 20—25 օր առաջնից յետոյ՝ վազի ծաղկելուց
առաջ կամ յետոյ, երրորդ անգամ պիտի այդեկու-
թից 15—20 օր առաջ կատարել, որ խաղողի վերայ
վնասակար ազդեցութիւն չանէ: Իսկ երբ միլդիուն
սաստիկ տարածուած է, այն ժամանակ լաւ է վա-
զերին չորրորդ և հինգերորդ անգամը ևս սրսկել:
ե. Եթէ օիդիումի առաջն առնելու համար ծծըմ-
բափոշի է վշած այգում, պէտք է 5—6 օր ժամա-
նակ տալ, որ նա ներգործէ և ապա թէ միլդիուն
դէմ սկսել բժշկութիւնը:

5. Միջիուի դէմ դործսական չեղուկները են.

ա. Բորդիեզի լելը (Bouillie Bordelais).

բ. Երկնային ջուրը (Eau Celeste):

գ. Բուլրզոնիոյ լելը (Bouillie Bourguignonne):

դ. Ժանզառը: (Ярь мѣдянка):

ե. Սապնալելը (Bouillie au Savon):

ա. Բորդիեզի լելը պատրաստելու համար վերց-
նում են.

Պղնձարշասպ (մѣдный купоросъ) (5—7 $\frac{1}{3}$ փ.)

կիր, հանգած (5—7 $\frac{1}{3}$ փ.)

ջուր 8 վեղրօ.

Խառնուրդը կազմելու համար վերցնում են
պղնձարշասպը մանրում լցնում են մի կարգին-
կի մէջ և կախում մի կիսատակառում, դրա վերայ
ածում են 8 վեղրայ ջրից 6—8 շիշ տաքացրած,
ջուր, որ շուտով է հալեցնում արջասպին: Մի ու-

րիշ ամանում կամ չանազում վնում են չհանգած կի-
լը և դարձեալ այդ 8 վ. վերցրած ջրից վերան ա-
ծում են այնքան, որ կիրը ծծելով հանգչում է և
փուխը դառնում: Այդ վիսրացած կրի վերայ ածում
են մնացած ջուրը ու խառնում, որ նա մերւում է
իրար ընկնում: Այդ կրաջուրը քիշքիշ թափում են
արջասպաջրի գլխին և վայտով լաւ հարում. արջասպը և
կիրը իրար խառնուելով կազմում են մի կապտագոյն
քիչ թանձը հեղուկ, որ հանգիստ մնալուց՝ տակը դիրտ
է կապում, ուստի բանեցնելուց առաջ, ամեն անգամ
պիտի խառնել կիսատակառը:

Արջասպը՝ տաք ջուրվ հալեցնելուց յետոյ, պիտի
թողնել մինչև յրտանայ և ապա կրաջուրը խառնել:

Վազերին առաջին անգամ սրսկելուց կարելի է
այդ խառնուրդը մի քիչ թոյլ անել:

բ. Երկնային ջուրը: Գրա կազմութիւնն է

Արջասպ 2 ֆուն 42 դոլ.

Ամոնեակ 22⁰-ի . . 2 շիշ

Ջուր 8 վեղրոյ:

Առաջ արջասպը լուծում հալեցնում են այնպէս,
ինչպէս վերը յիշեցինք, վայտէ ամանում, յետոյ ցըր-
տանալուց 2 շիշ ամոնեակը թափում են վերան և
լանեցնելուց առաջ մնացած ջուրը խառնում հետո:
Նայելով այդու մեծութեան, պիտի հաշուել ամեն
կեսեատինին 20—25 վեղրայ հեղուկ և այնպէս պատ-
րաստել խառնուրդը: Սրսկումը վազերի վերայ լաւ
պիտի անել, որ տերմաները բոլորովին թթջուին: Հեղու-
րը գործադրելուց, խառնուրդը պակասը 10 ժ. առաջ
պիտի պատրաստել և հետը որ և է բան շխառնել:

Որպէսզի երկնային ջուրը տեղեները շայթ,
դրա համար խառնուրդը կազմում են և այսպէս.

Վերցնում են բուրդեղի լելը սովորական կար-
գով պատրաստուած, միայն քիչ թոյլ և հետը խառ-
նում ամոնեակլ:

գ. Բուրգունիոյ լելը: Բուրգունիոյ լելի կազմու-
թիւնն է՝ թոյլը—

Պղնձարջասպ $2\frac{1}{2}$ փ.

Հասարակ սողան 90° -ի 5 փ.

Ջուր 8 վեղըոյ:

Զօրեղը—Պղնձարջասպ 10 փ.

Սողան 15 փ.

Ջուր 8 փ.:

Նախ սովորական կարգով լուծում են արջաս-
պը, յետոյ սողան ջրում հալեցնելով խառնում ար-
ջասպաջրին: Որպէսզի այդ խառնուրդը տեղեներին
լաւ կպշի, 8 վեղըա ջրին խառնում են և $1-1\frac{1}{2}$
փունտ շաքարաւազ:

Բուրգունիոյ լելի առաւելութիւնը նրա մէջն է,
որ սրսկիչ գործիքը լու է բանում և շուտ չէ փշա-
նում: Բուրգունիոյ լելը պատրաստում են ոչ առաջ
քան նոյն օրը, երբ բանեցնելու են:

դ. Ժանզառը (Verdet, Արք մէծանուն, գեօդ դաշ2):
Ժանզառը ջրում լաւ չէ լուծում, միայն խառնում
են նրա հետ և երեք օր պահում, ժամանակ ժամանակ
խառնելով: Պատրաստութիւնը հեշտացնելու համար
ժանզառը մեծ քանակութեամբ փոքր ջրի հետ բաց
են անում և գործածելուց ինչքան որ ջուր է պէտք

աւելացնում վերան: Ժանզառը առանց գօրութիւնը
կորցնելու երկար ժամանակ կարող է մնալ:
Ժանզառի շափն է.

Ժանզառ 2 փնտ. 42 գ.

Ջուր 8 վեղըոյ:

Հիւանդութեան սաստիկ ժամանակը ժանզառը
կարելի է վերցնել 8 վեղըին մինչև $3\frac{3}{4}$ փունտ:

Ժանզառի պակասութիւնը միայն նրա մէջն է,
որ նա արջասպի պէս հետք չէ թողում տեղեւի վե-
րայ, որ երևայ, ուստի և խնամքով պիտի սրսկել, որ
ամեն տեղ թրջէ:

ե. Սալանալելի կազմութիւնն է.

Պղնձարջասպ 2 փունտ 42 գօլ.

Սալոն 2 փնտ. 42 "

Ջուր. 8 վեղըոյ:

Պղնձարջասպը ջրում լուծելուց յետոյ երբ սառ-
չում է, վրան թափում են սալոնափոշին, որը անմի-
ջապէս հալւում, լուծում է:

Գործածական ջուրը շատ կոշտ (կրային) պիտի
չինի:

Բացի վերոյիշեալ միջոցները, որոնք ամենից գոր-
ծածականներն են, կան և վաճառահանութեան մէջ
և ուրիշները, որոնք նպատակայարմար չեն ճանա-
չուած:

6. ՄՐՄԿԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ: Միլդիուի համար սրսկիչ
գործիքների մէջ ամենից գործածականներն են՝ վեր-
ուրեկին (պատկ. 70), վիզուրույին և այլոց. դրանք
10

շինուած են պղնձից և այնպէս յարմարեցրած, որ
մշակը հեշտութեամբ կարող է թիկունքին տանել.
դործիքը ունի ունելիք, որ աչ ձեռքով վեր ու վար
շարժելով գործիքի մէջ եղած հեղուկը դուրս է գա-
լիս ձախ կողմում յարմարեցրած խողովակով, որի
ծայրը վերջանում է սրսկիչով: Սրսկիչը երկու տե-
սակի է, մին շատ մանը կաթիլների համար և միւսը
խոշոր. մանը վազի աճելութեան առաջին շրջաննե-
րի համար լաւ է, խոշորը հիւանդութիւնը զարգա-
ցած և կամ թանձը ճարերի համար:

Թէ սրսկիչ գործիքները և թէ միլդիու և օի-
դիում հիւանդութեանց դէմ եղած ճարերը կարելի է
ձեռք բերել թիֆլիզի կայսերական գիւղատնտեսա-
կան ընկերութեան միջոցաւ, որը ամենից ապահով
ճանապարհն է և գները աւելի արժան են՝ քանի այս
ու այն առեսրական ֆիրմային:

Այն այգիները, որոնք կանոնաւոր շարքերով են,
դրանց համար յատուկ պատրաստուած են և այնպի-
սի սրսկիչ գործիքներ, որոնց յարմարեցնում են ձիու
վերայ և գնալուց միանգամից սրսկում են մի քանի
շարք:

Ինչ վերաբերում է արշասպի կամ միւս խառ-
նուրդների ներգործութեան թէ շիրայի եփ զալու և
թէ զինու որակութեան կամ մարդիս առողջապահու-
թեան վերաբերութեամբ, այդ կողմից ապահով պի-
տի մնալ, նա վնասակար չէ, շատ թոյլ մաս ունենա-
տանում է:

Գ. ԱՆՏՐԱՔՆՈԶ (Anthracnose)

1. Հիւսնդութեան ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Անտրաքնոզը հին
դարերից իվեր յայտնի է, բայց օիդիումի և միլդիումի
պէս վտանգաւոր չէ, թէև երբեմն սաստիկ վնասները
է տալիս մանաւանդ տաք ու խոնաւ տեղերում: Ան-
տրաքնոզը ուսումնասիրութեան առարկայ է գարձած
1853 թուականից, բայց նրա դէմն առնելու մի-
ջոցները գտնուած են միայն վերջին ժամանակնե-
րում:

Անտրաքնոզը երեք գլխաւոր ձևեր ունի.

ա. Բծատը (Anthracnose maculée):

բ. Կէտատը (Anthracnose ponctuée):

գ. Այլակերպող (a. déformante):

ա. Բծատը անտրաքնոզը ամենից շատ տարա-
ծուածն է և երեսում է շիւերի, տերևների և թէ
պտղի վերայ և այն վազի աճելութեան ամբողջ ըն-
թացքում:


Բծատը անտրաքնոզը շիւերի վերայ երեալով՝
հարուածում է վազի մատաղ գեռ կանանչ զօղերը
այստեղ այնտեղ առանձնացած բաց թխագոյն բծեր
զնելով. այդ բծերը հետզհետէ մեծանում, երկարա-
նում են և կապամէշերում տարածւում. բծերի մի-
ջավայը շագանակագոյն է լինում, իսկ շրջապատը
թուխ գունով: Չորչորատելը սկսում է կէտրոնից և
տեղ տեղ թողնում է վշակներ-փոսեր, որոնք տա-
րածւում են թէ լայնութեամբ և թէ երկայնութեամբ
և ունենում շրթունքանման հաւաքուած եղբեր, իսկ

վէրքի ներսը ներկայացնում է կտրատուած զղեր և երբէք ողորկ չէ լինում: Ջիւերը հիւանդութեան սաստիկ ժամանակը փշրտում են, ճաքճքում աւելի կապերի մօտերը, սևանում են խանձուածի նման, մուռ են կարճ, կէռ-մէռ ու կուչ եկած (պատկ. 76): Այդպիսի շիւերից շատ նորերն են գուրա գալիս, որոնք նոյնպէս հարուածուած են լինում. մի փոքր քամուց դրանք կոտրուում են, թափուում, իսկ մնացած-ները լաւ չեն հասնում: Այդ հարուածը կարող է պատահել և հաստ եղջիւրներին (կոներին, տալերին) և քոթուկին, և երբ հորիզոնական դիրքով կտրելու լինք, կնկատենք՝ որ սըտի մէջ սև շերտ է անցած:

Տերևների վերայ բծաւոր անտրաքնողը երևում է փոքրիկ կոլոր սև բծերով, որոնք շատ մօտ են լինում իրար, այդ բծերի տեղը ծակեր են բացւում զանազան մեծութեամբ և սև շրջապատով. վազի ծաղկած միջոցին հարուածելուց, ծաղիկը խշկում է և չորանում, երբեմն էլ անժամանակ բացուելուց խանձուում, մանաւանդ խոնաւ տեղերում:

Պտղի վերայ անտրաքնողը երևալուց հարուածում է ճիթի կոթը և թէ հատիկների կոթիկները, որից կարող է ճիթը ամբողջապէս փշանալ: Եթէ հիւանդութիւնը սաստիկ չէ, ճիթը մնում է փոքր և պտուղը անհամ: Անտրաքնողի բծերը հատիկների վերայ սև կէտերի պէս են լինում, որ և մեծանում են իրենց կոլոր դիրքը պահելով:

Այդ բծերի կետրնը շուտով բաց մոխրագոյն է դառնում, յետոյ փուրում է և սև շրջապատով ծածկում (պատկ. 77):



Երբ հիւանդութիւնը սաստիկ է, հատիկները կորցնում են իրենց ձեր, չորանում ու թափում, հետևաբար և ներգործում թէ բերքի քանակութեան և թէ որակութեան վերայ:

թ. Կէտատը անտրաքնոզը այնքան վտանգաւոր է, նա շատ սակաւ է պատահում և նոյն ներգործութիւնն ունի, ինչ որ բծաւորը: Սա երեսում է վազի կանաչ մասերի վերայ նախ շէկ մանրիկ կէտերի ձեւով, որ յետոյ սկանում են և վայլում: Տերեների վերայ հազիւ է երեսում. ճթի կոթի կամ պտղի կոթիկ-ների վերայ երեալուց՝ մասամբ վշացնում է, իսկ եթէ պտուղը դիմանում է հարուածին՝ լու չէ զարգանում:

Դ. Այլակերպող անտրաքնոզը երեսում է տերեների աստառի կամ ջղերի վերայ, բաց գորշ բծերի տեսքով և նրանց կուշ է ածում, ինչպէս և մատաղ զօղերը դարնանը դրան ենթարկուելով չեն ածում և կուշկուշատում են:

2. Հերսնդութեան ԶԱՐԴԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԵՐԸ: Անտրաքնոզի ինչպէս և միւս բուսական պարագիւների զարգանալու պայմաններն են տաքութիւնը և մանաւանդ խոնաւութիւնը. առհասարակ տնտրաքնողը աւելի այն տեղերն է տարածւում, ուր այդին ցած զիրք ունի, հողը պարաբռ է, թաց և ջրերը կանգ են առնում կամ տարին անձընային է լինում: Անտրաքնողը օիդիումի կամ միլիդիուի պէս շատ առաջ չէ զնում և նրանց պէս յանկարծ սկսում: Անտրաքնողը

կարող է երևալ գարնան սկզբին վազը զօղեր ձգեց սկսած, երբ եղանակը փոքր ինչ տաքացած է, բայց նա սաստկանում է մայիս և յունիս ամիսներին և շատ շուտով առաջ գնում խոնաւ տարիներին:

3. Անջրաքնոջի սռաջն սռելու ՄԻՋՈՑՆԵՐ: Իբրև նախազուշացուցիչ միջոց անտրաքնոզի առաջն առնելու համար գարնանը վազը զարթնելուց առաջ յաջողութեամբ գործադրում են.

ա. Երկաթի արջասպը (железный купоросъ, զազը) և ծծմբաթթուն (серная кислота), որը պատրաստում են հետևեալ կերպով. վերցնում են 3 պուդ արջասպ, վրան ածում են 8—12 փունտ հասարակ ծծմբաթթու և այդ խառնուրդը փոքր առ փոքր ածում 8 վեղրայ եփ զալիս ջրի մէջ և առանց թողնելու որ սառչի, նոյն օրը բանեցնում:

Այդ խառնուրդը գործադրում են այսպէս. խոդնակը կամ մի փայտի ծայրի փաթաթած փալասը թաթախում են ճարի մէջ և քսում վազի եղջերները, քոթուկը և մատները և կամ թէ սրսկիչ գործիքով սրսկում են ամբողջ վազը: Ճարը գործադրելու օրը պիտի տաք եղանակին ձգել թեթև անձրեկելուց կամ ցող դնելուց յետոյ, որ շատ շուտով չզոլորշիանայ և զօրութիւնը չկրցնէ:

բ. Անտրաքնոզի դէմ զոք են ածում ծծմբափոշին և կիրը. առաջին անգամը զօղերը 2 վերշոկ երկարանալուց և եթէ այդ չէ օգնում՝ ամեն մի 15 օրից կը լինում են նոյնը, միայն կրափոշի աւելացնելով:

Այսպէս առաջին անգամ՝ 100 փունտ ծծմբափոշուն խառնում են 20 փունտ կիր, յետոյ շատացնելով կրի խառնուրդը՝ հասցնում են մինչև 60 փունտի:

գ. Վերջին ժամանակներս իբրև կտրուկ միջոց, որ գործադրում են, այս խառնուրդն է.

Երկաթի արջասպ 50 փունտ

Պղնձի արջասպ 30 "

Կիր չհանգած 15 "

Ֆուր 8 վեղրայ:

Խառնուրդը պատրաստում են ինչպէս բորդեզի ելլը, երկաթի և պղնձի արջասպը միասին լուծելով և ապա կիրը խառնելով:

Բացի այդ միջոցները անտրաքնոզի դէմ առնելու օգնում է տերենների վեր տալը, աւելորդ շիւերի կը տրելլը, չոր կտրելուց անտրաքնոզով հիւանդ մասերի հեռացնել և այլելլը և որ գլխաւորն է այդպիսի հիւանդ վազերից մատնացու կամ կտրոն շընտրելլը:

Դ. ՍԵՒ ՓՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԲԼԵԿ-ՌՕՏ (Black-Rot)

1. ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ յայտնի է Փրանսայում 1885 թուականից պ. Վիալա և Լ. Ռաւացի հետազօտութիւններից, իսկ Ամերիկայում նա վազի հիւանդութիւնների մէջ ամենից կատաղին է հաշշում և ահազին վնասներ տալիս: Ահա քանի տարի է որ մեզանում կովկասում ևս երևացել է դրա հետքը և պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել և ոչ մի ծախք չխնայել դէմ առնելու, որ նա չտարածուի կամ գոնէ տուած վնասը այնքան զգալի

Մինի: Ճիշտ է նա Քիլօքսերայի պէս չէ Փշացնում վազը, բայց մի անգամ երեալուց՝ Փշացնում է տարուայ բերքը:

2. Բէկ-Ռօ՛ՏԻ ՍՐՑԱՔԻՆ ՆՁԱՆՆԵՐԸ: Բէկ-Ռօ՛Տը սովորաբար առաջ երեւում է մատաղ տերեների վերայ բազմաթիւ վորքիկ, զրեթէ կոլոր բծերի տեսքով, որոնք մեռած տերեկի տեսք ունին և շուրջը կանաչով պատած է: Այդ բծերը զանազան մեծութեամբ են. քորոցի զլխից սկսած մինչեւ սիսեռի մեծութեան, որոնցից շատերը հետզհետէ միանում են: Քիչ ժամանակից յետոյ չորացած բծերի վերայ նկատում են ճանձի դրած աղբի նման սև կէտեր, որոնց մէջ անթիւ սերմեր են գտնուում մանրադիտակաւ միայն տեսանելի, որոնք և քամուց տարածում են և վարակում շուրջը (պատկ. 79):

Բէկ-Ռօ՛Տով վարակուած վազի տերեները չեն թափւում, ինչպէս այդ պատահում է միլդիուի ժամանակ:

Բէկ-Ռօ՛Տը բացի տերեկից, երեւում է թէ վազի շիւերի վերայ և թէ ծիլերի, սև, երկայնացած բշտիկ-ների տեսքով, որտեղից և տարածում է նրա սերմը: Պտուղների վերայ երեւում է առաջ սպլանած փոքրիկ կէտերի տեսքով, որ յետոյ մեծանում են գորշ կարմիր գոյն ստանում. դիլաները միջտեղից կասես փոս են ընկած, զնալով փափկանում են, գորշ ու մուգ գոյն ստանում, կնճռոտում և առանց ճաքճքուելու չորանում, կաշին կորիզներին կաշում և յետոյ թխալոյն ու սև գոյն առնում (պատկ. 80): Այն միջոցին երբ

գեռ լիքը հատիկները նոր են սկսում մգանալ և կըննուածել, նրանց վերայ երեւում են բազմաթիւ սև բըշտիկներ մաներ վառողի տեսքով, որոնց մէջ զարդանում են Բէկ-Ռօ՛Տի սերմերը և տարածւում, ուստի ինչպէս տերեկի, շիւերի, նոյնպէս և պտղի միջոցաւ հիւանդութիւնը կարող է տարածուել:

Բաւական է մի վորք յաջող պայման, որ Բէկ-Ռօ՛Տը մի երկու օրում զարդանալով, բոլորովին առող բերքը վարակի և վշանացնէ:

3. ԱՅՍ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԶԱՐԳԱՆՑԼՈՒ ԳԼԽԱԽՈՐ ՊԱՅ-ՑԱՆՔ համարում են տաքութիւնն ու միաժամանակ խոնաւութիւնը: Անձրեսային խոնաւ ու ամպամած եղանակից յետոյ, երբ վերայ են համնում տաք օրեր, պէտք է շատ ուշադիր լինել, որովհետեւ այդ միջոցին աւելի է վտանգ սպառնում:

Բէկ-Ռօ՛Տի զարդանալուն նպաստում է և այգուց դիրքը, հողի ներքին շերտի խոնաւութիւնը, վազի իրեն փարթամութիւնը և այգու ժանգաները (ալաղը), ուստի այդ պակասութիւնները հեռացնելը և կանոնաւոր խնամքը միայն կարող են հիւանդութեան առաջը առնել:

4. Բէկ-Ռօ՛ՏԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ: Բէկ-Ռօ՛Տի առաջն առնելու համար գործ են ածում բորդէզի լելք, բուրգունիոյ լելք և ժանգառը:

Բորդէզի լելք պատրաստելը կատարւում է այն ձևով, ինչպէս միլդիուի համար են պատրաստում, միայն արջասալը պիտի վերցնել $\frac{7}{4}$ ֆունտ. կը

քանակութիւնը աւելի ճիշդն իմանալու համար լաւ
է կրաջուրը առանձին պատրաստել և կամաց-կամաց
խառնել արջասպազրին մինչև այն ժամանակ, երբ
արջասպազրի մէջ կոխելով կարմիր լակմուսի թուղ-
թը՝ կապոյտ գոյն կսկսի առնել:

Միւս ճարերի պատրաստութիւնը նոյնն է:

5. Բժջկելու ժամանակը եր ՔԱՆԻ ՍՆԳԱՄ Բժջկելը:
ԲԵԿ-ՌՈՅԱՐԸ բժշկելու փորձերը ցոյց են տուել, որ
ամենայարմար ժամանակը է, երբ վազի փոքրիկ զօ-
ղերը $1\frac{1}{2}$ — $2\frac{1}{2}$ վերշոկ երկարացել են. այդ ժամա-
նակ պիտի կատարել առաջին սրսկելը. երկրորդ
սրսկումը կատարել ծաղկելուց առաջ. երրորդը՝ ծա-
ղիկը թափելուց անմիջապէս յետոյ, երբ երկում են
մանրիկ գիլաները. չորրորդը՝ խաղողը չլելուց (ջուր
ընկնելուց) և հինգերրորդը՝ հասունութիւնից 10—20
օր առաջ. Առհասարակ այգետէրը պիտի հետեւ,
երբ տերենների կամ պտղի վերայ երևացին բշտիկ-
ները կամ սև կէտերը՝ սկսել սրսկումը. Ամեն մի
դեսատինին բժշկութեան համար զնում է մօտ 100
վերայ հեղուկ:

6. ԲԱՑԻ ՄԵՒ ՓՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՅ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՓՏՈՒԹԻՒՆ
(Rot-blanc) ՈՒ ԴԱՌՆ ՓՏՈՒԹԻՒՆ (Rot-amer). Վերջին աւելի կատաղի է քան առաջինները, որովհետեւ հա-
րուածում է գլխաւորապէս խաղողը չլելուց սկսած
մինչև հասունութիւնը. նա երկում է առաջ սև բծերի
տեսքով և յետոյ ծածկում բշտիկներով. հատիկների
կոթիկներին հարուածելուց՝ պտուղը չ' ոանում է ու

շարժուելուց՝ թափւում. Պտղի վերայ երկում է առաջ
վարդի գունով, երբ խաղողը ճերմակ տեսակից է և
մուգ վարդագոյն՝ երբ կարմիր տեսակիցն է: Մինչև
անգամ կնճռոտած ու փշացած հատիկների վերայ
բազմաթիւ բշտիկներ են դուրս գալիս, որոնք փո-
շոտնեն լինում և մազութի գունով են: Բժշկութիւնը
նոյննէնէ, ինչ որ սև վտութեան ժամանակ:

Ե. ԱՐՄԱՏԻ ՓՏՈՒԹԻՒՆԸ (Pourridié)

1. Ի՞նչ է ՓՏՈՒԹԻՒՆԸ: Փտութիւնը վազի և այլ
պտղատու ծառերի ու տունկերի մի հիւանդութիւնն
է, որ շատ տարածուածած է ամեն տեղ և վաղուց
յայտնի է: Այդ հիւանդութեամբ վարակուած վազերը
փշանում են երկու երեք տարուց կամ աւելի ուշ,
բայց երկրորդ տարուանից սկսած, նուազած վազերը
պտուղ չեն տալիս և պէտք է հանոտել:

2. ՓՏՈՒԹԵԱՆ ԱՐՏՍՔԻՆ ՆՁԱՆՆԵՐԸ: Փտութիւնը ա-
ռաջանում է մի տեսակ սունկերից, որոնք աճում են
միայն վազի արմատների վերայ: Այդ հիւանդութեան
արտաքին նշանները համարում են՝ վազի ուժից ընկ-
նելը, երբ յանկարծ աւելանում է պտղաբերութիւնը
սովորականից դուրս և ապա շիւերը նիհարանում,
վազը կաղամբի գլխի ձև առնում և մի թեթև քաշե-
լուց պոկ գալիս, կեղեր գետնից ցած փշացած է և
պլուտում է, ծակոտկէն է ու գորշ գունով, տերենն-
ւանդութեան վերջերին միայն գեղնում են: Արմատնե-

բը այդ սունկերից քայքայւում են ու փշանում, և
սպունգի պէս ծակծկում և զորշ գեղին զոյն առնում:

Յ. Փօհիթեսն ԶԱՐԴԱՆԱԼՈՒ ԵՒ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻ-
ԶՈՑՆԵՐԸ: Փտութիւնը արագութեամբ զարգանում
է խոնաւ ու ցած տեղերում. աւելի յաճախ պա-
տահում է կաւային և կրա-կաւային հողերում, ուր
ջուրը մնում է կանգնած և ներս չէ ծծւում: Ցած
ու փոս տեղերը աւելի ենթակայ են քան բարձր ու
զառիվայր տեղերը: Փտութիւնը մահաւանդ զարգա-
նում է այնպիսի վագերի մէջ, որոնք տնկուած են
առաջուց հիւանդ եղած ծառերի տեղը:

Փտութեան՝ առաջը առնելը շատ դժուար է, որով-
հետեւ նրա պատճառող պարագիտները ապրելով ար-
մատների ներքին մասերում, երբ նրանց դէմ որ և է
միջոց ենք գործ դնում, նա ներգործում է և վագե-
րի վերայ, որ չեն կարող անվնաս մնալ: Այսպէս ծը-
ծմբային ածխաթթուն և այլ հեղուկները ոչ միայն
արմատներին լաւ չխփելուց վնասում են վազը, այլ և
մեծ ծախք է նստում. այնպէս որ միանգամ հիւան-
դացած վազը ուղղելը դժուար է. աւելի լաւ է հանել,
տեղը կրակ տալ և մի քանի տարի նոյն տեղը ոչինչ
չտնկել: Երբեւ նախազգուշացուցիչ միջոց առաջար-
կում են հողը խոր փորել, ստորերկրեայ ջրերը դրե-
նաժով (արխեր քաշելով) այգուց հանել և հիւանդ վա-
զերը արմատով հանել:

Զ. ԳՈՅԱՄՈՐՈՒՍԸ (ԺԻՇԿ, ծտըճինջի, ըսկու)

Այս պարագիտ բոյսի սերմերը հողի մէջ արմատ
բննելուց՝ երկար, բարակ, միմեանց խճուած կարմ-
րաւուն թելերի ձեռվ ճիւղաւորում են և բարձրա-
նալով՝ փաթաթւում վազին, սեղմում նրան, իրենց
ծծող բերանները խրում կաշու տակը մինչև սիրտը
կամ ծուծը ու մննդում նրա հիւթով, որից և վազը
թուլանում է:

Գոճամօրուսը նոյն ձեռվ փշացնում է և խաղո-
ղը: Բարեբաղդաբար զըա առաջը հեշտութեամբ կա-
լի է առնել. նրանց նկատելուց՝ պէտք է ձեռքով
քանդել, արմատով հանել և փշացնել, տեղը ծովի-
աղ, հանգած կիր և մոխիր շաղ տալ, մի բաժին մոխ-
ին ու կըին երկու բաժին աղ վերցնելով:



վազերի նոր բացւող տերեներն ու կանանչ զօղերը:
Խխունջները վազի ծաղկած միջոցին ճթի կոթերը
կրծերով, թափում են պտուղը և կամ իրենց լորձուն-
քով պատում են ծաղիկը և մէկմէկի կպցնում:

Խխունջներից ազատուելու համար նրանց հաւա-
քում են ձեռքով և ջարդում կամ սագերի ու բաղերի
առաջը թափում, որ սիրում են ուտել: Մի անգամ
այդին նրանցից մաքրերուց յետոյ, պէտք է նրա շուր-
ջը 1/4 արշին լայնութեամբ կըափոշի ցանել, որից
խոյս են տալիս և այդին չեն մտնում:

Թուլամորթները վշացներուն մէջ մարդիս օգնում
են պէսպէս թռչունները, ոգնին և մի քանի միջատ-
ներ, որոնց հարկաւոր է մեր պաշտպանութիւնը:

Դիտուած է, որ երկաթի արջապը ևս օգնում է,
երբ անտրաքնոզի դէմք քսում են ձմեռը վազերին:

Բ. Ս Ա Ր Դ Ա Կ Ե Ր Պ Ե Ր (Arachnides)

Սարդակերպերի մէջ վազերին վնասում է երե-
նոզը (Erinose), (Винаградный клещъ), առ հասա-
րակ աշքով անտեսանելի մի փոքրիկ միջատ է, որի
կեանքը մեծ մասամբ անցնում է ինչպէս թրթուր-
երինոզը ունի մարմնի առաջին մասում այն է զլխակող-
մում 4 ոտներ, իսկ մարմնի վերայ 6 ճուխտ մազեր,
2 ճուխտ մէջքին, չորսը փորին: Երինոզը կծելով վա-
զի տերեները, նրան վքեցնում է և վուշիկներ ու
բշտիկներ դուրս տալիս տերենի երեսի կողմէց, որ իր
կանաչ գոյնը չէ կորցնում, այնինչ աստաղի վերայ
վոսերի մէջ բամբակ է կապում, որ սկզբում սպիտակ

ԳԼ. Դ.

Կ Ե Ն Գ Ա Ր Ա Կ Ա Ն Պ Ե Ր Ա Զ Ի Ց Ն Ե Ր

Կենդանական պարագիտների մէջ վազերին վնա-
սողները համարում են՝

ա. Թուլամորթները, բ. Սարդակերպերը և գ.
պէսպէս Միջատները, որոնք հարուածում են վազի
տերեր, շիւերը, պտուղը և արմատները:

Կենդանական պարագատների առաջը աւելի հեշտ
կարելի է առնել, քան բուսականներին, ինչի որ ու-
սումնասիրելով նրանց կեանքը, միշտ յարմար ժա-
նակին կարելի է վշացնել: Այդ միջատների մէջ մի-
այն ֆիլօքսերան, վազի այդ կատաղի թշնամին է, որ
վշացնելու համար մեծ շարչարանք և նիւթական մեծ

Ա. Թ Ո Ւ Լ Ա Մ Ո Ր Թ Ա Ն Ե Ր (Mollusques):

Թուլամորթների մէջ վազերին աւելի վնասում են
խխունջները (անախաթռչունները, ուլիտք), որոնք բամ-
մանում են աւելի խոնաւ և մեղմ գարնանը և կրծուզ

դռնով է. բայց հետզհետէ մգանում է և գորշ (դայունի) գոյն առնում (պատկ. 78):


Թէկ երինողը այնքան վտանգաւոր չէ վազի համար, բայց երբ սաստիկ տարածւում է, տերենները կոշտանում են, շիւերը լաւ չեն կարմրում, հասունանում և պտուղը խակ է մնում: Երինողի առաջը կարելի է առնել վազերին ծծմբափոշի փշելով:

Գ. Մ Ի Զ Ա Տ Ն Ե Ր (Insectes, Насекомые)

Վազերին վնասակար միջատներից աւելի յայտնիներն են—զըռուիճը, ալտիքը, սուտմեռուկը, խազողի որդը, պիրալը, մայիսեան որդը և ֆիլօրսերան:

Ա. ԳՐՈՒԻՃԸ (ոսկէպղոճը, atelabe, Rhynchites betuleti), մի փոքրիկ միջատ է 5—6 միլիմետր երկայնութեամբ, մարմինը ողորկ է (անմազ), կանանչ ու վայլուն վերևից, բրոնզագոյն երկայն դռնչով և զըռ խին երկու շօշափուկներով. Կուրծքը (առաջնափորը) ունի կէտեր, վերնամաշկը (պինդ թերթը) խորտուրուտ է, թաթերը կանաչ բրոնզագոյն ինչպէս և փոքր:

Գըռուիճը կատարեալ զարգացած ժամանակը քիչ է վնաս տալիս. Նա կը ծում է վազի կակուղ մասերը, բայց երբ զալիս է ձու զնելու միջոցները, էգը իր կտրոցներով կը ծում է տերեկի կոթը, որից նա ճլորում է և թուլանում. այդ թուլացած տերեկի վերայ 1—8 ձուաներ է ածում և տերեկը սիզարի ձեռվ ոլորում: Այդ ձուաներից դուրս եկած թրթուրները կը բ-



ծելով տերևը 15 օրուայ մէջ հասնում են իրենց կատարեալ մեծութեան. դրանք բոլորովին անոտն են լինում, գլուխը զորշ, իսկ մարմինը սպիտակաւուն. դրանք ընկնում են գետնի վերայ և հողի մէջ բոյն դնում և սեպտեմբերին փոխակերպւում հարսնուկի (պատենաւորի), իսկ հոկտեմբերին կատարեալ միջատ դառնում: Եթէ եղանակը լաւ է լինում, դուրս են գալիս վազի վերայ և ցրտից շատ անգամ փշանում (պ. 81):

Գրուիճի տուած վնասը այն է, որ ոլորելով տեսները՝ կանգնեցնում է նրանց գործողութիւնը, որ եթէ մեծ թւով են լինում, այն ժամանակ թուլանում է և վազը, խաղողը խակ մնում և շիւերը լաւ չեն կարմրում:

Գրուիճի առաջն առնելու համար միակ միջոցը յուղիս ամսում սիզարի ձեռվ ոլորուած տերեների հաւաքելու այլերն է, որ նրանք յաջորդ տարին չզարգանան:

Բ. ԱԼՏԻՔԸ Altise, Altica ampelophaga): Ալտիքը մի փոքրիկ 5 միլիմետր երկայնութեամբ մուգ կանաչ կամ կապտագոյն ոստոստող միջատ է, ողորկ ու վայլուն տեսքով. նրա շօշափուկները գորշ են, միայն առաջին երեք խաղը, յօդը՝ կանաչ. կուրծքը որոշակի շերտով մարմնից բաժանուած է, վերնապատեամբ կարծես թէ ողորկ է, թէև մանրիկ կէտերով ծածկուած, լժաթիկները մարմնի գունով են կապտագոյն կլունկներով (պ. 82):

Ալտիքի ձուաները երկարաւուն են; բաց դեղին գունով, շատ անգամ դրանց կարելի է գտնել տեսների աստաղին քսանաշափ կպած: Դրանց որդինե-

ը՛ը (թրթուրները) սկզբում գեղնագոյն են լինում, ապա մի քանի անգամ քնափութեան ենթարկուելով՝ մգանում են ու վերջը սևանում. դրանց մարմինը երկարէ, ծայրերը քիչ սեղմուած, գլուխը ողորկ. վեց թաթիկները վերջանում են ճանկերով, մարմնի օղակները փափուկ են և թեթև կերպով ծալծրուած, իւրաքանչիւր օղակի վերայ կան սև փայլուն բշտիկներ։ Ալտիքը ձմեռը անցնում է փագերի կեղկի տակ և կամ չոր քարէ պատերում. ապրելին, երբ օրերը տաքանում են և փազը բացում, նրանք կրծում են նոր բացուած տերեները և փոքրիկ գողերը։ էգերը դնում են ձուաներ, որոնցից 7—8 օրից դուրս են դալիս թրթուրները, դրանք ուտում են փագերի ներքեկի մասի տերեները և մի տասն և հինգ օրից չափահաս դառնում։

Այնուհետև նրանք իջնում են ցած ու մտնում հողի մէջ, ձուաձև բոյն շինում և կերպարանափոխուում հարսնուկի, իսկ մի շաբաթից վերջին անգամ կերպարանափոխուելով՝ դառնում են կատարեալ միջատ։ Ալտիքը այսպէս տարին հինգ սերունդ է փոխում։

Ալտիքը վնասում է գլխաւորապէս առաջին սերնդի ժամանակ և այն գարնանը փագերը բացուելուց, երբեմն այնպէս սաստիկ հարուածում է, որ փազի վերայ տերեւ չէ մնում, որով և խաղողը ժուռ է մնում։

Ալտիքի առաջն առնելու համար կամ պէտք է նրանց թրթուր ժամանակը հաւաքել թիթեղից շինած կոնքաձև և տակը քսակով ամանի մէջ ու փը-

չացնել, կամ յունիսին շիւերի ներքեից 4—5 տերեւ պոկել, ուր առհասարակ հաւաքուած են լինում և կամ ծխախոտի (թամբաքուի) ջրով սրսկում անել։

Դ. ՍՈՒՏՄԵՐՈՒԿՎԸ (Gribouri, Adoxus vitis) (պ. 83): Այս միջատը 6 միկմետր երկայնութիւն ունի, սկզ է և ծածկուած մոխրագոյն խաւով, գլուխը և կուրծքը մանրիկ կէտեր ունին, շօշափուկները սկ, առաջին չորս խաղերը կարմրաւուն են վերնամաշկը սկ է, մէջքի ներքնապատեանը կարմիր աղիւսագոյն, կէտերով և թուլխաւով, թաթիկները սկ և ծունկերը ներքնապատեանի գունով։ Սուտմեռուկը կատարեալ գարգացման է համում յունիսին, երբ կրծում է տերեները, ատամնաձև քշփորելով, կասես թէ գրում լինի։ Այդ ժամանակ նրանք իբրև միջատ այնքան վնաս չեն տալիս, վտանգաւոր է դրանց թրթուրը, որ ստորերկրեայ է և փոքր ժամանակ նման է մայիսեան որդին. նա կըրծում է փազի արմատները վրան ակօսներ բանում և մէջը փակւում, որով նրանց գտնելը զժուար է լինում։ Երբեմն դրանք այնպէս շատ են լինում, որ ամբողջ փազեր են փշացնում և շրջանաձև առաջ գնալով, կարծել տալիս թէ հիւանդութիւնը ֆիլօրսերակցն է։

Երբ մայիսի սկզբներին զալիս է նրանց հարսնուկի կերպարանափոխուելու ժամանակը, հողի մէջ ձուաձև բոյն են շինում և մէջը մտնում պատենաւորւում։ Հարսնուկը սպիտակ է և փորին կպած ունի կեռ ճանկեր, որոնք հեշտացնում են նրա շարժողութիւնը։

Սուտմեռուկը զարգացած ժամանակը դժուար է որսալ, մի փոքր ձայն լսելուց՝ ոտները կուչ է ածում, պորուսմ վազի տակը, սուտմեռած ձևանում։

Դրանց հաւաքելուց դործ են ածում ձագառած և թիթեղեայ գործիքը, որ դնելով վազի շիւի տակը մի բանով թրխկացնում են, որից ընկնում են նըրանք քսակի մէջը, որ և տանում այրում են։ Հաւերը և այլ թռչունները դրանց սաստիկ թշնամի են, ուստի և մեծ բազմութեամբ ներս են թողնում այդին, որ հաւաքեն։ Բացի այդ միջոցները առաջարկում են և ծծմբածխաթթուի սրսկումը, ինչպէս այդ անում են ֆելօքսերայի դէմ։

Դ. ԽԱՂՈՂԻ ՈՐԴՅ. (Cochylis կամ Tortrix ambiguella կամ սվանա. Դվուլեռան լիստուրտկա)։ Սա փաղերի կատաղի թշնամիներից մէկն է, ինքը մի փոքրիկ թիթեռ է 7—8 միլիմետր երկարութեամբ թևերը ծածկած ժամանակը, մարմինը բաց դեղին դոյնունի, գլուխը և կուրծքը արծաթափայլ, վերի թևերը զորշ գեղնագոյն են թուխ բժերով, իսկ ներքնաթերը զրեթէ մարմինի զունով են և ունին զորշ շերթ։ Դրանց ձուաները մանր են, բաց մոխրագոյն, որ ածում են նոր բացւող զօղերի վերայ կամ մատաղ ճիթերի։ Դրանց թրթուրները 8 միլիմետր երաւելի հաստ ու խոշոր են երեսում իրենց երկայնութեան հետ համեմատած։ Գլուխը և մարմինը զորշ կարմրաւուն են։ Մարմինը բաղկացած է 12 յօդերից (օղակներից), առաջին օղակը աւելի ուժեղ է և նկատ-

ում է մէջտեղից մի շատ նեղ ու բաց դեղին դիմ։ ունին 8 զոյգ ոտներ, առաջին 3 զոյգը թուխ զունով, մնացածները մարմնի։

Խաղողի որդը տարին երկու սերունդ ունի, նա ձմեռնահանն է լինում վազի կեղկի տակ իր մոխրագոյն բոժոժի մէջ պատենաւորուելով։ Ապրել ամսին թիթեռ դարձած դուրս է զալիս, զուգաւորում և 40 ծու դնում։ Յերեկը նրան տեսնում ենք թռչուտելիս մի վազից միւսը. առաջին սերնդի թրթուրները ցանց են շինում և նոր կազմակերպուած ճթերը թելիկներով ծածկում։ Հարսնուկի փոխում են յունիսին, իսկ թիթեռը դուրս է զալիս յուլիսին։

Երկրորդ սերնդի թրթուրները դուրս են զալիս օգոստոսին և սեպտեմբերին, դաշնք փշացնում են խաղողը, կծում ծակում են հատիկների կաշին և ուտում մինչև ճիթը վերջանում է։

Խաղողի որդը փշացնելու մի քանի միջոցներ կան։ Պէտք է փշացնել թրթուրները հաւաքելով ու այրելով, 10—12 բանուրը մի օրում կարող է մի գեսիտին տեղ մաքրել։

Զմեռը վազերի տակը բանալուց՝ պողպատէ խոզնակով քերել վազերի կեղևանքը և հաւաքելով այրել. ապրելին և յուլիսին երեկոյեանները այգու մի քանի տեղերում կրակ վառել, որ լոյսի վերայ գալով թիթեռները փշանան։

Վերջին ժամանակներս առաջարկում են և հետեւալ հեղուկը, որը պիտի դրա համար յատուկ պատրաստած սրսկիշով սրսկել վազերին, այն է վերցնում են։

Քուր 8 վեդրայ
Տերպենտինի էսէնցիա . . 4 փ. 84 զօր
Սապոն (կակուղը) . . . 7 փ. 80 զօր
Բացի այդ վերջերս ֆրանսայում զորովեզի լասպ-
տեր անունով մի գործեր շինած է Փերտինանդ Բու-
ֆար, որը արժէ մօտ 50 կոպէկ հատը. մի դեսեա-
տինի համար 10 հատ լապտեր վառելով այցում զա-
նազան տեղերում, յաջողութեամբ բռնում են խաղողի
որդի թիթեռներին. փորձերը ցոյց են տուել, որ այդ
լապտերներից ամեն մին զիշերը միջին թւով բռնում է
40—48 հատ, որոնք եթէ մնալու լինէին և դրանց կէսը
20 էզերը ձու դնէին միայն մի սերունդը կլինէր 800
հատ, իսկ չորս տարում հաշուած են որ մի էգից
կարող է գոյանալ յիտուն և մի միլիարդ երկու հար-
իւր միլիոն որդ, որ սարսափելի բան է և արժէ ու-
շաղըութիւն դարձնել:

в. Պիռալ: (Pyrale, Pyralis Vitana: Винаградная листовертка): Պիռալը մի գիշերային թիվեռէ, որ իր ձուաները դնում է տարին մի անգամ յօւլիս ամսին վազի տերևների վերայ, որից դուրս եկած որդը կախ է ընկնում բերնից դուրս թողած մետաքսի թելից և օրօրուում քամուց, կպչում վազին և մտնում նրա կեղեկ տակ, չորս կողմը մետաքսաթելով պատում ու ձմեռնահան լինում: Գարնանը վազի տերեւ բացուելուց, դուրս է զալիս իր բնակարանից, ընկնում փոքրիկ զօղերի վերայ, ցանցերով կապում և սկսում խժուելը. անցնելով մի շիւից միւսը և խաղողի բերքը վշացնում (պատկ. 84):

Պիռալի թրթուռը համեմատաբար մեծ է, կանչաւուն և սև զլսով։ Զարգացած ժամանակը մի փոքրիկ մոխրագոյն ոսկեզօծ թիթեռ է, վերնաթևելը երեք գորշ կարմրաւուն շերտերով, ներքնաթևերը թուխ են և մարմնի կպած տեղից բաց գունով։


Պիռալը փշացնելու համար գլխաւոր միջոցներն
են՝ ձմեռը եռացած ջուր ածել վազերի կեղեանքի
վերայ ուղղակի ինքնաեռի ծորակից կամ ուրիշ ա-
մանից. հաւաքել ու այբել պիռալի ձուաներն ու թը-
թուաները. կրաչըռով կամ սապնաջըռով լուանալ վազե-
ըը, և վերջապէս մի կիսատակառ դնել վազի վերայ,
կտրելուց յետոյ և նրա տակը ոչ աւելի քան 5—10
րոպէ ծծումբ կամ երկու, երեք հատ ծծմբա-
թուղթ վառել, (որը զործադրում են գինիները ծը-
խելու համար) և վազերին ծուխ տալ, որից խեղդ-
ւում են որդները:

2. ՄԱՅԻՍԵԱՆ ՈՐԴ. (Hanneton commun, Melolontha vulgaris: Майскій жукъ) (պ. 85): Այս միջատը երևում է գարնանը, մի քանի տարի շարունակ գետնի խորքում մնալուց յետոյ և սկսում խժռել վաղի և ուրիշ ծառերի տերևները: Բայց այդ ժամանակ նա այնքան վնաս չէ տալիս, իբրև զարգացած միջատ: Գլանց էզերը զուգաւորուելուց յետոյ 60—80 ձուաներ են դնում գետնի խորքում և իրենք կոտրում մի ամիս միայն իբրև միջատ ապրելով: Այդ ձուաներից շատ չէ քաշում գուրս են գալիս սպիտակ կամ մայիսեան որդները, որոնք 3—4 տարի գետնի տակն են մնում, ձմեռները աւելի խորը մտնելով, իսկ ամառը

և աշունը աւելի բարձր շերտերում և ազահարար կրծում բոլոր պատահած արմատիկները կամ մաղմզուկները, մանաւանդ նոր ցանած վազերի: Երեք չորս տարի այդպէս անցնելուց յետոյ, խրում են $1\frac{1}{2}$ արշինաչափ խորութեան մէջ, վերջին կերպարանափոխութիւնը ստանալու, որից յետոյ դուրս են գալիս ապրելին կամ մայիսին իբրև կատարեալ միջատ:

Սպիտակ որդներից ազատուելու համար միջատժամանակը ձեռով հաւաքում են վշացնում, իսկ որդ ժամանակը ամառը այգին փորելուց՝ սազեր և հաւեր ձգում, որ հաւաքում ուտում են. բացի այդ վազաշարերում գետնախնձոր են ցանում և մի քանի շաբթից յետոյ քանդում, որոնց վերայ հաւաքուած են լինում որդները և վշացնում, կամ վազաշարերի մէջ տեղը աղբախառն հողով պատճէշ՝ թումբ են շինում, որոնց մէջ որդները դնում են իրենց ձուաները, յետոյ այդ պատճէշները քանդում են, կրափոշի ցանում կամ աղբաշուր թափում վրան, որով թրթուրները կոտորուում են.

Ծծմբային ածխաթթուն ևս կտրուկ միջոց է, միայն շատ մեծ զգուշութիւն պէտք է հողի մէջ սրսկելուց, որ արմատներին չվնասէ: Ծծմբային ածխաթթուի սրսկումը պիտի կատարել ամառը և այն երեսանց, երբ չափազանց տարածուած են որդները:



Ք. ե.

Փ ի լ օ ֆ վ ե ր ն (Phylloxera)

—○—

ՊԱՏՄԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ: 1854 թուականին մի ամենիկացի բնագննին Ազաֆիշ տեղական երկրագործութեան վնասակար կամ օգտակար միջատները ուսումնասիրելու ժամանակ, գտնում է վազերի տերեների վերայ փոքրիկ մէջը փուչ խուլեր (Galle) ներքնից աւելի զուրս պրօած, իսկ վերևից խաւով ծածկուած նեղ ծակով: Ամեն մի այդպիսի խուլի մէջ նա տեսնում է, որ մի տեսակ փորը կոլոր և ուռած ոչիլ է ապրում, կնճիթը տերեների առէշքների մէջ խրած, կարճ ոտներով և սրնզած կտրուած շօշափուկներով: Այդ նեղ բնակարանում գրեթէ անշարժ ապրող ոչիլը միշտ էղ է և կասես ձու զնող մի մեքենայ է, որով հետև իրեն շուրջը ածած ձուաները երբեմն մի քանի հարիւրից աւելի են: Նա գտնում է, որ այդ ձուաներից զուրս են զալիս փոքրիկ միջատներ, որոնք անցնելով նոր բացուած տերերի վերայ, կծում են և այդ կծած տեղը փերիով նոր խուլ է զառնում, որի մէջ մտնելով նոյն կերպարանափոխութեանն են են-

թարկւում, ինչ որ իրենց մայրը: Ֆիշը այդ ոչին
Pemphigus vitifoliae անունով մլրտելով՝ այլևս մեծ
ուշագրութիւն չէ զբաւում, մինչև որ 1863 թուին
Լոնդոնի մօտերը Վեստվողը զտնում է թէ վագերի
տերեների խուլերում և թէ արմատների վերայ գետ-
նի տակ նոր տեսքով. բայց նրա ուսումնասիրութեան
հետևանքը հրատարակւում է 1869 թուականին այն
ժամանակ՝ երբ Փրանսայում ևս դուքս են գալիս գիտ-
նական Պլանշոնի աւելի կատարեալ հետազոտութիւն-
ները:

Այդ հասարակ աչքով հազիւ տեսանելի միջատը,
որին Պլանշոն ֆիլօքսերա է անուանում 1863-ին Փր-
անսիայի Գառ նահանգում երևալով հետզհետէ տա-
րածում է նախ փոքրիկ շրջաններով այս ու այն նա-
հանգում, ապա այդ շրջանները խմբուելով մի տեղ,
աւելի ընդարձակն են կազմում, այնպէս որ 1855
թուին, Փրանսայի 54 նահանգներում վարակում են
մօտ մի միլիոն գեսետին խաղողի այգիներ: Այդ վա-
րակումը մինչև այսօր շարունակւում է և ազատ մնա-
ցած նահանգներում, միլիարդներ է կլանել և այժմ
էլ կլանում է:

Փրանսիայից դուքս ֆիլօքսերան երևացել է Պոլ-
տուգալիայում 1872 թուին, Աւստրա-Հունգարիայում
և Սպանիայում 1875—1877-ին, Իտալիայում 1879-ին,
Հարաւային Ռուսաստանում 1880-ին, Կովկաս, Տաճ-
կաստան և Աֆրիկայ 1883—1885-ին, կարծիք շայ
որ ջրային և ցամաքային հաղորդակցութեան շնոր-
հիւ և միկնոյն ժամանակ միջազգային տուրեառու-
թեան հեշտանալուն հետ, ֆիլօքսերան շուտով պիտի

տարածուի աշխարհիս ամեն այգեստանները, որոնք
զերծ են մնացել այդ միջատներից. ահա թէ ինչու
պէտք է շատ լուրջ վերաբերուել զրան, եթէ շենք
ուզում մի օր զրկուած տեսնել մեր երկրի այդ ար-
դիմաւէտ ճիւղից, որ զեռ մեծ ապագայ ունի իր
առաջ:

ՖԻԼՕՔՍԵՐԱՆ ԿԵՍՆՔԸ ԵՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Փիլօքսերան մեզ երևում մի քանի տեսքով, թէ
երբեւ ստորերկրայ և թէ իրքն ռացողեայ միջատներ.
զրանք են՝

1. Անթեւ (aptérs agames) բացօղեայ և ստորեր-
կրեայ ֆիլօքսերաներ.

2. Պատենատը կամ հարսնուկ (les nymphes) ո-
րոնք ստորերկրեայ են.

3. Թեսատը ֆիլօքսերաներ (ailés agames), որոնք
բացօղեայ են լինում.

4. Խառն (sexué) որոնք բացօղեայ են:

1. Անթեւ ֆիլօքսերան եր (պ. 86, 87): Անթեւ ֆի-
լօքսերանները սեռական գործարան չունին, գուրս են
գալիս խառն ֆիլօքսերանների ձուաններից և սովորա-
բար զրանք երևում են հարաւային տաք կողմերում
ապրել ամսին: Նոր գուրս եկածնները շատ հեշտու-
թեամբ են ճանաչում շափահաններից իրենց արտ-
կաշարդութեամբ, մարմնի բաց զեղին փոքր ինչ զոր-
շաւուն գունով, իրենց թաթերի և շօշափուկների եր-
կայութեամբ և թէ ալս զործարանները ծածկող կոշտ

խաւով։ Իրենց գոյութիւնը պահպանելու համար դըրանք կամ ապրում են բացօղեայ՝ շիւերի ու տերեների վերայ բշտիկներում և կամ իջնում են հողի տակ և ապրում արմատների վերայ։

ա. Բշտիկների մէջ անցնողների կեանքը։ Գիլօքսերան ամենից առաջ խայթելով վազի տերեները, թէ կանաչ ու մատաղ շիւերն ու ծիլերը, մի շարք բըշտիկներ է առաջացնում, որոնց մէջ հաստատուելով և երեք անգամ յաջորդաբար քնելուց յետոյ, նա դառնում է ձու դնող մայր, չնայելով որ նա որձից բեղմնաւորուած չէ լինում։ Նա ուռչում է, մեծանում և մեծ քանակութեամբ կեղծ (խառնի էզի ածած ձուաներից տարբերելու համար) ձուաներ դնում։ Դրանցից գուրս եկած փոքրիկ միջատները, այդ երկրորդ սերունդը ըստ իր կարգին բնակութիւն է հաստատում կամ տերեների վերայ և բշտիկներ կազմում և կամ իջնում է գետնի տակ արմատների վերայ։ Եթէ պայմանները յաջող են, բշտիկների մէջ բազմանալը շարունակում է մինչև տերեկի թափուիլը։

բ. Արմատների վերայ ապրողների կեանքը։ Գետնի տակը խրւող և արմատների վերայ ապրող միջատները կարելի է երկու տեսակի բաժանել. առաջին տեսակը բշտիկների մէջ ապրողների նման իրենցու դնող մայրեր երեք քուն ունին. երկրորդ տեսակը հինգ քնից յետոյ հարսնուկի են փոխում կամ պատենաւորում են։

Արմատների վերայ ծու դնող մայրերը շրեղման ձևուած տեսք շատ ու քիչ դրսից գէպի վեր սղմուած գլուխը ուղղակի միացած է մէջ հետոյ և ունի եր-

կու շօշափուկներ իւրաքանչիւրը երեք յօդերով (խաղերով) և երկու աչքեր՝ ամեն մին երեք կարմիր կետերով։ Մէջքը բաժանուած է երեք կէս օղակներով, որոնց փորի տակ համապատասխանում է կրծուկը երեք զոյգ ոտներով։ Փորը բաժանուում է ութ օղակների (պատ. 88, 89):

Այդ միջատները ուտելիք վերցնելու համար գործ են դնում իրենց երկար կնճիթը, որ ցցում են վազի արմատների մէջ և ծծում հիւթը։ Մարմնի վերայ ունեն կանոնաւոր շարքով դասաւորուած 70 բշտիկներ։ Արմատների վերայ անցնող ձու դնողների գոյնը քանի որ փոքր են՝ բաց գեղնաւուն են և գեղին կանաչաւուն, իսկ ձմեռուայ թմբութեան ժամանակ՝ գորշ գունով են։

Արմատների վերայ անցնողները զանազանուում են բշտիկների մէջ ձու դնողներից նրանով, որ վերջիններիս փորը շատ ուռած է, շատ ձուաներ դնելու պատճառաւ և մորթին հաստ է, այն ինչ արմատների վերայ անցնողներինը աւելի բարակ է, քան բացներին։

Արմատների վերայ ձու դնող մայրերը շրեղման ուրուած ձուաներ են դնում. զրանք իրենց կնճիթը լիրելով վազի արմատի մէջ 2—5 օրում իրենց շուրջ կը 25—30 կեղծ ձուաներ են դնում, որից յետոյ և մեռնում են։

Կեղծ ձուաները բացւում են 8—10 օրուայ մէջ և փոքրիկ ծիր միջատներ են առաջ գալիս, որոնք ընդունակ են գետնից հողի երեսը դուրս գալու և ոտով

անցնելու կամ քամուց քշուելով, ուրիշ վաղերի արմատների վերայ հաստատուելու:

Այս նոր սերունդը նախորդի պէս նոյն կեանքն է անցնում և այդ շարունակում է մինչև հոկտեմբերի վերջերը կամ նոյեմբերի սկիզբը, նայելով տեղին ու կլիմային: Չու զնող մայրերը աշնանը մեռնում են, իսկ նոր դուրս եկածները ձմեռը արմատների վերայ հաստատուելով, անցնում են կատարեալ թմրութեան մէջ, դրանք այդ միջոցին գորշ գոյն են առնում և կասես նիհարանում են ու սղմուռմ: Ապրելին ձմերային քնից զարթնելով, շարունակում են մի շարք անժեկ, առանց սեռական դործարանների սերունդ առաջացնել, ինչպէս յիշեցինք առաջ: Եւ այս կերպ բարձանալը կարող է տեսել պակասը շորս տարի:

Թէ ֆիլօքսերանները ինչ արագութեամբ են բարձանում, բաւական է ասել, որ ամեն մէկը 5—6 ամսուայ ընթացքում կարող է 25 միլիոնից աւել ֆիլօքսերա առաջացնել և մի քանի տարուայ մէջ տարածուելով, հազարաւոր դեսեատին այգիներ փշացնել:

2. ՊԱՏԵՆԵՐՈՒՆԵՐ ԿԱՄ ՀԱՐՍՆՈՒԿՆԵՐ: Այն անթե ֆիլօքսերանները, որոնք ծու զնող մայրեր չեն դառնում, ինչպէս ասացինք հինգ քնից յետոյ փոխում, դառնում են հարսնուկներ, որոնք զանազանուում են ձու զնողներից թէ իրենց ընդհանուր տեսքով, որ աւելի նազքիք ձև ունին, թէ իրենց կպած թերերի սկ պատեաններով: Այդ գործարանները, որոնք ծածկում են վորի մի մասը և երկում են կողքերից, առաջին հայ-

եացքից այնպէս են կարծել տալիս թէ միջատի մարմնի միջից սղմում են:

3. ԹԵՒՏՈՐՆԵՐ (առանց սեռական գործարանների, ailés agames) (պ. 92):

Հարսնուկները 15—20 օրից մի նոր քնափութիւնից յետոյ փոխում են թեաւոր միջատի և դուրս գալիս գետնից: Թեաւոր ֆիլօքսերան նման է մի փոքրիկ ճանձի, դեղին ու երկայն մարմնով, մէջքին սև վահանով (կարծր կաշիով) և չորս հորիզոնական մոխրագոյն թեկերով: Այս թեկերը փորից շատ երկայն են և անհաւասար. ներքեսի երկուսը կարճ են քան վերևեկնը. շօշափուկները առանձին ձև չունին, միայն երրորդ յօդը շատ երկայն է: Աչքերը բարդ են, այսինքն բազմաչեայ: Թեաւոր ֆիլօքսերան թոշում է և երբեմն քամին քշում է շատ հեռի տեղեր, ահա այդ է պատճառը, որ կարող է հեշտութեամբ հեռաւոր տեղեր փոխազրուիլ և նոր վարակումն առաջացնել: Մի որևէ տեղ կանգ առնելով, եթէ վագ է գտնում, սրա տերեսի աստառի վերայ առանց բեղմնաւորութեան 3—6 կեղծ ձուաներ է զնում, մի քանիսը փոքրը, որոնցից դուրս են գալիս խառն ֆիլօքսերանները:

4. ԽԱՌՆ ՖԻԼՕՔՍԵՐԱՆԵՐ (sexués): Թեաւորների դըրած մեծ ձուաններից դուրս են գալիս խառնի էգերը, (պ. 94) իսկ փոքր ձուաններից՝ որձերը (պ. 93):

Որձը էգից աւելի փոքր է, երկուսն էլ մարմնով փոքր են ձու զնող անթեմներից և թէ հարսնուկներից. Պրանք ոչ կնճիթ ունին և ոչ սննդեան գործարաններից կամ անթեմներից առաջանակ ունին և ոչ սննդեան գործարաններից:

ներ. դրանք ծնունդ առնելուց, իսկոյն զուգաւորում են և էզը միայն մի հատ ձու է զնում, որից յաջորդ դարնանը անթեների նոր սերունդներ են առաջանում, առանց սեռական գործարան ունենալու:


Այդ ժուն ձմեռուայ ձու է կոչւում, որովհետեւ բառեխառն կիմայի տակ ձմեռը մնում է առանց բացուելու և այն երկու տարեկան շիւերի կեղեկի տակ, բայց աւելի յաճախ կարելի է ձուն գտնել այն վագերի վերայ, որոնք մի քանի տարի շարունակ բըշտիկներ են երևցնում:

Վերոյիշեալներից ուրեմն կարելի է ֆիլօքսերայի կեանքը պատկերացնել այսպէս.

Խառնի ժուռա-	Բշտիկների մէջ ապրողներ, որոնցից առաջանում են բշտիկնեռում կամ արմատների վերայ ձու զնողները. կամ արմատների վերայ ապ- րողները, որոնք գտանում են արմատների վերայ որոնք փոխում են թեւաւորի և առաջացնում խառներ, որ զնում են հիմական ձուն:
ները տալիս են	

Գ. ՖԻԼՕՔՍԵՐԱՅԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆՍՍՆԵՐԸ

Ֆիլօքսերան մի այգում երևալու արտաքին նշանը կարելի է համարել երբ վազերը մի որոշ տեղի վերայ սկսում են աճելութեան կողմից թուլանալ և դանդաղ առաջ գնալ. այդպիսի վազերի կէտրոնում տեսնում ես մի քանիսը արդէն չորացել են և կամ սաստիկ թուլացել և ինչքան հեռանում են այդ կէտրոնից, աստիճանաբար այնքան նուազում է հիւանդութիւնը, մինչև որ հասնում է առողջների շրջանին. դրա համար էլ ֆիլօքսերայով վարակուած այզին ի-



բաւամբ նմանեցնում են իւղի բծին, որ մի տեղ կաթելուց՝ փուռում է կոլոր ձեռվ դէպի շուրջը հետզհետէ նոսրանալով։ Սաստիկ վարակուած վաղերի շիւերը չեն կարմրում, տերենները յուլիս ամսից սկսած դեղնանում են և վաղաժամ թափուում։ Պտղաբերութիւնը, որ սկզբում առատ էր լինում, գնալով նուազում է, պտուղը լաւ չէ հասունանում, մնում է կարմիր, փոխանակ սեանալու և շատ անգամ հատիկները մանր ու մեծ իրար խառնուած են մի ճթի վերայ։

Բայց այս բոլոր արտաքին նշանները միայն չը պէտք է վերագրել ֆիլօքսերային, նոյն նշանները երկում են և այն ամեն հիւանդութեանց ժամանակ, որոնք պատահում են արմատներին (օրինակ փտութիւնից, սուտմեռուկից ևայն) ուստի անհրաժեշտ է վաղի արմատների քննութիւնը։

Երբ քննութեան են ենթարկում ֆիլօքսերայով դեռ նոր վարակուած վաղի արմատները, նկատում են, որ մատաղ արմատների մազմզուկներից շտերը ուռել վրել են ու ծովմռուել, իսկ աւելի հաստ արմատների վերայ կան կոծիծների (գորտնուկներ) նըման դուրս պըծած փոքրիկ աւելցուկներ, որոնք խոշոր են նոր արմատների վերայ և մանր՝ հին ու փայտացած մասերում։

Այդ պէսպէս ուռոյցները մի քանի ժամանակից փշանում են և քայքայում արմատները, որից սևանում են, ծակծկում և փշտում. այնուհետև ֆիլօքսերան իրեն դոյութիւնը պահպանելու հարկաւոր պայմանները շգտնելով՝ անցնում է մի ուրիշ տեղ, իսկ

վազը զբկուելով իր գլխաւոր գործարաններից՝ արմատներից, չորանում է:

Դ. Ե՞րբ եի ԻՆՉՊԻՍ ՊԵՏՔ է ՈՐՈՆԵԼ ՖԻԼՕԲՍԵՐԱՆ

Թէ ձմեռը և թէ շատ անդամ ամառը դժուար է ֆիլօքսերան գտնել. յաջող ժամանակը սաստիկ շողերին է՝ յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, որովհետև այդ միջոցում միջատները աւելի են մօտենում գետնի երեսին, աւելի խոշոր են լինում, փայրուն և արագաշարժ և հենց այդ ժամանակն է, որ վազի արմատների վերայ աւելի որոշ են նկատում նրանց թողած հետքերը, մանաւանդ կոծիծները (թըշտիկները), որը յաճախ ֆիլօքսերաներ են լինում (պ. 95):

Ֆիլօքսերան գտնելու համար ոչ թէ պէտք է մեռած չոր վազերը քննութեան ենթարկել, ընդհակառակն այն զուարթ վազերը, որոնք գտնում են թծի շուրջը, այն է աւելի պակաս հիւանդութեան նշանցոյց տուող վազերի մօտը և ոչ կետրոնում։ Այդպիսի վազերը արմատով զգուշութեամբ հանելով, մի թեթև թափահարում են, որ հողը թափուի, մի քանի ըոպէ զնում են արևի դիմացը, որ թմբած ֆիլօքսերաները տաքից արթնանալով շարժուին, ապա արևի տակ լաւ խոշորացոյցով մի առ մի նայում են վազի բարակ արմատները, ամեն կողմ հանդարտ շուռ ու մուռ տալով։

Աւելի ուշադրութիւն պիտի դարձնել փշացած մասերին, այն է կոծիծներին, ուռոյցքներին ու ծըռ-

մոռւած տեղերին ու կաշու ճեղքերի տակ, ուր ապաստանարան է գտնում ֆիլօքսերան. երբեմն առանց խոշորացոյցի ևս զեղնականաչ բորբոսի ձեռվ կարելի է տեսնել ֆիլօքսերաների մի ամբողջ խումբ տասնից աւելին միասին։ Ջատ անգամ մանրակրկիտ քըննութիւնը ևս ոչ մի հետևանք չէ ունենում, ֆիլօքսերայ չէ երեսում. բայց արտաքին նշաններից կարելի է համոզուել, որ թշնամին թագնուած է և այդ նշանները ինչպէս ասացինք իրեն վազի արմատների վերայ թողած նշաններն են, որոնց չպիտի անուշաղիր լինել:

պուած են դրա գործադրութեան ժամանակ, նրա թունաւոր ու քայլայող գորութիւնը, հողի ու կլի-
մայական պայմանները, որ անյաջող դիպուածում
փշացնում է և վազերին, հետզհետէ այդ միջոցը տե-
ղի է տալիս ֆիլօքսերայի դիմադրող ամերիկական
վազերին, ուստի և ծծմբա-ածխաթթուի գործադրու-
թեան եղանակի մասին մենք չենք խօսիլ, ինչպէս և
վազերին այլ ճարեր սրսկելու մասին:

2. Ինչ վերաբերում է վազերը ջրաթաղ անե-
լուն, այդ գործողութիւնը կատարելու համար հե-
տևեալ պայմանները պէտք են.

ա. Պէտք է այգին ջրի կողմից պակասութիւն
չունենայ:

բ. Հողը պէտք է փլսրուն ու խճոտ չլինի, որ
թէ շատ ջուր չծծէ և ոչ էլ այդ ջրի հետ օդ մտցնէ
գետնի տակ, որով ֆիլօքսերաների կեանքը կարող է
երկարել:

գ. Հողի մակերեսոյթը ուղիղ պիտի լինի և ոչ թէ
թէք, որ ջուրը հաւասարապէս ամեն տեղ կանգնած
մնայ:

Զրաթաղ անելու լաւ ժամանակը, թէն ապրելից
մինչև հոկտեմբեր ամիսն է, այն ժամանակամիջոցը,
երբ ֆիլօքսերաները աճում են և շարժման մէջ են,
բայց որովհետև ջրաթաթաղ անելը կանգնեցնում է
այգու աշխատութիւնները, ուստի պիտի ձգել աշնա-
նը, երբ տերենները թափուել են և վազը կարմրել:
Զրաթաղի համար այգին եթէ շատ մեծ է, պէտք
է բաժանել մի քանի լաքերի (թափտերի) ամեն մի
լաքի շուրջը հողով բարձրացնել և առուները այնպէս

Գլ. Զ.

ՓԻԼՕՔՍԵՐԱՆ ՓԶԸՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Վազերը ջրաթաղ անելը (submersion): Ֆի-
լօքսերայի առաջն առնելու առաջարկուած միջոցնե-
րը կարելի է բաժանել երկուսի. ա, միջոցներ, որոնք
ծառայում են ուղղակի միջատներին փշացնելու, ինչ-
պիսիք են ճարեր խփելը, վազերին դեղ քսելը և ջր-
ըաթաղ անելը. 2, միջոցներ՝ որոնք ծառայում են
վազը այնպիսի պայմանների մէջ դնել, որ կարողա-
նան դիմադրել ֆիլօքսերային. այդպիսի միջոցներ
համարում են—ասազի մէջ վազեր ցանելը եւ ամե-
րիկան ովմացական վազերի վերայ տեղականը պա-
տռաստելը:

Փիլօքսերան փշացնելու առաջարկուած բազմա-
թիւ հեղուկ ճարերի մէջ ամենից գործածականը հա-
մարում է ծծմբա-ածխաթթուն (sulfure de carbone,
сърнистый углеродъ), որը 1873 թուականից ֆրան-
սայում գործ է դնում ֆիլօքսերայի պէմ: Այդ հեղու-
կը իր աժանութեամբ և թէ հողի մէջ սրսկելուց, գո-
լորշու պէս փռուել տարածուելու յատկութեամբ ամե-
առաջ ունենալով այն դժուարութիւնները, որ կա-

շինել, որ լաքերից բարձր լինին։ Ամեն մի լաքը պիտի ունենայ և ջուրը բաց թողնելու ծակեր, որ հարկաւոր միջոցին լաքը դատարկուի։

Թէ քանի օր պիտի վազերը ջրաթաղ մնան, այդ կախուած է կլիմայից, հողի յատկութիւնից և եղանակից։ Փորձը ցոյց է տուել, որ ֆիլօքսերան ցուլտ կլիմայի տակ աւելի քիչ է բազմանում քան տաք, սոյնպէս պինդ հողի մէջ աւելի քիչ է օդը դուրս գալիս և կոտորւում քան խիճոտ ու քարքարոտ տեղերում։ Գալով եղանակին՝ փորձուած է որ աշնանը ավ շուտով է ներգործում ջուրը քան ձմեռը, երբ թըմբած են լինում ֆիլօքսերաները։ ահա այդ հանգամանքները ինկատի ունենալով՝ ջրաթաղի ժամանակը կարելի է երկարել 30—50 կամ մինչև 60 օր։

Զուրը պէտք է գետնի երեսից 4—5 վերշոկ բարձր ծածկած լինի և այդ բոլոր ժամանակը։

Այս այգիները, որոնք գտնւում են ֆիլօքսերայից ազատ հողերում և ջրովի են, ջրթաղ անելը պիտի սկսել հենց որ մի փոքր նշան երեայ և ամեն տարի այդ կըկնել։

Եթէ ֆիլօքսերայով վարակուած ու փշացած այդում ուզենանք նորից վազեր տնկել, նախ հին վազերը ամբողջովին պիտի հանել, յաւ փորել տեղը և երկար ժամանակ ջրթաղ անել։ Այդպիսի այգին հենց ցանուած տարուանից պիտի սկսել ջրթաղ անելը։

Պէտք է զգուշանալ վազերը ջրթաղ անելու այն տեղերում, ուր խիստ ձմեռ է լինում և հաստ սառոյց է կապում, այդպիսի տեղերում սառուցը ինքը կարող է մեծ վնաս տալ վազերին՝ ջրի ցածրանալուց

կամ բարձրանալուց՝ վիրաւորելով ու կտրատելով վազի մատները։

Սոյնպէս ի նկատի պիտի ունենալ, որ ամեն վազ մի օրինակ չէ կարող դիմանալ ջրթաղ լինելուց, շատ տեսակների արմատները վտութեան ենթակայ, ենդառնում և կամ բուսական պարագիտներ պատահելուց՝ աւելի վնասում։

ճառաւ էլ այդպիսի տեղերում հիւանդութեան դիմաց կան վազեր պիտի ցանել:

Աւագուտներում վազեր ցանելու համար վազօրք պէտք է ծանօթանալ հողի ներքին շերտի հետ և տեսնել ինչքան խորութեան մէջ է ջուր դուրս գալիս և կամ այդ ջուրը աղի (շոր) է, թէ քաղցր. վազը յաջողութեամբ է բռնում, երբ ջուրը գտնւում է 5—6 պլշին խորութեան մէջ և քաղցր է:

Աւագուտում ցանելու համար $1\frac{1}{2}$ —2 արշին խորութեամբ և $\frac{3}{4}$ արշ. լայնութեամբ վոսեր կամ արխեր պիտի բանալ և մէջը տնկել կամ հասարակ կտրոններ և կամ արմատաւորներ և տարուայ ընթացքում այն ամեն խնամքը տանել, ինչոր կատարում է միւս հողերում ցանուածների վերայ:

Աւագուտներում ցանուած վազերի առաւելութիւնը նրա մէջն է, որ այդտեղ ժանդաններ չեն ըսնում կամ շատ աննշան են լինում, խաղողը գետի երեսին մնալուց չի փոռում ինչպէս միւս հողերում և խաղողը շուտ է հասնում:

Միայն մի անյարմարութիւն եթէ կայ այդ այն է, որ աւազը քամիներից քշուելով կարող է մի տեղ վազերի տակը բանալ, արմատները չորացնել և կամ միւս տեղը վազերը աւազով թաղել:

Այդ փտանգի առաջն առնելու համար այդէտէրը պէտք է այգու չորս կողմը մանաւանդ քամի խաղացող կողմից մի քանի շաբք խիտ տերև ունեցող ծառեր տնկէ, որ քամիներից պաշտպանում են և կամ ամեն 3—4 վազաշաբքերից շափար շինել, որ աւազի առաջը բռնէ:

ՔԼ. Է.

ՅԻՇՉԻ ՄԻԶ ՎԱԶԵՐ ՑՆԿԵԼԸ

1. Փիլօքսերայի առաջն առնելու հնարների մէջ ուշագրութեան արժանի է ծովի և թէ գետերի աւազը: Փորձը ցոյց է տուել, որ աւազի մէջ փիլօքսերան առաջ չէ գնում և վշանում է: Այդ բանը վերաբում են ոչ թէ աւազի սպանիչ գորութեանը, այլ նրա այն յատկութեան՝ որ հոսող լինելով, փուչ տեղեր չէ թողնում, այլ թափուելով՝ լցնում է որով և ազատ չէ կարողանում փիլօքսերան շարժուիլ, բացի այդ, աւազում ջուրը հեշտութեամբ է անցնում քան մի այլ հողում և լցնում դատարկ տեղերը, որից և խեղդում են թէ փիլօքսերաները և թէ նրանց ձուաները: Այսպիսով ջուրը թէկ գլխաւոր դերն է խաղում ինչպէս ջրաթաղի ժամանակ, բայց աւազն է որ հեշտացնում է այդ գործը:

Այն ամեն հողերը, որ պարունակում են իրենց մէջ ոչ պակաս քան 60% աւազ, յարմար են վազեր ցանելու և այդպիսի տեղերը միշտ ազատ են փիլօքսերից: Միայն ծովի ափերը այս անյարմարութիւնը ունին, որ տաք քամիները խանձում են տերևները և չափազանց խոնաւութիւնը նպաստում է անկային հիւանդութիւնների զարգանալուն. այդ պատ-

ցոյց է տուել, որ իբրև պատուաստակալ ամենից ընտիր ճանաշուած են հետեւեալ տեսակները.
ա. Ռիպարիա—Գլուառ դը Մոնպելիէ (Riparia Gloire de Montpellier).

բ. Ռիպարիա - գռան - գլաբր (Riparia grand glabre):

գ. Ռիպարիա-Ռուպեստրիս (Riparia Rupestris
¹⁰¹/₁₄ 3305 և 3306:

դ. Ռուպեստրիս-Մարտին (Rupestris Martin).

ե. Ռուպեստրիս-դը-Լոտ (Rupestris de Lot).

և զ. Բերլանդիերի (Berlandieri).

Ճիշտ է թէկ այսօր վաճառահանութեան մէջ կարելի է հարիւրաւոր տեսակները հաշուել, որոնք կազմում են ամերիկական-եւրոպականի խառնուրդ, սակայն դրանք չեն կարող իսկական ամերիկականի տեղանքում աւելի ուժին, այլ և ազատում են տեղական ընտիր-ընտիր տեսակները իսպառ փշանալու վտանգից:

Ամերիկական վաղերը թէ ֆրանսայում և թէ ուրիշ տեղերում այժմ շատ ընդարձակ տեղ են բրոնում և համարւում են միակ ամենայարմար և ձեռնուու միջոցը ֆիլօքսերայից ազատուելու, ինչի որ դըրանք իրենց կազմութեամբ ոչ միայն դիմացրում են ֆիլօքսերի աւելիշ ուժին, այլ և ազատում են տեղական ընտիր-ընտիր տեսակները իսպառ փշանալու վտանգից:

Ամերիկական վաղերը ինքնազլուխ աճեցնելով, տալիս են հասարակ գինիներ, բայց իբրև պատուատակալ նրանց արած ծառայութիւնը մեծ է, որովհետեւ արմատները աւելի զիմացկուն են և ֆիլօքսերան չէ կարողանում վշացնել վազը, ուստի և նրանց վերայ պատուաստած նոր մատները ազատ են մնում վտանգուելուց և պահպանում իրենց յատկութիւնը:

Սակայն բոլոր ամերիկական վաղերը չէ կարելի անխտիր իբրև պատուաստակալ ծառայեցնել: Դրանց մէջ ես կան այնպիսիներ, որոնք աւելի զիմացկուն են քան միւսները: Փորձը և ուսումնասիրութիւնը

2, Թէ ինչպիսի հողում աւելի լաւ են զարգանում ամերիկական վաղերը, փորձը արդէն ցոյց է տուել, որ ամեն մին ունի իր սիրած հողը. այսպէս՝ Ռիպարիա գլուառ դը Մոնպելիէն սիրում է թարմ, խոր ու պարաբռ հողը, որի մէջ կիրը $20-25\%$ -ից խոր ու պարաբռ հողը, որի մէջ կիրը $20-25\%$ -ից աւել չէ. Ռուպեստրիս-Մարտին սիրում է նիհար շատ ու քիչ խճոտ կաւային հողը և խոնաւ կիմայ, իսկ ու քիչ խճոտ կաւային հողը 30% : Ռուպեստրիս-Ուլողի մէջ կիրը 30% աւել քան 30% , Ռուպեստրիս-Կալոտ նիհար, խճոտ, կաւային հողը, որի մէջ կիրը կաւային հողը 40% և աւել. Ռիպարիա-Ռիպեստրիս կաւային խոնաւ մինչև 40% կիր պարունակող հողը.

Բերլանդիերին 40% -ից աւել կիր (կաւիճ կամ գիպս) խառն հողը:

Մեր Կովկասի զանազան գինեստանների համար թէ ամերիկական վագերից որոնք աւելի նպատակայարմար կիխին, այդ մասին արդէն Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նախաձեռնութեամբ Փիլօքսերայով վարակուած տեղերում տնկանոցներ են շինուած և փորձեր են լինում: Այդ փորձերը ի հարկէ վաղ թէ ուշ կապրզեն, թէ աւելի որ տեսակները և ինչպիսի հողում կարող են դիմագրել Փիլօքսերայի աւերիչ ուժին, կմնայ որ ամեն այգետէր ինքը ևս հետաքրքրուի, փորձեր անէ, որպէսզի վտանգը լայն ծաւալ ստանալուց՝ կարողանայ շուտափոյթ օգուտ քաղել եղած փորձերից:

3. Հողի յատկութեան համեմատ վազի այս կամ այն տեսակը ընտրելուց յետոյ, պէտք է տնկանոց շիկան լաւ տեսակները անզիվական պատուաստով պատուաստել, թաղել նշանակուած շարքերում, տարուակար խոտերը հեռացնել, եթէ ջրովի է ջրել, մի խօսքով այն ամեն խնամքը տանել, ինչոր պէտք է առաջին տարուայ վազերի համար և որոնց մասին արդէն խօսած ենք մանրամասն: Յաջորդ տարին տնկանոցից զգուշութեամբ հանուում են արդէն արմատ բռնած և վերան պատուաստուած մատաղ վազերը և այգում տնկոտում:

Գլ. Թ.

Փիլօքսերայի Դէմն ԵՌՆԵԼՈՒ ՀՅՄԱՐ ԵՎԸ ՕԲԽՆՔՆԵՐԸ

Փիլօքսերայի պատճառած և պատճառում վնասների առաջն առնելու, այլ և նոր այգիները վարակումից ազատ պահելու համար եւրոպական այն տէրութիւնները, ուր մշակում է վազը, իրենց մէջ կայցրած գաշնազը ութեանց հիման վերայ, զանազան օբէնքներ ունին սահմանած, որ արգելք են դնում վարակուած տեղերից վազի կտրոններ, մատներ, զանազան բոյսեր ու տունկեր, արդէն գործադրութեան մէջ եղած նեցուկներ, հող և պարաբացուցիչ նիւթեր թէ արտահանել և թէ ներմուծել: Բացի այդ, թէ արտահանել և թէ ներմուծել իրեն համար առանձին օբէնքներ ամեն տէրութիւն իրեն համար առանձին ունի և խիստ պատասխանատութեան տակ է ձգում ունի և խիստ պատասխանատութեան տակ է ձգում այն անձանց, որոնք ժամանակին շեն յայտնում իրենց պատուած Փիլօքսերայի երևալը և կամ վարակուած տեղովում Փիլօքսերայի երևալը և այլ բոյսեր փոխազրելը: Պերից մատներ, կտրոններ և այլ բոյսեր փոխազրելը:

Այգակիսի օբէնքներ սահմանած ունի և նուսաց կառավարութիւնը, որ և պարտաւորիչ է նաև Կովկասի համար. ուստի ամեն մի բարեխիղճ անձի պարկասի համար. ուստի ամեն մի բարեխիղճ անձի պարտաւորութիւնն է հետեւ ոչ միայն այդ օբէնքների ճշտիւ պահելուն, այլ և որևէ մի վտանգ պատահած

ժամանակը հրաւիրէ մասնագէտների կամ դիւզատն-
տեսական ընկերութեան ուշադրութիւնը, որ հար-
կաւոր միջոցները ձեռք առնուին: Մեր Կովկասում
ֆիլօքսերան հետազօտելու համար արդէն 1890 թուա-
կանից կազմուած է մի մասնաժողով Թիֆլիզում, որը
ամեն տարի մի քանի հոգուց բաղկացած խմբեր է
ուղարկում այս կամ այն զինեստանները հետազօտե-
լու, ժողովրդին ծանօթացնելու գոյութիւն ունեցող
հիւանդութիւնների և նրանց առաջն առնելու պայ-
մանների հետ:

Այդ քայլը արդէն համակրութեան արժանի է,
կմայ որ ժողովուրդը ինքը ևս գիտակցաբար վերա-
բերուի գործին, յայտնէ իր պարտաճանաչութիւնը,
միացեալ ուժերով գիմազրէ շարիքին և ազատէ ոչն-
շանալու վտանգից վազը՝ որ մեր Կովկասի պարծան-
քըն է և բազմաթիւ ժողովրդեան տնտեսական կեցու-
թեան զիսաւոր աղբիւներից մինը:

ՅԱՀԵԼՈՒԹ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱՂԱԳՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հ Ք	Ա Ն Պ Լ Ն	Գ Ո յ ն ը	Հատիկնե- րի ձեւ	Կաշին	Դորժա- ծութիւնը
	Երեւանի				
1	Ամրաբի	Սպիտակ	Կոլոր, միջակ	Ճատ բար.	Գինու
2	»	Կարմիր	»	»	»
3	Ամբահ	Սպիտակ	Կոլոր, փաքր	Հաստ	»
4	»	Կարմիր	»	»	»
5	Ասկեաբի	Գեղնաւուն	Չուաձեւ		
6	Գետան դմակ	Սպիտակ	Կոլոր միջակ	Բարակ	Ուտելու
7	Գեօլանստ	Սև	»	Հաստ	»
8	Եղանգարի	»	»	Բարակ	»
9	Եղնաշք		Կարմիր	Երկար	Կախան
10	Թիւքի լույլուղի	Սպիտակ	»	»	Ուտելու
11	»		Չուաձեւ	Հաստ	»
12	Իծապտուկ	Գեղնաւուն	Կոլոր, միջակ	Հաստ	Գինու
13	Խալիկի		»	Բարակ	
14	Խարջու կամ կա- խանչկէնի	Կանան- շաւուն		»	Ուտելու
15	Խունկի	Սպիտակ	Կոլոր	Հաստ	Կախան
16	Խողակաշի	Սև	»	Բարակ	»
17	»		Երկար	Հաստ	»
18	Հաշաբաշ	Սպիտակ	Կոլոր	»	»
19	Հալկորուկ	Կարմիր	Երկար	Նուրբ	»
20	Հալաջի	Սպիտակ	»	»	»
21	»		Ճատ մանր	»	»
22	Միսակի (մուսկատ)	»	»	Բարակ	»
23	»	Կապտաւ.	Մանր ձուաձեւ	»	»
24	Մոկ	Սպիտակ	Կոլոր մանր	Հաստ	Գինու
25	Մորի	»	Խոշոր, ձուաձ.	Բարակ	
26	Մսխալի				

Հ	Ա ն ս ւ ն	Գոյնը	Հատիկների ձեզ	Կաշին	Գործածութիւնը
27	Ճիրիչերի	Մկ	Մանր կոլոր	Հաստ	Ուտելու
28	Աւրդուսի	Կարմիր	Մեծ ձուաձեւ	»	Գինու
29	»	Մկ	»	Բարակ	»
30	Հուզուշաբի	Կարմիր	Երկար	Հաստ	»
31	Սահաբի	Մոխրագ.	Խոշոր ձուաձեւ	Բարակ	Ուտելու
32	»	Սպիտակ	»	Հաստ	Կախան
33	»	Մկ	»	Նուրբ	»
34	Սաւզա	Սպիտակ	Մանր երկար	Բարակ	2ամիշ
35	Մկ խաղող	Մկ	Միջակ կոլ.	Հաստ	Գինու
36	Քեարամ զանդի	Կարմրագ.	»	»	Կախան
37	Քիշմիշների	Դեղնաւ-	Մանր երկար	Բարակ	2ամիշ
38	Ճիլար	»	2ուաձեւ	Հաստ	Գինու
	Նախիջեւանի				
39	Բանդի	Սպիտակ	Մեծ կոլոր	Հաստ	Կախան
40	Գինակ	Դեղնաւ-կանաչ	»	»	»
41	Թուբքի	Կապոյտ	Երկար	Բարակ	Ուտելու
42	Ծալսաղող	Սպ. կանչ.	Մանր	Նուրբ	»
43	Կապուտէնի	Կապուտ.	Մեծ երկար	Հաստ	Գինու
44	Կատուչք	Կանանչ	Փոքր	Բարակ	»
45	Կոթոինճ	Սպիտակ	Երկար, մեծ	Հաստ	Կախան
46	Կուճընճինի	Դեղին	Մանր	Բարակ	Ուտելու
47	Հիւսէյինի	Սպիտակ	Մեծ կոլոր	Հաստ	Կախան
48	Ռշիբարա	»	Մեծ, երկայն	»	Ուտելու
49	»	Մկ			
50	Քիւրդաշ	Դեղին	»	»	
51	Օրդուրատ	Սպիտակ	Փոքր	Բարակ	Ուտելու
	Ազուլիս				
51	Դուզալի	Կապուտագ.	Միջակ կոլ.	Հաստ	Գինու
52	Թայֆի	Սպ. գեղին.	Ջատ երկայն	Բարակ	Կախան
53	Խաթուն բարմաղի	Սպիտակ	Երկ.սրածայր	Նուրբ	Ուտելու

Հ	Ա ն ս ւ ն	Գոյնը	Հատիկների ձեզ	Կաշին	Գործածութիւնը
54	Ճափէի			Կարմրագ.	Ճատ երկայն Հաստ Ուտելու
55	Ճահանգիւլի	Սպ. վարդ.		Երկար	»
56	Ճիրէի	Մկ		Փոքր կոլոր	»
57	»	Սպիտակ		»	»
58	Սկռոսկի (մուսկատ)	Մկ		Երկար	»
	Հարաբաղի				
59	Բանդղէնի			Դեղնաւուն	Փոքր երկար Հաստ Կախան
60	Գեաւագեօղ			Կարմիր	Մեծ կոլոր Բարակ Ուտելու
61	»	Սպիտակ		»	Հաստ »
62	Եահիւմի			Սրտաձեւ	Բարակ »
63	Թաւարզա			Մեծ կոլոր	Գինու
64	Թաւրիկինի	Սպ. վարդ.	Միջակ ձուա	Հաստ Ուտելու	
65	Թուփլղէնի	Թուլի	Միջակ կոլոր	»	»
66	Լըթենի	Կարմիր	Մեծ կոլոր	»	»
67	Լկնի	Սպիտակ	Կոլոր միջակ	Բարակ	»
68	»	Մկ	Միջակ կոլ.	»	»
69	Խանիւզում	Ճեր. խնկ.	Կոլոր	Հաստ Ուտելու	
70	Խնդղողնը	Սկ	Կոլոր միջակ	»	Գինու
71	»	Սպիտակ	»	»	»
72	Կարմիր խաղող	2ուաձեւ սրած.	Բարակ	»	
73	Կանանչենի	Կանանչ	Երկար	Հաստ Ուտելու	
74	Կանանչ խաղող	»	Կոլոր ճերմ.	»	Գինու
75	Կատուենի	Սոխրագ.	Փոքր, կոլոր	»	»
76	Կարմրենի	Բաց կարմ.	Խոչոր ձուաձեւ	Բարակ	Գին. ուտ.
77	»	Մուգ թխ.	Մանր սրտաձեւ	»	»
78	Հազարի	Մկ	Մանր երկար	»	»
79	»	Սպիտակ	»	»	
80	Հարաբաղի	Թուլի	Միջակ կոլոր	Միջակ	Գինու
81	Հարաշիրայ	Մկ խաղ.	Կոլոր միջակ	Հաստ	»
82	Հարաբեաւրա	Մկ	Մեծ կոլոր	»	Ուտելու
83	Գուշ իւրագի	Սպիտակ	Մանր սրտա.	Բարակ	Գինու

Ք	Ա ն ո ւ ն ը	Գոյնը	Հատիկների ձեզ	Կաշին	Գործածութիւնը
84	Դուշ իւրագի	Սկ	Մանը սրտաձեւ	Բարակ	Դինու
85	Դուշ լողիւմի	»	Մհծ, երկայն	»	»
86	Դզբ իւզում	Մուգ կար.	Կոլոր, միջակ	»	»
87	Մարանդա Վարանդայ	Վարդագ.	Մհծ կոլոր	Հաստ	Ուտելու
88	Մուաղենի	»	Բաց կար.	Կոլոր, խոշոր	Թթու դնե.
89	Դաշ մարանդա	Մուգ կար.	»	»	»
90	Նեանում իւզիւմի	Սպիտակ	Կոլոր	Բարակ	Դինու
91	2ամշենի	Սպ. դեղին	Մանը կու. սղ	»	»
92	2իրով	»	»	»	»
93	Պնդենի	Սկ	Կոլոր միջակ	Հաստ	Կախան
94	Սիպտակ խազող	Խնկագոյն	2ուաձեւ միջակ	Բարակ	Դինու
95	Սիպտըլէնի	Սպիտակ	Կոլոր միջակ	Հաստ	»
96	»	»	Մանը սրտաձեւ	Բարակ	Ուտելու
97	»	Կանաչաւ.	Խոշոր ձուաձեւ	»	»
98	»	»	Միջակ կոլոր	Հաստ	Դինու
99	»	»	Միջակ, ձուաձ.	Բարակ	»
100	Սկենի	Սկ	Կոլոր միջակ	Հաստ	Կախան
101	Վիլենի	»	»	»	»
102	Գանա դաշշաղի	Վարդագ.	2ուաձեւ, խոշոր	Բարակ	Դինում
103	Քեշամշաղի	Սկ	Խոշոր, կոլոր	Հաստ	»
104	»	Սպիտակ	Խոշոր ձուաձեւ	»	Ուտելու
	Դանձակի				Ուտ. թթ.
105	Աղա գեօրմաղ	Կարմիր	Կոլոր	Հաստ	Ուտելու
106	Բծըլէնի	Վարդագ.	2ուաձեւ	»	»
107	Թաւրիղենի	Սպիտակ	Միջակ ձուաձ.	»	Կախան
108	Կոէկ	Սկ	Կոլոր	»	Դինու
109	Կըծէնի	Սպիտակ	»	Գինուներկ	»
110	Կախէթ	Սկ	»	Պինդ	Ուտելու
111	2մշըլէնի	Գեղնաւուն	Մանը կոլոր	»	Ուտել. շամ.

Ք	Ա ն ո ւ ն	Գոյնը	Հատիկների ձեզ	Կաշին	Գործածածիւնը
	Շամախի Դարքանստ				
112	Աղագայի	Սպիտակ	Կոլոր խոշոր,	Հաստ	Ուտ. կախ.
113	Աղիւզիւմ	»	Միջակ	»	»
114	Գիմբա	Կարմիր	Կոլոր միջակ	»	Դինու
115	Գիւլաբի	Վարդագ.	»	Բարակ	»
116	Եայիւզում	Սպիտակ	Մանը սրտաձ.	»	Ուտելու
117	Իշենի		»		
118	Խաթիմի	Սպիտակ	Միջակ կոլոր	Հաստ	Գինու
119	Խալդաբի	Ճերմակ	»	»	Թթուդնել.
120	Խազիրի		»		
121	Խունկի		»		
122	Հուրուժի		»		
123	Ղայթաղի	Կարմագ.	Խոշոր	Բարակ	Հաստ. զին
124	Ղղլաղի	Կարմիր	Միջակ, կոլոր	»	Գինու
125	Մահմուղի,		»		
126	Մուսկատ		»		
127	Նարմա	Ճերմակ	Միջակ, կոլոր	Բարակ	Գինու
129	Ջիրա		»	»	»
130	Ջիրպան շահի		»		
131	Ջահիւզիւմ	Ճերմակ	Ճերմակ		Ուտելու
132	Սիսակ	Ճեր. և սպ.	Երկայն	Բարակ	Ուտելու
133	Սարը գիլլա	Ճերմակ	Միջակ երկ.	»	Գին. և ուտ.
134	Սիրփէնի	Կարմագ.			
135	Գուխչէի	Ճերմակ			

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԻՑԻ ՅԱՅՈՂՆԵՐԻ ՅԱՅԾՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԻ
(Այնքերկից քաղուած)

Հ	Ա ն ու ն	Գոյնը	Պատողը և կաշին	Դորժա- ծութիւնը	Ծանօթութիւն
1	Ալքատիկօ	Կարմիր	Քաղցր, մուսկ.	Գինու	Պատուղ հեշտ փտում է
2	Ալիկանտէ	Մուգ կար.	Քաղցր, համով գինուուել.	Մուգ գինի է տալիս	
3	Արամն	»	Մեծ, թթուաշ	»	Կոչտ գինի պաղաքեր
4	Ասպերան	Ճերմակ	անկորիզ, բար.	2ամիչ	Կորինկա է ասվում
5	Բակատող	Կարմիր	Զատ քաղցր	Գինու	2որ կիմա
6	Բալզամինա	Մուգ կար.	Բարակ	»	Վազը փշտող
7	Բէլինօ	»	Խոչոր, մսալի	Ուտելու	Դեսերտի
8	Բիա	Ճերմակ	Հաստ, մսալի	Գինու	
9	Գամէ սև	Կարմիր	Բարակ	»	2է փառմ
10	» ճերմակ	Ճերմակ	Քաղցր լպրծուն	»	Դիմացկուն
					8արմ. է շատ հողերի
11	Գրէնաչ	Կարմիր	Եաղի ժամա.	Գինու	Լիկէօրնի գինի շո-
			թափում է		րային հող
12	Գրո-գիլօմ	Մուգ կար.	Խոչոր	Ուտելու	Դեսերտին հող
13	Իզարէլլա	»	Առանձին համ ու հոտ	Ուտել. գին.	Առանձին համ ու հոտ
14	Կարենէ կամ լաֆիտ	Ճերմակ	Քաղցր, հիւթ.	Գինու	1/6 մասը խառնուրդ անելուրից գինու հետ
15	Կորինկա	Մուգ կար.	Մանը անկոր.	2ամչի	Բորդոյի լաւ գինին
16	Մալիչ	Ճերմակ	Լարծ. քաղցր	Ուտ. գինու	Թանձ. համ. խառ. համ.
17	Մալվուազի,	Կարմիր	Բարակ, քաղց.	»	Դեսերտի լուսուր
18	»	Մուգ կար.	Քաղցր	Գինու	Դեսերտի և գինու
19	Մերլօ	»	Հեշտ փտում է	Գինու	Փաշտավայրերում
20	Մուրգէդ	Մուգ կար.	Բարակ	Սիրում է խոնաւ տեղ	
21	Մուսկ. Ալքո.	Ճերմակ	Համով խոչոր	Ուտելու	Լաւ դեսերտնի

Հ	Ա ն ու ն	Գոյնը	Պատողը և կաշին	Դորժա- ծութիւնը	Ծանօթութիւն
22	Մուսկ.ճերմակ	Ճերմակ	Քաղցր	Գին.և ուտ.	Ակերպնի գինի
23	Մուսկ.Փլեօրի	»	Անուշահոտ	Ուտելու	2է սիրում խոնաւ տեղ
24	Ջասլա	»	Քաղց. թափ.	»	Սիրում է ամեն տեղ
25	Ջասլա կարմ.	Կարմիր	Քացր հիւթա.	»	Քիչ խոնաւ տեղ և խոր
26	Մուսկատնի	Ճերմակ	Անուշահոտ	Ուտ.և գին.	Դեսերտի
27	Պերսան	Կարմիր	Միջակ, երկ.	Գինու	Պաղաքեր մինչև 1600 2000 գ. գենեատենին
28	Պինօ	Ճերմակ և մալվագ-	Բարակ	Գինու	Ճամպայնի գինի
29	» Փռան	Մուգ.կար.	Բարակ, համով	Գինու	Սիր. տաք և պար. հող
30	» Փլերի	»	Հաստ	»	Կոշտ բայց լաւ գինի
31	Վերդէլօ	Ճերմակ	Կանանչաւու	»	Տոք հող, կարճ կարել
32	Վերդօ	Մուգ.կար.	Պերգ կաշի	»	Գաշտային և ցած տեղ
33	Սեմիլիոն	Ճերմակ	Անուշ համով	»	Կարմիր կաւային հող ասւում է սոտերն
34	Սովինիոն	Մուգ.կար.	Հաստ, համով	Գինու	Կաւային հող
35	Տէնտիլիրիէ	»	Հաստ թթուաշ	»	Խառնուրդի
36	Տոկայ	Ճերմակ	Բարակ, քաղցր	»	Լաւ գինի
37	Տըամինէլր	Ճերմակ	Հաս.շատ.քաղ.	»	Խառնուրդի կաւային պարարտ հող
38	»	Կարմիր	»	»	Դիմացկան
39	Բիսլինդ	Ճերմակ	Բարակ հոտով	»	Թեթև հող, ցրտի գիմացկան
40	Օլիվէտ	»	Երկայն, խոչոր	Ուտելու	Հսարակ գինի
41	Օլէան	»	Հաստ	»	Դիմացկան
42	Օպորտո	»	Նուրբ	Գինու	Պարարտ հող
43	»	Մուգ.կար.	Բարակ հիւթ.	»	Թեթև շոր հող

ՑԱՆԿ ՆԻԽՈՅՑ

三

Западная

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պատմական տեսութիւն

- | | | |
|-----------------------|---------------------------|----|
| 1. Վաղի մշակութիւնը | Հայաստանում կամ Կովկասում | 1 |
| 2. Վաղը Եւլոպայում | . | 6 |
| 3. Վաղը Ասիայում | . | 9 |
| 4. Վաղը Աֆրիկայում | . | — |
| 5. Վաղը Աւստրալիայում | . | — |
| 6. Վաղը Ամերիկայում | . | 10 |

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՇԻ

Վազի կեանըլ

91. u.

Գլ. Բ.

Տեղի ներգործութիւնը վազի եւ նրա բերքի վրայ

ա.	Հողի կազմութեան ներգործութիւնը. պարարտ ու թարմ հողը, կաւային հողը, խճային և աւազային հողերը	22
բ.	Կլիմայի ներգործութիւնը, հիւսիսային կամ ցուրտ կլի- ման, հասարակածի տակի կլիման, բարեխառն կլիման	24
գ.	Եռվի մակերեսոյթից ունեցած բարձրութիւնը	25
դ.	Գետնի զիրքի ազդեցութիւնը. թմբերի փեշերը, դառի- վայր թմբերը, դաշտավայրերը, հովիտները	25
ե.	Այգետեղի ազդեցութիւնը. հարաւ, հիւսիս արելք և ա- րևմտեան դիրքը	27

Գլ. Գ.

Նախապատրաստութիւն

ա.	Հողի պատրաստելը	28
բ.	Զափալելը, հողի պատը, քարի պատը, կենդանի չափար	29
դ.	Այգու ճանապարհներն ու ջրառուները	30

Գլ. Դ.

Վազերի բազմացնելը

ա.	Կորիզով կամ սերմով բազմացնելը	32
բ.	Կարոնով բազմացնելը. 1, կարոնացուի ընտրութիւնը, պահպանելն ու փոխադրելը: 2, Գործածական կտրոն- ների տեսակները	33
3,	Կտրոններին տալիք երկայնութիւնը	38
4,	Արմատ բռնել տալու միջոցները	38
5,	Կտրոնները տնկելու յարմար ժամանակը	—
6,	Կտրոնները արմատ բռնել տալու տեղի ընտրութիւնը	40
ա.	Այգում ուղղակի տնկելը	—
բ.	Տնկանոց շինելը	41

Գլ. Ե.

Վազերի տաշտաթաղ անելը

	43	
Ա.	Տաշտաթաղի գործածական ձևերը	44
ա.	Պարզ տաշտաթաղ	—
բ.	Ամբողջ վազով տաշտաթաղ	45
դ.	Բարդ կամ չինական տաշտաթաղ	46
դ.	Գլխիվայը տաշտաթաղ	47
բ.	Տաշտաթաղ անելու ժամանակը	—

Գլ. Զ.

Վազերի պատուաստելը

	48	
1.	Վազի տարիքը երբ կարող է պատուաստել	49
2.	Պատուաստացուի ընտրութիւնը կտրելն ու պահպանելը	50
3.	Պատուաստելու ժամանակը	51
4.	Վազի համար ընդունուած պատուաստի ձևերը—ա. հա- սարակ ճեղով պատուաստ, բ. լիանեղ պատուաստ, դ. անդղիական պատուաստ, դ. զամպենի պատուաստ, ե. հեծեալ պատուաստ, զ. կտրոն պատուաստ	52
5.	Պատուաստելու գործիքը	56
6.	Պատուաստի կապելն ու ծեփելը	57
7.	Պատուաստներին տալիք խնամքը, ա. պատուաստի հո- գելն ու պահպանելը, բ. պատուաստակալից դուրս ե- կած շիւերի և մազաթելերի վեր տալը	59
8.	Պատուաստելու գործողութեան պայմանները	60
ա.	Կտրոնի վերայ պատուաստ, բ. արմատ բռնած վազի վերայ պատուաստ: ա. Այգում պատուաստելը, բ. տըն- կանոցում պատուաստելը, զ. տանը պատուաստելը	—

ԳԼ. Է.

Այգի ծագելը

Ա. Հողի պատրաստութիւնը. ա. հողի խորութիւնը, բ. փորելու եղանակը. գ. փորելու ժամանակը	64
Բ. Հողի պարարտացնելը	66
Գ. Վազերի անկելը. 1. թէ վազերը տնկելուց ինչ ձեպիտի տալ. ա. շաքերով տնկուածը, բ. քառանկիւնի տընկուածը. գ. մի ընդ մէջ տնկուածը, 2. վազերի մէկ մէկից ունեցած հեռաւորութիւնը. 3. վազաշարքերի նշանելը. 4. վազի տեսակների համախմբելը 5. վազերի տնկելը	67
Դ. Մատաղ վազերին տալիք խնամքը	73

ԳԼ. Ը.

Վազի խնամատարութիւնը

Նախագիտելիք.	75
Ա. 2որ կամ ձմեռուայ կտրելը: 1. Պաղատու շիւեր առաջ բերելը	77
2. վազերին տալիք ձևերը. թուփակ, համադիք և հորիզոնական ձևերը	81
3. վազերին թողնելիք բարձրութիւնը	84
4. 2որ կտրելու ժամանակը	—
5. Վազը կտրելու գործիքները	85
Բ. Վազի կուացնելը	86
Գ. Վազի կանանց կտրելը: 1. զօղերի կոտրելը: 2. անպտու շիւերի յօտելը, 3. շիւերի գլուխը վեր տալը: 4. տերեի թափելը	87
Դ. Նեցուկ տալը. ա. Վազերը մէկ մէկի նեցուկ. բ. Վազերը կենդանի կամ չորացած ծառերի վրայ փոելը. գ. վազերին ձողեր նեցուկ տալը. դ. Վազերը լարի անցկացնելը և նրա ծախքերը.	89

ԳԼ. Թ.

Այգու հողի վերաբերեալ խնամքը

Ա. Զմեռնամուտին վազերը հողով ծածկելը.	98
Բ. Զմեռուայ վերջին վազերի տակը բանալը	99
Գ. Այգու պարարտացնելը. ա. կենդանական մնացորդներ, բ. Բուսական մնացորդներ. գ. չանքային պարարտացիցին նիւթեր. 1. այգին պարարտացնելու ժամանակը. 2. պարարտացուցիչ նիւթերի գործադրելու կերպը	99
Դ. Այգու փորելն ու քաղհանելը: 1. Այգին քանի անդամ պիտի փորուի: 2. հնչով պիտի լինի այգու փորելը, 3. երկրորդ և երրորդ անդամ փորելը.	105
Ե. Այգու ջրելը և ջրելու պայմանները	109

ԳԼ. Փ.

Այգեկութ

1. Այգեկութը սկսելու ժամանակը	114
2. Այգեկութի նախապարաստութիւնը.	115
3. Այգեկութի օրը	—

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՒԾՆԵՐ. ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ, ՊԵՐԵԳԻՑՆԵՐ

ԳԼ. Ա.

Բնութեան հարուածներ	117
Ա. Ցրտահարութիւն. 1. Սշնան ցրտահարութիւն	118
2. Զմեռուայ ցրտահարութիւն.	—
3. Գարնան ցրտահարութիւն: ա. Սառցային կամ սև ցրտահարութիւն. բ. Սպիտակ ցրտահարութիւն	119
Բ. Կարկուտը	121

Դ. Սաստիկ քամինելը	124
Ե. Ծաղկի խշկուիլը	—
Ե. Խաղողի անկանոն զարգանալը	125
Զ. Խաղողի խանձուիլը	126
Է. Խաղողի փտութիւնը	—

Գլ. Ք.

Հիւանդութիւններ

Ա. Թեղնացաւը	128
Բ. Վաղի կաթուածը կամ խեղդուիլը	130
Գ. Կարմըուկ	131

Գլ. Գ.

Բուսական պարագիաներ	132
Ա. Օիդիում. 1. Հիւանդութեան պատմութիւնը և վարակուած վազերի տեսքը. 2. Հիւանդութեան զարգանալու պայմանները. 3. Առաջն առնելու միջոցը և ժամանակը. 4. Ծծմբափոշու քանակութիւնը և փշելու գործիքը	—

Բ. Միլդիում. 1. Միլդիուի ուսումնասիրութիւնը. 2. Արտաքին նշանները և տուած վնասները. 3. Միլդիուի աճելու պայմանները. 4. Միլդիուի առաջն առնելու միջոցները. 5. Միլդիուի դէմ գործածական հեղուկները. ա. Բորդեզի լէլը. բ. Երկնային ջուրը. գ. Բուրգունիոյ լէլը. դ. Ժանգառը. ե. Սապնալէլը	138
Գ. Մրսկիչ գործիքներ	145

Դ. Անտրաքնող. 1. Հիւանդութեան պատմութիւնը. ա. Բծաւոր անտրաքնող, բ. Կէտաւոր անտրաքնող, գ. Այլակերպող անտրաքնող. 2. Հիւանդութեան զարգանալու պայմանները. 3. Անտրաքնողի առաջն առնելու միջոցները. 4. Ակ փտութիւնը կամ Բէկ-Ռօտ. 1. հիւանդութեան պատմութիւնը. 2. Բէկ-Ռօտի արտաքին նշանները. 3. հիւ-	147
--	-----

ւանդութեան զարգանալու պատմառը. 4. Բէկ-Ռօտի առաջն առնելու միջոցներ. 5. Բժշկելու ժամանակը.	151
6. Սպիտակ փտութիւն:	154
Ե. Արմատի փտութիւն. 1. Ինչ է փտութիւնը. 2. Փտութեան արտաքին նշանները. 3. Փտութեան զարգանալու և առաջն առնելու միջոցներ	155
Զ. Գոճամօրուսը	157

Գլ. Գ.

Կենդանական պարագիտներ

Ա. Թուլամորթներ	158
Բ. Սարդակերպեր	159
Գ. Միջամաներ. ա. Գլուխ, բ. Ալտիք, գ. Սուտմեռուկ, դ. Մաղամեան որդ. ե. Խաղողի որդը, ե. Ալիուալ, զ. Մայիսեան որդ.	160

Գլ. Ե.

Փ ի լ օ ք ս ե ր ա մ

Ա. Պատմական տեսութիւն	169
Բ. Փիլօքսերայի կեանքը և նկարագբութիւնը. 1. անթև փիլօքսերա, ա. Բշտիկների մէջ ապրողների կեանքը.	170
2. Պատենաւորներ կամ հարուստներ 3. Թիաւորներ.	176
4. Խառն Փիլօքսերաներ	178
Գ. Փիլօքսերայի պատմառած վնասները	178
Դ. Երբ և ինչպէս պէտք է որոնել Փիլօքսերան.	180

Գլ. Զ.

Փիլօքսերան փշացնելու միջոցները

1. Վազերը ջրաթաղ անելը	181
2. Ջրաթաղ անելու պայմանները և ժամանակը	181

Գլ. կ.

1. Աւաղի մէջ վաղեր տնկելը 184

Գլ. լ.

1. Ամերիկական վաղեր ցանելը 186

Գլ. թ.

1. Ֆիլօքսերայի դէմի առնելու համար եղած օրէնքները 189


Յ Ա Խ Ե Լ Ո Խ Ա Ծ

1. Կովկասեան խաղողների ցանկը 191

2. Արտասահմանեան խաղողների ցանկը 196

Վ Բ Ի Պ Ա Կ

Ելիս 18, տող 15, հողի ուղղել հողից.



20 195